

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ-2

(2008-2012թթ.)

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ 2012

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5 (23)
Գ 888

Գրիգորյան Վ.
Գ 888 Հուշամատյան-2/ Վ. Գրիգորյան.- Ստեփանակերտ:
Դիզակ պլուս, 2012.- 200 էջ:

Վերա Գրիգորյանի ներկայացրած այս գրքում ընդգրկված են 2008-2011թթ. ԼՂՀ ԱԿԱՅՄ հուշամատյանում հուշաթանգարան այցելածների գրառումները, որոնք վկայությունն են այն իրողության, որ Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հարազատների վիշտը ոչ միայն համազգային է, այլև՝ համամարդկային, որովհետեւ ինչպես հեղինակն է իր նախորդ գրքերից մեկում ասել՝ տառապանքն, իրոք, ազգություն չի ճանաչում... Գրառումներում այնքան յուրատիպ մտքեր են արտահայտվում, որ գիրքը կարելի է կարդալ մի շնչով: Հուզումնալից-ազդեցիկ են հատկապես գինվորականների կարծիքներն ու մտորումները: Գրառումներում արտացոլված է ոչ միայն տղաների կորստյան վիշտը, այլև հայ մարդու ոգու բարձրությունն ու ապագայի հանդեպ հավատը:

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5 (23)

ISBN 978-99941-2-696-5

© Վ. Գրիգորյան, 2012

Արցախի ազատության եւ անկախության համար մարտնչած տղաների հիշատակն անմար է ժողովրդի սրտում: Այդ ազատության դժվարին, բայց օրհնված ճանապարհով գնացին մեր քաջորդիները, որոնցից 239 հոգու, ավա՛ղ, ամենածանր բախտը վիճակվեց. նրանք, դժվար չէ տրամաբանելն ու պատկերացնելը, վիրավոր վիճակում հայտնվեցին հակառակորդի ճանկերում եւ քանի՛ տարի է արդեն՝ տառապում են բանտախցերում: Համենայնդեպս՝ նրանք, ովքեր դեռ կենդանի են...Իսկ այդպիսիք կան, թեպետ Ադրբեջանի իշխանությունները որքան ուզում են՝ հակառակը պնդեն:

Ռազմի թոհուբուհի մեջ կորան նրանք՝ մեր տղաները... Բայց հե՛շտ է ասել՝ կորան... Մարդն ասել չէ՛ կորչի: Թե կորչել է՝ դաժան հակառակորդի բանտում կարող են «կորչել»...

Ավա՛ղ, նրանք չտեսան մեր մեծ ու փոքր բոլոր հաղթանակները՝ մինչ վրա կհասներ բաղձալի 1994-ի մայիսի առաջին կեսը, երբ երդվյալ թշնամին ծնկի իջած՝ հրադադար կխնդրի ... Ճակատագիրն ինչե՛ր միայն դուրս չթողեց նրանց հիշողությունից: Նրանցից յուրաքանչյուրը մղեց իր հերթական մարտը՝ չինանալով, որ այն վերջինն է լինելու: Եվ որ այդ վերջինը, ամենավերջինը, ահավորս ճակատագրական է լինելու: Ահա թե ինչու, երբ խոսում ենք հայրենասիրության ու ձեռք բեր-

ված հաղթանակի մասին, իրավունք չունենք չհիշել նրանց, չհիշատակել եւ նրանց ներդրումն այդ հաղթանակում, երբ պարզեւատրում ենք բոլորին? զոհվածներին ու ողջերին՝ չմոռանանք եւ նրանց մասին

Երկու հարյուր երեսունինը զինվոր: Հայրենյաց 239 պաշտպան, որոնք, թող որ տարբեր ժամկետներով, անցան մարտական բազում փորձություններով և արժանացան ամենաձանր հարվածի՝ գերության... Մեզ համար 20 տարի առաջ վերջացավ պատերազմը, իսկ նրանց համար այն դեռ շարունակվում է... Մենք բոլորս 2012-ի Մայիսի 9-ին համայն հայ ժողովրդով տոնեցինք այն բանակի ստեղծման եվ նրա տարած առաջին հաղթանակի 20-ամյակը՝ մեր փառապանծ Եռատոնը, նրանք՝ ոչ: Նշեցինք առանց նրանց: Առանց ճաղաշարի ետեւ, իրենց մութ զնդանում դեռ կենդանի տառապողների, որոնց ոչ այնքան ֆիզիկական վերքերն են քրքրում, որքան որ հոգու վերքը՝ բարոյականը: Բայց դե ո՛վ գիտի, գուցե նրանց սրտերն էլ են զգացել, որ մենք՝ Հաղթող երկրում ապրողներս տոնական շքեղ օրը հիշել ենք իրենց...

Հենց միայն նրանով, որ կենդանի են մնացել եւ տուն վերադարձել՝ բախտն ահա այդպես ավելին բերած /որի համար փա՛ռք տանք Աստծուն/ մեր բոլոր քաջ տղաների, բոլոր արժանավորների կողքին, այո, հիշենք եւ անհայտ կորած 239-ին ու ձգ-

տենք արժանվույնը մատուցել նրանց հերոսությանն ու տառապանքին: Այդպես միայն արդար կլինի: Որպեսզի վաղվա զինվորը եւս հավատով մտնի հայրենյաց ծառայության, արհավիրքի դեպքում էլ անմնացորդ նվիրվի հայրենիքին:

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան այցելողները շարունակում են իրենց մտքերն ու ցանկությունները գրանցել Կարմիր հուշամատյանում...Սեր խորին շնորհակալությունը հայտնելով բոլորին՝ դրանք ընթերցողին ենք ներկայացնում «ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ-2» -ում:

**ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԼՂՀ ԱԿԱՅՄ նախագահ**

*Մեծն Ավ.Իսահակյանը դիպուկ է ասել.
Այն, ինչ ունայն է՝ երազ անցավոր,
Աստղ էլ որ լինես՝ կհանգչիս մի օր,
Ոչինչ է մարդը փողի փոշու մեջ,
Իր ցավը, սակայն, տիեզերքից մեծ...*

Ձեր ցավը, տղաներ, նաեւ՝ ձեր հարազատների ցավը, իրոք՝ տիեզերքից էլ մեծ է...Թող այն որպես այդպիսին՝ վերջինը լինի, չկրկնվի այլեւս ոչ միայն Արցախում, այլեւ աշխարհի ոչ մի անկյունում:

Մենք սրբատեղի պիտի դարձնենք այս հուշաթանգարանը եւ նրանց հիշեցնող ամեն մի քայլ...

Մեր նպատակն է դաստիարակել այս հերոս տղաների նման խիզախ, հայ ժողովրդին, հայրենիքին նվիրված պատանիներ ու աղջիկներ: Հիշենք ու հարգենք մեր նահատակ եւ անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը:

***Ստեփանակերտի արհեստագործական
ուսումնարանի պատմաբանասիրական
խմբակ եւ նրա ղեկավար՝
Վեներա Ջալալյան
22.01.2008թ.***

Այսօրն ինձ ու աշակերտներին համար հիշարժան օր կմնա: ԱԿԱՀՄ հուշաթանգարան կատարած այս այցով, կարծում եմ, կատարվեց եւս մի քայլ առաջ իմ զինդեկական աշխատանքում...Իմ սաները ցնցված են տեսածով, անհայտ կորած մեր

ազատամարտիկների զենքերով, փաստաթղթերով, մեդալներով. այն բոլոր մասունքներով, որ կան ցուցասեղաններին: Շնորհակալություն թանգարանն ստեղծողներին: Տղաների հիշատակն, իրոք, պահել է պետք:

***Ասկերանի շրջանի Խնապատի Արթուր
Չայրապետյանի անվան միջնակարգ
դպրոցի զինղեկ
Արման Ավանեսյան***

Արցախյան ազատամարտը հիշեցնող յուրաքանչյուր մասունք լուռ հուշարարն է այն բոլոր հերոսությունների, որ կատարել է արցախցին: Այս թանգարանից բոլորս հեռանում ենք մեր ներսում առկա հայրենասիրությանը գումարած մեծ պատասխանատվություն՝ հայրերի կիսատ թողած աշխատանքն ավարտելու հանդեպ:

Թող միշտ վառ պահվի Արցախի պատմությունը, որը կա ու կլինի մեր լեռնաշխարհի անպարտելիության վկան ու գրավականը:

***Խնապատի միջնակարգ դպրոցի
աշակերտներ
23.01.2008թ.***

Այսօր մենք տերն ենք մեր սերնդին փոխանցված ազատ ու անկախ հայրենիքի ու պետականության, բայց համարում ենք, որ լիովին չի

ավարտվել մեզ պարտադրված պատերազմը, քանզի մեր ավագ եղբայրներից 239-ը ը դեռ տուն չեն վերադարձել դաժան անհայտությունից, հակառակորդի բանտերից:

Միջազգային հանրությունը իրավականորեն դեռ չի ընդունել մեր երկրի անկախությունը, բայց արցախցին սովոր է պայքարել մինչեւ վերջ եւ արժեքները բազմապատկած փոխանցել հաջորդ սերնդին: Ըստ այդմ էլ՝ մենք մեր սուրը դեռ... չենք դրել պատյան:

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունն այսօր, բացի նրանից, որ իր շուրջն է համախմբել եւ ամեն կերպ սատարում է մեր «կորած» տղաների վերադարձին սպասող ծնողներին, քույր-եղբայրներին, կանանց ու զավակներին, նաեւ մեծ ներդրում է կատարում մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Առողջություն, համբերություն եւ աննահանջ կամք ձեզ՝ կազմակերպության նախագահին, վարչության անդամներին, բոլորին:

***ԱԱՄ «Հայրենյաց պաշտպան» ԵԿ նախագահ՝
Գեղամ Ստեփանյան
24.01.2008թ.***

Очень впечатляет то, с какой любовью и состраданием организована и проводится та

тяжелая скрупулезная работа по поиску наших как мирных жителей, так и ребят - освободителей нашей Родины - попавших в плен к врагу. Это очень нужная работа не только для тех, кто живет на освобожденной Родине, но и тех, кто еще должен стать защитником нашего Отечества.

*Аделина Осипян
Школа N3 г.Степанакерта*

Ուղղակի հուզիչ տպավորությունն թողեց մեզ վրա Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը եւ անհայտ կորած ազատամարտիկի մայր ու միաժամանակ ԱԿԱՅՄ նախագահ Վերա Գրիգորյանի պատմածը տղաների մասին:

Հուսանք, որ Արցախն այլեւս չի տեսնի պատերազմ եւ անհայտ կորածներից ով դեռ կենդանի է՝ կվերադառնա հայրենի երկիր, հարազատ օջախ...

*Ստեփանակերտի
թիվ 3 միջնակարգ դպրոցի
7-րդ ա դասարանի աշակերտներ*

Ախպերն ախպոր աղբյուրն է,
Երբ ծարավեց՝ պաղ ջուրն է,
Երբ թշնամիք վրա տան՝
Ախպոր թիկունքն ու թուրն է:
Այս խոսքերը Հովհաննես Շիրազինն են, բայց

մեզ թվում է՝ վերաբերում են առաջին հերթին մեզ՝ զինվորականներիս... Այդ տողերով առաջնորդվելով է. որ պետք է շարունակենք մեր հետագա ծառայությունը եւ ամբողջ կյանքը: Եվ այդ ժամանակ թշնամու գլխում անգամ միտս չի ծագի զենք բարձրացնել հայոց կողմի վրա:

**46492 գործառնասի Չմհզմ-ի
4-րդ վաշտ
28.01.2008թ.**

Թող մեղք չհամարվի՝ եթե մի թեւավոր արտահայտություն հիշեն. ասում են՝ ամեն ժողովուրդ ունի իր Աստվածաշունչը... Ու եթե ճիշտ է դա, ապա հայ ժողովրդի Աստվածաշունչը գրվել է մանուկների ողբով, այրվող խրճիթների հրացուլքով, հայոց հերոսների սուրբ արյունով:

Ամեն անգամ այստեղ՝ անհայտ կորած մեր ազատամարտիկների հուշաթանգարանում լինելուց ահա թե ինչպիսի թախիծով են մտորում տղաների մասին եւ ուզում գոչել. «Դուք անավարտ պատմությունն չեք, այլ՝ անավարտ ճակատամարտ...»:

**46492 գ/մ Չմհզմ ԱԴ
Անդրանիկ Պետրոսյան
28.01.2008թ.**

Ես այս տպավորությունները գրում եմ վերանորոգման վաշտի կողմից: Հայոց Բանակի օրը մեզ

բախտ վիճակվեց լինել այս թանգարանում, տեսնել տղաների նկարները, լսել նրանցից շատերի մասին Վ.Գրիգորյանի պատմածը ու խորապես, իրոք, տպավորված եմք: Իմ հորեղբայրն էլ է մասնակցել արցախյան պատերազմին ու չի վերադարձել...

Մենք եղանք այստեղ ու հեռանում եմք ավելի պատրաստակամներ հայրենիքը վտանգի դեպքում պաշտպանելու, նրա սահմանները հուսալիորեն պահպանելու...

*Սլավիկ Սաֆարյան
28.01.2008թ.*

Այս թանգարանի... անթիվ աչքերում
Թախիժ կա ու ցավ, վշտեր կան հազար,
Անհայտ ճամփեքում հանգչող մի աշխարհ:

*Ա.Ֆիրյան
28.01.2008թ.*

Շնորհակալություն Ձեզ, Վերա Գրիգորյան, այս հուշաթանգարանը ոչ միայն ստեղծելու, այլևս վառ պահելու համար...

Ամեն անգամ մտնելով այստեղ ու տեսնելով հորս նկարը , իմ մեջ ավելի է բորբոքվում կարոտի կրակը, բայց եւ՝ մի տեսակ հանգստանում սիրտս, որովհետեւ մտածում եմ, որ հայրս հայրենյաց գործի համար է տառապում անհայտության մեջ, եւ որ

Ժամանակին իր մղած մարտերի շնորհիվ է նաեւ,
որ այսօր ազատ է մեր հող-հայրենին ...

Հուսով եմ, թե մի օր, այնուամենայնիվ կտեսնեն
հորս, եւ իմ երազը չի մեռնի ինձ հետ...

Էրիկ Գալստյան
28.01.2008թ.

Музей памяти без вести пропавших- это вечная дань уважения бессмертию и жизни. Пусть Вера, Надежда и Любовь питает всех ныне живущих и грядущих поколений карабахцев - сынов несокрушимого, непокоренного армянского народа.

Григорий Афанасян
29.01.2008г.

Այստեղ այն տպավորությունն ես ունենում, թե
տղաները...խոսում են քեզ հետ: Ուզում եմ հավա-
տալ հրաշքի՝ որ երբեւիցէ տպավորությունն այդ
կդառնա իրականություն...

Ս.Գրիգորյան
30.01.2008թ.

Истинно, никто не забыт, ничто не забыто!
Вечная память героям! Посещение этого музея
- большой урок патриотического воспитания.
Большое спасибо создателям музея. Они
сделали великое дело.

*Ученики 8 а класса шк.3
г.Степанакерта
Кл. руковод. Айрапетян Анаит Э.
Уч.истории Айрапетян Гретта С.*

Մեծ տպավորություն բողեց մեզ վրա այցելու-
թյունը «Անհայտ կորած ազատամարտիկների»
թանգարան: Այս տղաներն էլ են իրենց զոհաբերել
հանուն Հայրենիքի...

*Տաթև Գասպարյան
Ստեփանակերտի թիվ 3
միջնակարգ դպրոցի
8-րդ դասարանի աշակերտուհի
01.02.2008թ.*

ԼՂՀ ԱԿԱՅՄ հուշաթանգարան ամեն մտնելուց
մտածում եմ. երանի՜ թե այս անգամ տղաներից
որեւէ մեկին տեսնեմ ոչ թե լուսանկարում, այլ՝ կեն-
դանի, վերադարձած... Տղաներին՝ խիզախ տղա-
ներին, որոնք մարտի ելան այն ծանր օրերին՝

իրենց ուսերին վերցնելով հայրենիքի ազատագրության ու պաշտպանության դժվար գործը, մոռանալով ետևում թողած ընտանիք եւ ամեն ինչ՝ ցուցաբերեցին կամք եւ տոկունություն՝ քանի դեռ ուժ ունեին ձեռքում պահելու երդվյալի զենքը... Տղաներին՝ որոնց, ավա՛ղ, վիճակվեց ամենածանրը պատերազմում՝ հակառակորդի ձեռքն ընկնելու դժբախտությունը...

Գիտենք, որ ոչ բոլորին կհաջողվի ապրել մինչ վերադարձի օր... բայց մեկ է, նրանց բոլորին կսպասե՛ն եւ սպասեն ծնողները, հարազատները, քանզի նման պարագայում մարդուն ոտքի վրա պահողը հույսի զգացումն է... Ուժեղ են, շատ ուժեղ այս տղաների մայրերը, քանզի կարողանում են դիմակայել վշտին... Ուժեղ՝ իրենց միության՝ ԼՂՀ ԱԿԱՅՄ նախագահ Վերա Գրիգորյանի՝ հոգեւոր մեծ առնականություն ունեցող կնոջ, միամորիկ տղայի մոր, 11 գրքի ու փաստավավերագրական ֆիլմերի հեղինակի նման...

***Անուշ Հարությունյան
լրագրող, բանաստեղծուհի
02.02.2008թ.***

Сегодня мы, учителя Степанакертской физико-математической школы, вместе с учениками 7-ых классов, побывали в Музее памяти без вести пропавших солдат. Очень

трогательно! Многочисленные фотографии пропавших без вести солдат очень тронул детей. Молча слушали они взволнованную речь Веры Григорян- председателя Союза родственников без вести пропавших азатамартиков НКР.

Такие посещения помогают патриотическому воспитанию подростков.

Светлана Нерсиян
05.02.2008г.

Дети-наше будущее.

Мы должны воспитывать у них чувство ответственности за Родину, за родных и близких, чувство любви и гордости за нашу культуру. В этом большое значение играют музеи.

Мы не завоеватели, но наши дети должны знать как защищать страну в случае опасности.

Большое спасибо Вере Армиевне- матери без вести пропавшего сына, которая сумела вызвать у детей чувство сострадания к матерям, потерявшим сыновей. Пусть это никогда не повторится!

Лаура Багдасарян
05.02.2008г.

Փետրվարի 5-ին անհայտ կորածների թանգարան այցելեցինք թիվ 6 միջն. դպրոցի VI, VII, VIII դասարանի աշակերտներս՝ դասղեկներ ՌԷ. Ջավադյանի, Ե.Յարությունյանի եւ Վ. Ավետիսյանի ներկայությամբ:

Այստեղ մեզ ծանոթացրին Արցախյան պատերազմում ահեղ շատ մարտերի մասնակցած եւ դրանցից մեկում գերվելու դժբախտությունն ունեցած մեր 239 հերոս տղաների լուսանկարներին ու պատմությամբ:

Խոնարհվում ենք նրանց հիշատակի առջև:

Թող ճակատագիրն ու Արդարությունը նրանց տուն վերադարձնեն:

***Ստեփանակերտի թիվ 6
միջն. դպրոցի աշակերտներ
05.02.2008թ.***

Վաղուց էինք լսել այս թանգարանի մասին, բայց չէինք այցելել: Եվ ահա, վերջապես, այստեղ ենք՝ Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում... ԱԿԱՅՍ նախագահ Վ. Գրիգորյանը մեզ պատմեց տղաների անցած ուղու մասին: Շատ հուզվեցինք, հատկապես՝ երբ իմացանք, որ այսօր նրա՝ նույնպես անհայտ կորած միակ որդու՝ Սպարտակ Գրիգորյանի...պսակադրության 15-րդ տարեդարձն է: Դե, իսկ «Արաբո» կամավորական ջոկատի մասին

պատմությունն ու տեսաժապավենային կադրերն ուղղակի ցնցեցին մեր սրտերը...

Տա Աստված՝ տղաներից յուրաքանչյուրի տեղն ու վիճակը հայտնի դառնա, եւ ովքեր դեռ կենդանի են՝ հարազատների գիրկը վերադառնան:

***Արհեստագործական ուսումնարանի
«Գործավարություն եւ օպերատորական
շահագործում» խմբի III ա կուրսի ուսանողներ
եւ դասղեկ Ջ.Արզումանյան
07.02.2008թ.***

Մենք սրտի թրթիռով եւ անհուն թախիծով ենք հիշում նրանց...Իսկ այսպիսի հանդիպումներով կարծես թե նրանց վերածնունդ ենք մեր հոգում: Նրանց ապրած յուրաքանչյուր օրը թաթախված էր հայրենիքի սիրով, եւ այժմ էլ իրենց անհայտ հեռուներում նրանց հոգում, վստահ ենք, վառ են այդ սերն ու հարազատների հանդեպ կարոտը: Մենք էլ ահա նրանց ենք կարոտում, կիսում նրանց ծնողների ցավն ու թախիծը: Բայց ամենից առաջ եւ ամենից շատը՝ հույսը նրանց, թե մի օր կգրկեն իրենց զավակներին:

Սպասում ենք ձեզ, տղաներ:

***Ալյոնա Սարգսյան
08.02.2008թ.***

Մենք՝ հայերս, հերոսական ժողովուրդ ենք: Մենք կարող ենք մեր երկիրը պաշտպանել ոստիկց, եւ դա ապացուցեցինք վերջերս էլ՝ արցախյան պատերազմում: Թող հայ ժողովուրդն այլեւս կռվելու հարկ չունենա, որպեսզի այլեւս չտառապի, որպեսզի այսպիսի ցավ չտեսնի՝ ցավերից ամենաահավորը...Անհայտ կորած մեր տղաների ցավը:

*Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի VIII ա եւ ք
դասարանների աշակերտներ
09.02.2008թ.*

Сегодня мы побывали в Музее Памяти без вести пропавших азатамартиков НКР. Учащиеся школы и мы- учителя были очень взволнованы. Давно отгремели снаряды, с неба больше не падают бомбы. На арцахской земле вот уже много лет мир и весна, и всему этому мы обязаны тем, чьи глаза смотрят на нас с этих стендов...Низкий поклон всем погибшим и без вести пропавшим! Спасибо всем тем, кто создал этот музей. Никто не забыт- ничто не забыто!

*Школа Эрудит
Учкники 2 и 4 классов
Учителя -Бадалян Н.С., Григорян С.З.
09.02.2008г.*

Մենք՝ հայերս աշխարհի այն ազգերից ենք, որոնք ազատության եւ անկախության համար վճարում են անենաթանկով՝ զավակների կյանքով... Դրա բազում վկայություններից մեկն էլ Արցախյան գոյամարտը եղավ: Հերոսամարտ, որում ոչ միայն հազարավոր քաջորդիներ մարտիրոսվեցին, այլեւ ունեցանք երկու հարյուրյակից ավել անհայտ կորածներ:

Պատերազմը շատ առումներով է ազդել մեր կյանքի վրա, բայց ժողովուրդը հույս ու հավատով է նայում վաղվա օրվան: Հավատում եւ սպասում ենք նաեւ մեր կորած տղաների դարձին... Համբերություն ենք մաղթում նրանց ծնողներին, մյուս հարազատներին: Մենք ընբռնում ենք նրանց վիճակի ծանրությունը, այդուամենայնիվ պետք չէ կորցնել հույսը, ինչպես ասում են՝ Աստված մեծ է, մեկ էլ տեսար՝ մի լույս ծագեց այնտեղից, որտեղից որ մարդ չի էլ սպասել... Ապրենք դրա հավատով:

**«Ֆոր դիրեկշն» ՍՊԸ իրավաբան,
ԱրՊՀ ուսանող
12.02.2008թ.**

Մե՛ծ տպավորություն ստացա Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան այցելելուց: ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը մեզ ներկայացրեց տղաների պատմությունը, թանգարանի ստեղծման նպատակն ու որոշ հանգամանք-

ներ, ու մենք շատ հուզվեցինք:

Լուսանկարներից մեզ նայող այս տղաները մարտեր են մղել հայրենիքի համար ու դրանցից մեկում վիրավոր՝ ընկել թշնամու ճանկը... Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի կտտանքներ են տարել ու տանում անգութ ձեռքերում:

Թող փոխվի նրանց ճակատագրի ընթացքը՝ ու մի օր արժանանան հայրական տանը վերադարձի բաժակ խփելուն...

***Ալեքսանդր Խաչատրյան
12.02.2008թ.***

Ի՞նչ կորուստների, զոհողությունների գնով վաստակեցինք մեր ազատությունը... Պատրաստ ենք լինելու մեր ավագ եղբայրների, որոնցից 239-ը մեզ նայում են ահա այս թանգարանի պատերից... նվիրական երազանքներն իրականացնողը, նպաստողը պետության կայացմանը, բանակաշինության գործընթացին:

***Ավագ լեյտենանտ Յ.Բաղդասարյան
Ք.Իվանյանի անվան ռազմամարզական
վարժարանի I վաշտի II դասակ
12.02.2008թ.***

Մտնելով ԼՂՀ ԱԿԱՅՄ հուշաթանգարան՝ սրտի կսկիծով ծանոթացանք մեր քաջազուն տղաներին բաժին ընկած ծանր ճակատագրին, բայց եւ հպարտ ենք նրանց կատարած մարտական սխ-

րանքներով: Չնարավոր չէ, այո, չհպարտանալ Նապոլեոն Չայրյանի հերոսությամբ ու տոկունությամբ, այդպես էլ՝ մյուս տղաների: Այստեղ մենք, կարելի է ասել, գաղափար կազմեցինք Արցախյան գոյամարտի ահավոր թոհ ու բոհի մասին...

Մտովի խոնարհվում ենք եւ գոհվածների, եւ փորձության «անվերջանալի» շրջանում գտնվող տղաների առջեւ:

***XI ք դասարանի աշակերտներ
Մասիս Սաղաթեյան
Սեւակ Վանյան
13.02.2008թ.***

Տպավորված ենք խորապես: Շորհակալություն տիկին Վերա Գրիգորյանին՝ հուշաթանգարանի նմուշներին մեզ հանգամանորեն ծանոթացնելու եւ ընդհանրապես իր արած-թողածի համար: Այս այցելությունը, առանց չափազանցման, մեզ հայրենիքի նկատմամբ լրացուցիչ սեր տվեց... Պատկերացնում ենք, թե ինչպիսի դժվարություններով է գլուխ եկել այս թանգարանը: Մենք չպետք է մոռանանք թշնամու ճանկերում գտնվող մեր ավագ եղբայրներին...

***Ստեփանակերտի թիվ 6 միջնակարգ
դպրոցի XI եւ XII դասարանների
աշակերտներ
14.02.2008թ.***

Նրանք թողեցին իրենց ընտանիքը եւ գնացին պաշտպանելու Չայրենին: Մարտերում բարձր էին պահում հայոց բանակի զինվոր լինելու պատիվը: Ավա՛, չարաղետ մի օր էլ շա՛տ ծանր բախտ վիճակվեց նրանց...Մենք սրտանց ցանկանում ենք, որ Տեր Աստվածը օգնի՝ եւ նրանք ի վերջո վերադառնան ընտանյաց գիրկ, երջանկացնեն իրենց սպասողներին...

*Արհեստագործական ուսումնարանի
խոհարարա-հրուշակագործական
II կուրսի սաներ
14.02.2008թ.*

Չաճելի է գիտակցել, որ հայրենիքը չի մոռանում պատերազմի կրակներում ծանր բախտի արժանացած իր որդիներին, ախր պատմությանը հայտնի չէ պատերազմ՝ առանց ռազմագերիների... Ո՛վ գիտի, թե մեր ազգի համար ինչ է պատրաստում վաղվա օրը:

Մեր այս փխրուն խաղաղությունը մենք պաշտպանում ենք ու կպաշտպանենք ամեն գնով, եթե հարկ լինի նորից պատերազմել ագրեսորի դեմ՝ կպատերազմենք: Կանենք դա՝ իմանալով, որ ցանկացած պարագայում մեզնից ոչ-ոքի մասին չեն մոռանա ոչ միայն հարազատները, այլեւ՝ ժողո-

վորդը, ինչպես որ չեն մոռանում ահա այս տղաներին:

Մենք կհսում ենք նրանց հարազատների սրտի ցավը, գիտենք, որ մեր հակառակորդը դաժան խառնվածք ունի, եւ մեր ռազմագերի տղաներն այնտեղ տառապանքի մեջ են...Արդար չի լինի, չէ, եթե ապրողներս մոռանանք նրանց մասին:

Հենց դրա համար էլ գոյություն ունի այս թանգարանը... Շնորհակալություն այն ստեղծողներին:

***Թիվ 39654 զորամասի զինծառայողներ
15.02.2008թ.***

Մենք՝ «Ձեփյուռ» հասարակական կազմակերպության անդամներս, ԼՂՀ ԱԿԱՀՄ հուշաթանգարան այցելեցինք Արցախի եւ Հայաստանի Անկախության 20-ամյա հոբելյանական տարում...Տպավորությունները շատ խորն են եւ հուզիչ: Մենք այստեղ կարծես մեր հոգու վրա առանք դաժան մարտերի արդյունքում ռազմագերու վերածված մեր հայ տղաների ու նրանց հարազատների ցավն անանց...

Գլուխ ենք խոնարհում տիկին Վերայի եւ մյուս մայրերի առջեւ՝ նրանց տոկունության ու համբերության համար, այսպիսի թանգարան ստեղծելու համար: Թող տա Աստված՝ այս լուսանկարները փոխվեն ուրիշ՝ արդեն...տուն վերադարձածի հայացք պարունակողներով

Աստված օրհնի ձեր կատարած գործը, պատե-
րազմի մայրեր:

**Է.Ծատրյան Լ.Յովսեփյան «Զեփյուն» ՀԿ
16.02.2008թ.**

Շուշիի Ա.Խաչատրյանի անվան քոլեջի «Դասա-
վանդուն տարրական դասարաններուն» բաժնի I
կուրսի ուսանողներս դասդեկ Ա.Պողոսյանի հետ
միասին լինելով ԼՂՀ անհայտ կորած ազատա-
մարտիկների հուշաթանգարանում՝ շատ ազդեցիկ
պահեր ապրեցինք, զգացինք նրանց հարազատ-
ների ապրումները: Ցանկանում ենք, որ շուտով
նրանց մասին բարի լուրեր լսվեն:

16.02.2008թ.

Գտնվելով այս...այո՛ յուրովի պատմական վայ-
րում, մենք, տեսնելով անհայտ կորած ազատամար-
տիկների նկարները, լսելով նրանց մասին պատմու-
թյունները, հոգեպես զգացինք ու վերապրեցինք
նրանց մարտական վերջին օրն էլ, բանտերում անց-
նող դաժան տարիներն էլ, իսկ ամենից առաջ՝ տեւա-
կանորեն տառապողի՝ նրանց ծանր շնչառությունը...

Պահենք նրանց մասին հիշողությունը եւ մի օր
տուն դառնալու հույսն ու երազանքը:

Նրանք՝ Հաղթանակի համար ինչպես կյանքները
զոհած, այնպես էլ հանուն նույն նպատակի գերու-
թյան զնդանում հայտնված մեր ազատամարտիկ-

ները մահ չունեն եւ չեն ունենա՝ քանի դեռ կհիշենք բոլորին...

Փա՛ռք Հայոց բանակին եւ նրա հուսալի թելը հանդիսացող՝ ԼՂՀ Պաշտպանության բանակին:

**«Հայկի Սերունդ» ԵՀԿ անդամներ՝
Սուրեն Առուշանյան
Անուշ Սարտիրոսյան
Գայանե Գրիգորյան
20.02.2008թ.**

Հարգանքի, հպարտության, երկյուղածության, ցավի եւ հույսի խառն զգացմունքով ծանոթացանք թանգարանի ցուցանմուշներին: Շնորհակալութիւն թանգարանի տնօրեն տիկին Վերա Գրիգորյանին եւ իր գործակիցներին՝ մեծ ու շնորհակալ աշխատանքի համար:

Թող անհայտությունից մայրերի գիրկը դառնան բոլորը, թող դարաբաղյան հողում հավերժվի խաղաղությունը, թանգարաններում չավելանան զոհված եւ անհայտ կորած մարտիկների անուններ...

**Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի
VI բ դասարանի դասուհեկ
Ա.Վանյան
21.02.2008թ.**

Սրտի կսկիծով, փոթորկված մտքով ծանոթացանք թանգարանում ցուցադրված նկարներին,

ստենդներին ու մասուկներին...Հսկայական աշխատանք է կատարված, որի համար մեր երախտագիտությունը՝ ԱԿԱՅՄ նախագահ եւ թանգարանի տնօրեն Վերա Գրիգորյանին՝ Հիշատակի ու Սպասման այս օջախի փաստացի ստեղծողին:

Թող աշխարհի բարի կամքի տեր մարդիկ իրենց ծայնը բարձրացնեն՝ հանուն համայն աշխարհի խաղաղության, հանուն Արցախ աշխարհի բարօրության:

Թող այլեւս ոչ մի մայր որդի չկորցնի, ոչ մի երեխա անհայր չմեծանա, թող նման թանգարանների թիվը չավելանա...

*Ստեփանակերտի Ե.Չարենցի
անվան թիվ 7 միջն.դպրոցի
VII գ դասարանի դասուկ
Լ.Բաղդասարյան
23.02.2008թ.*

Мы все скорбим вместе с вами.

Я бы написал в честь их музыку, но я не композитор, я бы поставил им памятник, но я не скульптор, скажу стихами- хоть и не поэт:

Пусть будет счастье тем,
Которые в бою не пали,
Но тем, о ком затем
Сказали, что пропали...

Пусть будет слава им-
На поле боя павшим,

Что числятся теперь...

Без вести пропавшим.

*Помнящие и ценящие их дело-
Са и Арам Маилян
24.02.2008г.*

Скорбим вместе с Вами.

Очень тронуты вашей надеждой, верой в жизнь. Большое вам спасибо!

*Степанакертский центр
детско-юношеского
творчества
25.02.2008г.*

Հպարտությամբ ենք նայում այս լուսանկարներին, որովհետեւ նրանց մեծ մասը այն տղաներն են, ովքեր Շարժման որոշակի փուլում իրենց ձեռքով են գեներ պատրաստել՝ լկտի հակառակորդից մեզ պաշտպանելու համար: Այո, այո, թղթի վրա լեկալը գծել են՝ հետո երկաթից կտրել... Հետո էլ իսկական պատերազմ են մղել ռազմաճակատում:

Ափսո՛ս, որ բախտը չի ժպտացել նրանց. արժանացել են անենաժանր ճակատագրի՝ գերության: Նայում են «նրանց»՝ սիրտս ահավոր կսկծում է... Մենք շնորհակալ ենք ձեզնից, տղաներ, ձեր հասցրած արածի համար: Աստված թող ազատության ճանապարհ բացի ձեր առջեւ...

*Յանա Աղաբեկյան
25.02.2008թ.*

Հայրենապաշտպան պատերազմին մասնակցող մեր զինվորների մի մասը զոհվեց, շատերը վիրավորվեցին- հաշմվեցին, 239 հոգի էլ անհայտ կորան... Մարդը ասեղ չէ, որ կորչի, պարզ է, որ նրանցից ոմանք նույնպես մահացել են վերքերից, ոմանք էլ շարունակում են տառապել հակառակորդի բանտախցերում...

Համբերություն ձեզ, տղերք, դիմացեք... Համբերություն եւ ձեզ՝ նրանց հարազատներ: Ամեն ինչից անկախ՝ պահեցեք նրանց մի օր նորից տեսնելու հույսը:

Աննա Պետրոսյան
25.02.2008թ.

Անչափ մեծ տպավորությամբ կվերադառնամ Երեւան: Հուշաթանգարանը տակնուվրա է արել հոգիս...

Հայրենիքը չի մոռանում իր նահատակ եւ անհայտ կորած՝ զինվոր զավակներին... Այդպես էլ պետք է լինի. հաղթանակը եկել է եւ վերջիններիս արյան, հիմա էլ՝ տառապանքի գնով...

Շնորհակալություն ԼՂՀ ԱԿԱՅՍ տնօրինությանը՝ այս թանգարանն ունենալու համար:

Խ.Քոչարյան ՀՀ-ի զինվոր
26.02.2008թ.

Ես անչափ ուզում եմ, որ ամեն մի անհայտ կորածի ընտանիք նորից չզգա այն ցավը՝ որպիսին

ունեցել է...

Թող մեր տղաները վերադառնան իրենց սպասող ու կարոտով լցված օջախները, եւ ցնծան նրանց դիմավորողների սրտերը:

Յ. Հայրունյան
Ստեփանակերտի թիվ 2
միջնակարգ դպրոց
27.02.2008թ.

Մարդու տխուր հուշեր է բերում այս սրահը, բայց եւ հպարտություն: Հպարտություն՝ թանկ գնով ձեռք բերած հաղթանակի համար:

Կարծում եմ՝ անգնահատելի գործ եք կատարել, ստեղծելով այս թանգարանը: Դա տղաներին հիշելու, ինչու չէ՝ նաեւ...չհիշողներին, եթե միայն այդպիսիք կան, հիշեցնել տալու միջոց է:

Ձեր տղաները չար բախտի են արժանացել ոչ թե գլուխ պահելու կամ հարստություն դիզելու վայրում, այլ՝ հայրենյաց ազատության համար մղած ծանր մարտում...

Հույսի այն արեւը, որին հավատով սպասում եք դուք, հարազատներ՝, թող ճառագի:

Աստված օրհնի բոլորիդ:

27.02.2008թ.

С глубочайшей скорбью в сердце посетила музей без вести пропавших борцов за свободу Арцаха. Это святилище для всех поколений

Арцаха. Большое спасибо хранительнице Музея- Памяти Вере Григорян, вложившей душу и всю материнскую любовь по всем пропавшим нашим сыновьям.

Склоняю голову перед пропавшими героями за свободу Арцаха.

Мы всегда помним вас.

*Мама без вести пропавшего воина
Овнаняна Аркадия
29.02.2008г.*

Посетив музей без вести пропавших борцов за свободу Арцаха, хочу выразить свою благодарность Вере Григорян, которая вложила всю свою любовь к сыну и всем пропавшим без вести сыновьям Карабаха. Пока их помнят и ждут, есть какая-то необъяснимая сила, способная вернуть их на Родину.

Тронута и благодарна за музей и за огромный труд и старания Веры, умение жить, ждать и верить...

*Меланя Гаспарян
Врач
03.03.2008г.*

Այս թանգարանում, թերեւս, ավելի շատ հուշեր ու հիշատակի մասունքներ կգտնէք անհայտ կո-

րած զինվորի մասին, քան նրանցից ամեն մեկի հայրական տանը: Մեր բացակա ամեն մի զինվորի անհայտ ճակատագրով տառապող մայր Վերա Գրիգորյանի՝ տարիների այս արցունքախառն տքնանքը մի անզուգական թանգարանի է վերածվել, որի շեմից ներս մտնելով լուսահիշատակ խոհերի անհուն հորձանքից լեզուդ կարկանդակ է, ու բառ չես գտնում արտահայտելու թե այս նվիրական աշխատանքի ու թե նրա մեջ ամփոփված իմաստի խորությունը:

Ակամայից չես ուզում այսօր մեզանից անհայտությամբ բացակայող տղաներին «կորած» անվանել: Վերա Գրիգորյանի անմնացորդ նվիրումով ստեղծված եւ մեր տղաներին տունդարձի կանչող այս թանգարանի իմաստն էլ հենց դա է: Թող Աստված երբեք չկտրի տունդարձի հավատն այդ եւ լուսավոր մի արահետով մեկիկ-մեկիկ վերադառնան մեր հայորդիները, զան մտնեն այս թանգարանը, եւ ամեն մեկը վերցնի իրեն վերաբերող հուշագրերն ու մասունքները, և... օրեցօր դատարկվի այս թանգարանը: Թերեւս սա է Վերա Գրիգորյանի ամենամեծ երազանքը: Հրաշք լինի՝ եւ իրականություն դառն այն:

Այն, ինչ տեսնում ես այստեղ, այս պատերի ներքո, դժվար թե տեսնես մեկ այլ ուրիշ թանգարանում կամ հուշասրահում:

Իմ խորին համոզմամբ՝ տղամարդկային մաքա-

ռուճներով ու նվիրական ցանկություններով լեցուն այս կնոջ՝ Վերա Գրիգորյանի աշխատանքը արժանի է բարձր գնահատման: Այն, ինչին ականատես ենք, ստեղծվել է ոչ այնքան պետական օժանդակությամբ, որքան որ՝ Վերա Գրիգորյանի անբասիր աշխատանքով:

***Նելսոն Ավանեսյան,
լրագրող, թերթի խմբագիր
12.03.2008թ.***

Բանաստեղծ Արամայիս Սահակյանն այսպիսի տողեր ունի. «Ամեն մի մարդ իր հոր որդին է կյանքում, բայց հազար անգամ նրա՛ն երանի, ում հայրենիքը որդի կանվանի»: Արցախյան Ազատամարտի անխտիր բոլոր մասնակիցները այդ երանին կրող հայրենիքի որդիներ են...

Արցախի անկախության համար զոհված եւ անհայտ կորած ազատամարտիկների նկատմամբ ունեցած ամենավեհ զգացմունքներով է ապրում ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը: Մոտիկից ծանոթանալով նրա ապրումներին, դժվար չէ նկատել, թե ինչպես է մեկեն հուսավառվում տիկին Վերան, երբ որեւէ, թեկուզ ամենաչնչին, թեկուզ դեռ չապացուցված-չփաստարկված նորություն է լսում անհայտ կորածներից որեւէ մեկի մասին, թախանձագին դիմում պատկան տեղերին եւ ընդհանրապես խնդրում բոլորին՝ գեթ ինչ-որ բանով օգտա-

կար լինել կազմակերպության հոգս ու ցավերին:

Մեր՝ ողջերիս պարտքն է հիշել մեր այն բոլոր մարտական ընկերներին, ովքեր այսօր մեր կողքին չեն...Սատար կանգնել է պետք նրանց հիշատակը պահպանելու կոչված հասարակական կազմակերպություններին:

***Ալվարո Շեկյան Կապիտան
Արցախյան պատերազմի 2-րդ
կարգի հաշմանդամ
13.03.2008թ.***

Մտնելով այստեղ՝ ես մեծ հիացմունք ապրեցի, թեկուզ սա այն բառը չէ կամ, ավելի ճիշտ՝ այդ բառի տեղը չէ...Կեցցեն նրանք, ովքեր կարողացել են ստեղծել նման թանգարան: Ավելի շուտ՝ աննման: Հույս ունենանք, որ մի օր անհայտ կորած ազատամարտիկները տուն կվերադառնան: Հուսով եմ նաեւ, որ այլեւս պատերազմ չի լինի, եւ մեր հայ ժողովուրդն այլեւս այսպիսի անագորույն վիշտ ու ցավ չի տեսնի:

***Սանասար Ավագյան
21. 03.2008թ.***

Հուսանք, որ նրանք մի օր կվերադառնան եւ բալասան դառնան հարազատների ցաված սրտերի համար:

Բայց մինչ այդ ի՞նչը կբալասանի վերքերը

Նրանց եւ սրտերը տառապած...

Տղաներ, տղաներ, ձեզ բարի վերադարձ:

Նանար Հովսեփյան
21.03.2008թ.

Մտնելով Ղարաբաղ՝ կարելի է ասել «Ծառայում եմ այնպիսի մի հողում, որի յուրաքանչյուր պաշտպանի թափած արյանը զուգահեռ թափվել են հազարավոր արցունքներ...»: Այս թանգարանի՝ ինձ վրա թողած տպավորությունը հիշեցրեց...ինձ այստեղ գալուց առաջ մորս ինձ տված համբույրը: Հավանաբար այդպես են համբուրել վերջին անգամ այս տղաներին առաջին գիծ ուղարկած մայրերը: Պահենք պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը եւ սպասենք նրանց:

Հայկ Սահակյան
39654 զ/մ 3-ուս մարտկոցի կուրսանտ
25.03.2008թ.

Թանգարանը ցնցող է...Հուսով եմք, որ այլեւս պատերազմ չի լինի, ու մենք էլ սիրտ մաշող այսպիսի վիշտ չենք տեսնի այլեւս:

Ս. Հայրապետյան
Մարտակերտի պատմաերկրագիտական
թանգարանի տնօրեն
28.03.2008թ.

Հիշենք, որ այս գնով են նաև՝ առաջին գծում
անհայտ կորած զինվորների ու նրանց բախտը սր-
տով կիսող ծնողների տառապանքով, եկել մեր
Հայրենիքի կորած մի բեկորը՝ Արցախ աշխարհը, և
այն մեզ վերադարձրած Հաղթանակը:

Պարտական կը մնանք անհայտ կորածներու
փնտրածը շարունակելուն:

***Հայ Օգնության Միության
Ատենապետ՝ Հասմիկ Տիրտիրյան
Վարիչ-տնօրեն՝ Ժիրայր Պետրոսյան***

Անհայտ կորածներ... Ինչպե՞ս հաշտվել այդ մտ-
քի հետ:

Ամեն անգամ, երբ այցելում են Անհայտ կորած
ազատամարտիկների հուշաթանգարան, վառվում
է սիրտս, հոգուս մեջ՝ բորբոքվում կարոտի կրակ-
ներ: Դեմս «հառնում են» մեր քաջ տղաները, որոն-
ցից շատերին գիտեի անձամբ ...

Նրանք կան, մեզ հետ են այսօրվա մեր շքերթնե-
րում, ասես լսում են նրանց ծիծաղն ու թեւավորող
խոսքը. «Պինդ կացեք, տղերք»:

Այդ պատրանքի մեջ՝ ես էլ նրանց ասում եմ «Ձեր
ցավը տանեմ, տղերք, ժողովրդի նվիրյալ զավակ-
ներ, ձեր արյամբ փրկեցիք մեր երկիրը, ձեզ բաժին
ընկած ճակատագրով էլ շարունակում եք պահել
հայրենիքի պատիվը, թշնամին ուրախ կլինեի
հրապարակավ ցույց տալ ձեր թուլությունը՝ եթե
ինքներդ ցույց տված լինեիք այն...

Ձեր տառապանքին մեռնեմ, տղերք, պինդ կացեք, համբերեք, գուցե մի օր լույսի ծվեն երեւա ձեզ համար...»:

Համբերություն եւ այս թանգարանն ստեղծած Վերա Գրիգորյանին, ու հանձինս նրա՝ անհայտ կորածների բոլոր մայրերին: Հայ մայրն ուժեղ է, ուժեղ էլ կմնա:

*Վարդան Բալայան
02.04.2008թ.*

Հուշամատյանում իր հարգանքն է թողնում մի կին, որն անցել է դաժան փորձությունների միջով, կորցրել ընտանիք, երեխա, առողջություն... Ես ժամանակին հեռուստատեսկրանին տեսել եմ, թե ինչպես է Վերա Գրիգորյանն իր կանացի նուրբ ձեռքերով փորում՝ հողից հանում ազատամարտիկի դիակի մասունքները... Եվ այսօր, տեսնելով նույնպես նրա հեղինակած ու ստեղծման պահին գրեթե նմանը չեղած հուշաթանգարանը, չեմ զարմանում, պարզապես հիացմունքի ու շնորհակալության զգացումով եմ լցված...

Թանգարանն արդեն 10 տարվա պատմություն ունի, նրա ամեն մի ցուցանմուշ սուրբ մասունք է՝ տղաների սխրանքի ու դժվար ճակատագրի մասին վկայող: Շրջելով ցուցասրահում՝ մի պահ պատերազմ գնացող եղբորս հիշեցի. թե ինչպես էր նա բոլորիս խնդրում չարտասավել, այլ ժպիտով ճանապարհել իրեն, որպեսզի ժպիտով էլ դիմավորենք... Այսօր նա մեզ հետ չէ, բայց նրա տված

պատգամին հավատարիմ՝ ինձ զսպեցի՝ չարտասպեցի եւ այստեղ...

Այստեղ սեղաններից մեկի վրա տեսա մեր այսօրվա դպրոցականների՝ ռազմահայրենասիրական թեմայով գրած եւ մրցանակի արժանացած շարադրություններ, որոնք նույնպես շատ հուզեցին: Թող գերության մեջ գտնվող ամեն մի ազատամարտիկի կյանքում հրաշք կատարվի, վերադառնա հայրենի օջախ ու շենացնի այն:

***Ջոյա Աղաջանյան
ք.Ստեփանակերտ
03.04.2008թ.***

Սիրելի տղաներ՝ որը՝ 19, որն էլ 18, 17 տարեկան... Ձեր հարազատների պես իմ աչքն էլ կարոտ է ձեր վերադարձին... Հավատում եմ, որ մի օր կլինի դա, կտեսնվենք:

Սպասում ենք հույսով, հավատով, կարոտով, սիրով ու խաղաղությանը:

***Սվետլանա Թովմասյան
03.04.2008թ.***

ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվը եւ I- IV դասարանների աշակերտները մի խումբ ծնողների հետ միասին այցելեցինք անհայտ կորած ազատամարտիկների թանգարան:

Տղաներ, մենք միշտ կարոտագին սպասելու ենք ձեր տունդարձին...

**Հարավի միջնակարգ դպրոցի
պատմության ուսուցիչ
Օհանջանյան
22.04.2008թ.**

Այսօր Ստեփանակերտի թիվ 9 դպրոցի երեխաների ու բակային երեխաների ԲՇՏ-ն մանկավարժների եւ տարրական դասվարի հետ միասին ժամանեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Ցավում ենք, որ ետ չեկան այս հայրենասեր տղաները, տա Աստված՝ վերադառնան, իրենց կարոտը քաղեն հարազատներից, ի վերջո թեթեւ շունչ քաշեն նաեւ իրենց արյան գնով ազատագրված հայրենիքում...

**ԲՇՏ- մանկավարժ դաստիարակ
Մ.Աբրահամյան,
կուլտմաստեսուհի Կ.Աթայան,
թիվ 9 դպրոցի դասվար Լ.Ենգիբարյան**

Ասկերանի շրջանի Ջրաղացների հիմնական դպրոցի ուսուցչական եւ աշակերտական կոլեկտիվներով այցելեցինք Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Նրանց վիշտը բոլորինս է, հայոց ազգի վիշտը: Հույս ու հավատ ենք մաղթում՝ տղաներին

Եւ իրենց հարազատներին:

Վերա Գրիգորյանին էլ շնորհակալութիւն՝ կատարած ծանր ու անհրաժեշտ աշխատանքի համար...

***L. Գրիգորյան
դպրոցի տնօրեն
30.04.2008թ.***

Թող էլ չտառապի մեր ժողովուրդը, էլ չլինեն անհայտ կորածներ: Ես ծնվել եմ 1992 թվականին... Ուզում եմ միշտ խաղաղ լինի կյանքը:

Սիրում եմ իմ հայրենիքը և հանուն նրա պատրաստ եմ ամեն ինչի, եթե պետք լինի՝ կգնամ մարտի... Ինչպես այս տղաներն են գնացել... Ինչպես Ստալինան...

Թող մեր Եռագույնը ծածանվի խաղաղ օդում:

***Մարիաննա Ասրյան
ուսանողուհի
05.08.08թ.***

Այսօր մենք՝ «Կռունկի» մի խումբ անդամներ, եղանք այստեղ՝ Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում: Հոգեկան մեծ զսպվածություն է պետք՝ տիկին Վերայի ձեռքով հավերժացած էքսպոնատները հանգիստ դիտել կարողանալու համար... Համբուրում ենք նրա ձեռքը և հայտնու մեր երախտա-

գիտությունը:

Թող կենդանի հայտնվեն մեր տղաները, մեր եղբայրները: Փառք նրանց և բոլորին՝ ովքեր կռել են մեր Հաղթանակը:

***Ռազմիկ Պետրոսյան
Ռուդիկ Ազարյան
Համլետ Գրիգորյան
05.09.08թ.***

Անչափ տպավորված եմ ու շնորհակալ՝ այս ամենը ստեղծելու և պատահականելու համար: Թող իրականանա հույսը ձեր: Նրանց անունները չեն մարի մեր սրտերում: Աստված նրանց պահպանի... Կեցցեք դուք, տիկին Վերա, մեր անհայտ կորած ազատամարտիկների ծնողներին միաբանելու համար...

***Սիրով ու խորին հարգանքով՝
Երգիչ Անդրե
13.05.08թ.***

Այցն անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան ինձ տվեց հոգեկան աննկարագրելի հանգստություն. ես Արցախյան պատերազմից տուժածի զավակ եմ, ինչ լավ է, որ անհայտ կորած տղաների հիշատակն այսպես պահվում է....

Երազանքի իրականացում եմ մաղթում բոլոր

սպասողներին: Խոնարհվում եմ Վերա Գրիգորյանի վշտի ծանրության և հոգու արիության առջեւ: Նաեւ շնորհակալութիւն՝ նման հուշաթանգարան ստեղծելու համար:

***Լուսինե Գրիգորյան
ԱրՊՅ ուսանողուհի
15.05.08թ.***

Չուզմունքը պատել է ինձ, երկար գրել չեմ կարող... Ուղղակի ասեմ, որ խոնարհվում եմ բոլոր որդեկորույս մայրերի առջև:

***Էմմա Մանուկյան
15.05.08թ.***

Սովորաբար պատերազմ են սկսում կյանքի արժեքը չզնահատող մարդիկ: Բռնափաթաթված պատերազմի ծանրութիւնն էլ իրենց ուսերին տանում են ազգի հիմնական ներուժը ներկայացնող միավորները: Կորուստ չտեսած մարդը երբեք չի հասկանա զավակ ու ծնող կորցրածին: Ձեր արած գործը Սուրբ գործ է, կեցցեք դուք, ամեն անկյան մեջ սիրտ կա դրած: Աստծո ձեռքը Ձեզ վրա:

***Գրիգոր Ավետիսյան
կինոռեժիսոր
«Խաղում ենք պատերազմ» ֆիլմի
ստեղծագործական խումբ
15.05.08թ.***

8-11-րդ դասարանների աշակերտների հետ եղանք Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակին ստեղծված թանգարանում: Նպատակը մեկն էր՝ հայրենասիրության ներշնչում: Այստեղ տխրում ես եւ առաջին հերթին մտածում տղաների վերադարձի մասին: Թուրքը նրանց բաժին ոչ միայն երիտասարդությունն է խլել, այլեւ բաժին պատերազմն է թողել կիսատ: Չպատահեր դժբախտությունը, նրանք դեռ էլի արյուն կթափեին Յաղթանակի համար: Յիմա, երեւի, կրկնապատվել է նրանց չարչարանքը, պատերազմը նրանց համար յուրովի է շարունակվում: Աստված տա, ազատվեն, բարով ետ գան:

***Դավիթ Լալայան
Չլդրանի միջնակարգ դպրոց
20.05.08թ.***

Անգնահատելի է ձեր կատարած գործը: Գիտենք, որ հայրենիքին նվիրված տղաներ եք եղել ու մնում, պարզապես ձեզ ամենածանր բախտն է բաժին ընկել: Դիմացեք, տղերք, ովքեր դեռ կենդանի եք, Աստված մեծ է, մեկ էլ տեսար մի լույս բացվեց

***Ք.Սահակյան
8-րդ դպրոցի 5-րդ դասարանի դասուղեկ
Յամար 6 դպրոց
Յամար 12 դպրոց***

Անչափ հուզիչ է եւ ցնցող անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի թանգարանը: Երանի թե մի օր հրաշք կատարվեր, և նրանցից յուրաքանչյուրը տուն վերադառնար: Տիկին Գրիգորյանը մեծ գործ է կատարել: Գիտենք, հասկանում ենք, որ դա հոգու պարտք է եղել եւ մայրական սրտի հրաման... Ձեզ մաղթում ենք մեծ համբերություն:

Լինելով այստեղ՝ զգացինք նման մի վայրի դերն ու նշանակությունը: Հաղթանակը մեզ տրվեց տղաների արյան գնով և նրանց մայրերի արցունքներով... Թող այլևս ոչ մի մայր չկորցնի որդուն, ոչ մի երեխա՝ հորը:

***Նանար Ավետիսյան
Ստեփանակերտի համար 2 դպրոցի
նկարչության ուսուցչուհի,
Մանկապատանեկան ստեղծագործության
կենտրոնի թատերական խմբի ղեկավար
31.05.08թ***

Ես Լոս Անճելեսեն եկած եմ սա յուրահատուկ թանգարանը և ձեր ցավն զգացած եմ: Համբերություն ձեր սրտերուն, հաջողություն՝ աշխատանքներուն:

***Միրո Խանգադյան
31.05.08թ***

Ահավոր վտանգի տակ էին եղեռնագարկ մեր ժողովրդի վերջին բեկորները... Հանուն ազգի գո-

յատևման ռազմի դաշտ դուրս եկան չափահաս և անչափահաս՝ կամավորական մեր տղաները: Նրանցից ոմանք զոհվեցին, ոմանց ճակատագիրը դարձավ անհայտ: Առ այսօր...

Այս նկարների թվում ես ունեմ և համագյուղացիներ, և համադասարանցիներ, և հարևաններ... Հաղթանակած ժողովուրդը պարտավոր է պահել-պահպանել իր պատմական անգնահատելի ձեռքբերումը՝ ազատ եւ անկախ Արցախը: Հավերժ փառք՝ մեր զոհված եւ մեր անհայտ կորած ազատամարտիկներին: Այս թանգարանն ստեղծած Վերա Գրիգորյանին մաղթում եմ համբերություն ու նոր եռանդ՝ այս ամենը պահելու համար: Նա էլ հույսը չի կտրում, սպասում է որդուն՝ Սպարտակին, բոլորին:

Մեր իշխանությունների, նորընտիր նախագահ Բակո Սահակյանի հետ միասին կարողանանք էլ ավելին ստեղծել, գեղակառուցել մեր քաղաքներն ու գյուղերը: Թող հավերժ խաղաղ երկնքի տակ ծածանվի մեր պետական դրոշը՝ ի անուն հայության՝ մեկ-մեկ այսպես տխուր, եւ սակայն միշտ էլ պատվական անցյալի, ներկայի եւ ապագայի:

Մարինա Գրիգորյան

Այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան և անկեղծ ասած՝ ցնցվեցինք:

Այս սրահը մի առանձնահատուկ աշխարհ է: Ցա-

վի եւ ափսոսանքի աշխարհ: Ամեն կարգի կորուստներ ենք կրել, բայց ի վերջո հաղթել թշնամուն, ազատել մեր երկիրը: Մինչեւ հիմա էլ ...զսպելով մեր հոգիների ցավը, հաղթահարելով ինքներս մեզ: Հանուն Արցախի հավերժատեւման:

Օրհնենք նրանց ծնունդը, ովքեր կարող են իրենց արցունքը զսպելով, ատամներն ամուր սեղմելով կատարել այնպիսի ազգանվեր գործ, ինչպիսին այս խոսուն հուշաթանգարանի ստեղծումն է:

***Գառնաքարի 8- ամյա դպրոցի
ուսուցիչներ եւ աշակերտներ
15.06.2011թ.***

Սիրելիներ

Շատ հուզված, բայց հպարտ պիտի վերադառնանք տուն: Հպարտ ենք, որ այսպիսի սուրբ հոգիներ կը բնակին մեր հողերուն վրա, կը շարունակին ազատամարտիկներու գործը:

Աստված լուսավորե բոլոր նահատակուած և կործանված մարտիկներու հոգիները:

***Ռազմիկ Սարգիսյան, Ծովինար Սարգիսյան
Լուս Անջելեսի Մեսրոպյան Ազգային վարժարան,
2-րդ դասարան
15.06.2011թ.***

Մայրեր՝ տառապած, բայց համբերությամբ լի...
Վերա Գրիգորեանի պէս: Այս թանգարանը հոգու

խորքերը պտրտելու տեղ է, հոգի մաքրելու տեղ:

Թող ապրեն այս տղաների մայրերն այն այգաբացի յոյսին, որը կըվերադաձնի բոլոր անյայտ կորած հայրենասէր եւ նվիրված մարտիկներին:

Ռինա Թամասեան

Իրան

06.05.2008թ.

Նկարներից նայում եմ մեզ: Անձայն ասում եմ՝ մենք կանք, սպասեցեք... Ես հավատում եմ, որ եղբայրս կենդանի է՝ Իսրայել Թորգոմի Եղիազարյանը, մականունը՝ Մշեցի Իսո: Ծնվել է Տարոն գավառից բռնագաղթած մշեցու ընտանիքում: Օժտված է հայրենասիրության բուռն զգացումով: Չեմ հավատում, թե Իսոյի կամքի նման կամք ունեցողը կարող է խեղճանալ թուրքի առջեւ՝ եթե անգամ բանտում է:

Սիրելի արցախցի մայրեր, մեր քույրեր, պիղ կացեք, մի կորցրեք հավատը: Հավատը շատերին է փրկել, կփրկի եւ մեզ. Մերոնք տուն կգան: Երբեւէ: Հուսանք:

Գայանե Եղիազարյան

ՀՀ Շիրակի մարզ

ք.Սարալիկ

16.06.2008թ.

Մենք՝ Անդրանիկ եւ Անահիտ Մատթեւոսեաններ բախտ ունեցանք այցելել այս թանգարանը: Ազ-

դուած եւ զգացած պիտի յետ վերադառնանք Լոս Անճէլէս: Ուրախ ենք, որ այս վայրին տեղեակ եղանք:

18.06.2008

Տպավորիչ է թանգարանը: Մենք ուրախ ենք, որ հիշում են մեր հայրերին... Սպասում ենք նրանց վերադարձին:

**Հարություն
19.06.2008թ.**

Այսպես ահա՝ չմոռանալով նրանց մասին ...քայլ ենք առաջ: Եվ սպասենք նրանց, պատերազմների պատմության մեջ շատ են եղել դեպքեր, երբ անհայտ կորած անձը անսպասելի հայտնվել է...

19.08.2008թ.

Կը շնորհավորենք եւ բարձրոյն կը գնահատինք ազատամարտիկների թանգարանի աշխատակազմը եւ անոնց տարած կենսական աշխատանքը: Այս հսկայական գործը տանողներուն կը մաղթինք յաջողություն, կը խոնարհվինք մեր Արցախի բոլոր նահատակներու յիշատակին եւ կը մաղթինք շուտով տունդարձ բոլոր կորածներուն եւ քաղաքական բանտարկյալներուն:

**Փոլին, Սլատունի, Վարսենիկ
Տաթևոսեաններ
19.06.2008թ.**

Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցում միշտ էլ հայրենասիրական թեմայով միջոցառումներ՝ իրենց արժանի տեղն են գրավում, իսկ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը հենց հայրենասիրություն սփռող մի մեծ ջահ է, որում հույսն ու սպասումը, հայրենիքի նկատմամբ սերը իրար են շաղախված: Այստեղ մենք անց ենք կացրել «Արիության դասեր»: Դպրոցի տնօրինության, մանկավարժական եւ աշակերտական կոլեկտիվների անունից երախտագիտության խոսք ենք հայտնում ԼՂՀ ԱԿԱՅՄ հասարակական կազմակերպությանը, նրա նախագահ Վերա Արմոյի Գրիգորյանին՝ այսպիսի ջանադիր աշխատանքի համար: Այդ թանգարանը մեր պատմության մի մասն է եւ հայրենասիրություն դաստիարակելու ուրույն դպրոց:

***Դպրոցի փոխտնօրեն
Գրիգորյան
28.06.2008թ.***

Մտնելով թանգարանի դռներից ներս՝ համակվում ես խորն ակնածանքով: Դրսում եռացող հասարակական կյանքի ու երաշխավորված ներկայի համար մենք պարտական ենք նաեւ նրանց, ում հիշատակը հավերժացնում է հենց այս թանգարանը: Մնում է միայն երախտագիտությունս հայտնեն բոլոր նրանց, ում ջանքերի ու նվիրման արդյունքում ստեղծվել է այս թանգարանը:

Շնորհակալությունն այս շնորհակալ գործի համար, տիկին Վերա:

***Մարատ Հասրաթյան
Ստեփանակերտի քաղաքային համայնքի
ավագանու անդամ 02.07.2008թ.***

Այցելելով ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների թանգարան՝ ԱրՊՀ հունամիտար ֆակուլտետի «պատմություն» բաժնի ուսանողներս այնպիսի տպավորություններով լցվեցինք, որ սովորական բառերով բացատրել անհնար է: Տեսնելով այս բեղուն աշխատանքը, որ արված է անհայտ կորած ազատամարտիկների պատվին, սկսեցինք գիտակցել զինվորի դերը հայրենիքի համար եւ հայրենիքի դերը՝ նրա եւ ամբողջ ժողովրդի... Հատկապես՝ մեր այս փոթորկուն կյանքում:

Մնում է երախտագիտության խոսք ասել բոլոր նրանց, ում ջանքերով ստեղծվեց այսպիսի հարուստ թանգարանը, ի դեպ՝ իր հրաշալի գրադարանով հանդերձ:

***Լենա Արրահանյան
ուսանողուհի***

Ջարմանք ես ապրում անտակ տառապանքի տակ հյուսված, հոգի ցնցող այս թանգարանում: Սա էլ է արված վասն Հայրենյաց... Վասն Հայրենյաց են ռազմի դաշտերում այնքան ծանր բախտի

արժանացել այս՝ մեկը մյուսից սիրուն տղաները:
Կիսատ մնացած երազանքներով այս տղաներին
թող գոնե այժմ փոքր-ինչ ժպտա բախտը... Գուցե
դեռ ուշ չէ: Աստված տա՝ այդպես էլ լինի:

**ԱրՊՅ մի խումբ
նկարիչ ուսանողներ՝
հրենց դասախոս, նկարիչ Լ. Ղալայանի հետ
03.07.2008թ.**

Մենք՝ պատմաբաններս, մտնելով այս հուշաթան-
գարանը, խորապես տպավորվեցինք նրա ցուցան-
մուշներով եւ դասավորվածությամբ: Իրոք, ամեն ինչ
շատ է տպավորիչ: Իսկ տղաների հայացքները
նկարներից.... Ասելու բան չէ, ուղղակի հոգի է քրք-
րում կորստի զգացումը: Բայց չկորցնենք հույսներս:
Գուցե... եւ նորից՝ գուցե... Լինում է այդպես էլ : Չենք
մոռանա՝ ինչպիսի հավատով էր տիկին Վերա Գրի-
գորյանը պատմում տղաների մասին, այն մասին, թե
նրանցից ով ինչ մարտերի է մասնակցել, ով ինչով է
եղել հայտնի մինչ գերվելու պահը: Նրանցից մեկն
էլ, պարզվում է, իր միակ արու զավակն է...

Թող Աստված տուն դառնալու ուղի բացի մեր
անհայտ կորած ազատամարտիկների համար եւ
այն լուսավորի...

Ու՞ր եք տղաներ, որ ելաք մարտի,
Ինչու՞ կյանք ու սեր

Դարձան մահ ավեր՝
Ձեռքով տմարդի:

Ջինա Գասյան
Պատմության ֆակուլտետի
ուսանողուհի
07.07.2008թ.

Փորձուսուցման ժամանակ ամբողջ կուրսով այցելեցինք իր տեսակի մեջ հազվագյուտ այս թանգարանը: Նրա ստեղծող եւ տնօրեն Վերա Գրիգորյանը պատմեց տղաներից շատերի մասին: Ցուցադրված մասունքները շատ հուզեցին մեզ: Կիթառ... ինքնաշեն ատրճանակ /Գոյապայքարի սկզբնական փուլի զենքերից/... Դրանք ցնցող են: Ուրեք այս տղաների ջանքերով է, որ հիմա ապրում ենք ազատ ու երջանիկ: Խոնարհվում ենք բոլոր հերոսների հիշատակի առջեւ՝ զոհված, բանտում թե ուր:

Արեւհատ Սիրզոյան
Պատմության ֆակուլտետի ուսանողուհի
07.07.2008թ.

Տպավորությունս շատ մեծ է: Խոնարհվում եմ այս տղաների ու նրանց հարազատների առջեւ: Նրանց՝ երկուստեք հույս ու հավատ: Հպարտ եմ, որ ապրում ենք Արցախ աշխարհում: Բառեր չեն գտնում արտահայտելու զգացումներս: Շնորհակալություն, Վերա Գրիգորյան, նման թանգարան

ստեղծելու համար: Վստահ եմ, որ Եթե Ձեր որդին հիմա այստեղ լիներ, շատ կհպարտանար Ձեզնով:

**Գեղանուշ Արզումանյան
ուսանողուհի
07.07.2008թ.**

Հարազատներն անսահման կարոտով սպասում են իրենց անհայտ կորածներին:

Բարի վերադարձ տղաներին:

**Արմենուհի Սահակյան
Պատմության I կուրսի ուսանողուհի
07.07.2008թ.**

Մտնելով այստեղ՝ պատկերացնում ես նրանց հարազատների ցավի գույնն ու աստիճանը... Որպես ԼՂՀ մի շարքային քաղաքացի՝ իմ շնորհակալությունն են հայտնում բոլոր նրանց, ովքեր ստեղծել են այս յուրահատուկ թանգարանը կամ՝ աջակցել կայանալուն:

**Վլադիմիր Դուրխանյան
ուսանող
07.07.2008թ.**

Ունենմ ընկերներ, որոնց հայրերը, ցավոք, նույնպես անհայտ կորածների շարքում են: Մտնելով թանգարան, հոգուս խորքում ցավ զգացի նրանց համար... Դիտեցի մի քանի կադրեր վավերագրա-

կան ֆիլմերից, եւ սիրտս լցվեց: Համբերություն վիրավոր սրտերով մայրերին: Նրանց աչքը որդիների՝ տարիներով չկայացող վերադարձի ճանապարհին է...

**Արայիկ Ստայան
Ուսանող
07.07.2008թ.**

Այստեղ ես շոշափելիորեն զգացի՝ ինչ ասել է ցավ: Բայց թող չխեղճացնի տղաների կորստյան ցավը նրանց ծնողներին, հարազատներին: Նրանք հայրենիքի զինվոր են եղել եւ ինչով էլ որ ավարտվի ճակատագիրը նրանց, նրանք եղել են ու կմնան հայրենյաց զինվոր: Չի լինում պատերազմ՝ առանց գերյալի: Բանտում մեր զինվորները, վստահ ենք, իրենց պատվարժան են պահել: Թե չէ, թշնամին կիրապարակեր նրանց թուլությունը... Երիտասարդությունն ամեն ինչ պետք է անի՝ մեր ազատագրված հողից թիզ անգամ թշնամուն չզիջելու համար:

**Աննա Սարգսյան
Ուսանողուհի
10.07.2008թ.**

Թող մոլորակի վրա այլեւս ոչ մի մայր չկորցնի իր որդուն, խաղաղություն լինի, մայրերի աչքը՝ չոր...

Ձեր կատարած աշխատանքն անգնահատելի է եւ արժանի գովասանքի: Հույսը չպետք է լքի մեզ,

յուրաքանչյուր մայր, ով սպասում է որդու, յուրաքանչյուր կին՝ սիրելի անուսնու, վերադարձին, մի օր իրականացած կտեսնի երազանքը:

**Հովհաննես Հովհաննիսյան
Գյումրիի Վ.Աճեմյանի անվան
պետքատրոնի դերասան-ռեժիսոր,
ԵԹՀՊԻ մասնաճյուղի դասախոս
11.07.2008թ.**

Այս թանգարանը թող հայոց համար միակը մնա... Անհայտ կորածները թող բարով հայտնվեն, մայրերն այլեւս չտառապեն:

**Գյումրու Վ.Աճեմյանի անվան թատրոնի
դերասանուհի
11.07.2008թ.**

Կուզենայի՝ երբ հաջորդ անգամ լինեն Ստեփանակերտում եւ /անպայման/ մտնեն այս թանգարան, մեր անհայտ զինվորների՝ պատերին փակցված նկարները... նոսրացած լինեն: Հուսով սպասենք դրան:

**Հռիփսիմե Աբաջյան
Գյումրու Վ.Աճեմյանի
անվան թատրոնի
դերասանուհի
11.07.2008թ.**

Հիացած եմ ձեր աշխատանքով: Թող շուտ գան այն օրերը, երբ անհայտ կորածները կվերադառնան: Շնորհակալություն այս ամենի համար:

***Արաքսի Խաչատրյան
Գյուլնրու Վ.Աճեմյանի անվան
թատրոնի հնչյունային ռեժիսոր
11.07.2008թ.***

Խոնարհվում եմք ձեր անձնվեր գործի առջև: Ձեր ջանքերի շնորհիվ մարդիկ հիշում են մեր հողի համար արյուն թափած մարտիկներին: Թող Աստված տա՝ մոտ լինի այն օրը, երբ կգրկեք ձեր տղաներին:

***Ռոբերտ Խաչատրյան
Գյուլնրու Վ.Աճեմյանի անվան
դրամթատրոնի դերասան
11.07.2008թ.***

Թանգարանային այս սրահում կարոտը խեղդում է քեզ, թեև անձամբ չես ճանաչում այս տղաներին....Հպարտանում ես, որ իրենց արյան ու տանջանքների գնով նպաստել են հաղթանակի ձեռքբերմանը: Կյանքի գնով պահպանել են մեր Արցախ աշխարհը: Երանի թե մի օր բախտ վիճակ-

վի կենդանի տեսնել նրանց, ում նկարներին, թողած մասունքներին ծանոթացա այստեղ:

Անահիտ Մուքաֆյան
Գյումրու Վ.Աճեմյանի անվան
դրամթատրոնի դերասանուհի
11.07.2008թ.

Ցնցված եմ, բառեր չեմ գտնում` արտահայտելու ներսումս տեղի ունեցողը...Մանավանդ որ առաջին այցելությունս է ԼՂՀ: Անիծվի թուրքը: Թող տղաներին խղճա Աստված` վերադարձի ելք տա:

Սուրեն Մկրտչյան
«ՀԱՅԱՍՏԱ» երիտասարդական հասարակական
կազմակերպության նախագահ
16.07.2008թ.

Առաջին անգամ եմ ժամանել Ղարաբաղ եւ թանգարան այցելելուց շատ հուզվեցի: Եթե մոտս աղջիկ չլիներ` կլացեի... Երանի թե այս թանգարանի կարիքը եղած չլիներ: Թող լինի` տղերքը վերադառնան:

Ամեն, տեր Աստված:

Ահարոն Բադալյան
«ՀԱՅԱՍՏԱ» երիտասարդական հասարակական
կազմակերպության վերահսկողության պետ
16.07.2008թ.

Պատմության դաժան քառուղիներով քայլող հայ ժողովուրդը հազար ու մի փորձությամբ է անցել եւ դիմացել, իսկ Արցախյան պատերազմում հաղթեց... նաեւ շնորհիվ այս տղաների ջանք ու արյան: Հայոց ամեն մի թիզ հողն, այո, շաղախված է հայի արյամբ, եւ դա պարտավորեցնում է ներկա ու գալիք սերունդներին՝ պահպանել Արցախի սուրբ հողակտորը եւ մշտապես հիշել բոլոր նրանց, ում ջանքերով հնարավոր է դարձել հաղթանակը: Շատերը նահատակվեցին, 239 հայ զինվոր էլ անհայտ կորան՝ գերի վերցվեցին հակառակորդի կողմից: Նրանց մայրերն սպասում են՝ հերոսական ջանքով ստեղծելով որդիների հիշատակը բարձր պահող այս թանգարանը:

Վերջինիս տնօրեն Վերա Գրիգորյանին եւ նրա բախտակիցներին ցանկանք համբերություն, հույս եւ հավատ: Մի քիչ էլ՝ հոգու հանգստություն այն բանի համար, որ Արցախի հողը ազատ է հիմա, եւ անամպ է երկինքը նրա գլխավերելում:

Ձեր նվիրվածությունը ոչ ոք չի սպառնա, պատերազմի մայրեր:

Ի. Գաբրիելյան
Ստեփանակերտի համար 2
միջնակարգ դպրոցի ուսուցչուհի
21.07.2008թ.

Անյայտ կորածներուն

Դուք որ ֆիզիկապէս հեռացաք ձեր հարազատներից, իմացեք, որ յուշերով առհավետ պիտի մնաք նրանց ու մեզ հետ, եւ այնքան ատեն, որ ձեր յուշերը վառ կը մնան, դուք պիտի ապրիք:

Նրանց ծնողներուն

Դուք, որ աշխարհի բերիք այդ հերոսներուն, վարձքերնիդ ի կատար, Աստուած ուժ եւ համբերություն տայ ձեզի, մինչեւ ձեր միացունը ձեր հարազատներուն:

**Յարգանքով՝
Յ.Սանակիրճեան
22.07.2008թ.**

Низкий поклон матерям, создавшим такой музей. Их сыновья, мужья, братья обязательно вернутся.

Мы преклоняемся перед Вами.

Бог Вам в помощь!

***Анастасия и Надежда Воронцовы
23.07.2008г.***

Համբերություն ձեզ, մայրեր...

Մի շաբաթ է, ինչ Ղարաբաղում եմ, եւ դժվար է բառերով արտահայտել այն, ինչ զգում եմ... Հիմա ինձ մոտ ամեն ինչ խառնված է, կա եւ կարոտ, եւ

թախիծ, եւ համակրանք, եւ ցավ, բայց հպարտութիւնը գերակշռում է: Ես հպարտ եմ, որ հայ եմ, որ ունեցել եմք եւ ունենք հայրենի հողին անմնացորդ նվիրված զինվորներ:

Մահն ամենքին է տրված, հպարտացեք, որ ծնել եք քաջ որդի, ում հողին անմահ է, ոգին՝ անընկճելի...

Նոր սերնդին՝ ուժ, որ կարողանա շարունակել նախորդի կիսատ թողած գործերը... Պահենք ու ծաղկեցնենք Հայոց աշխարհին՝ իր չքնաղ Արցախով:

Էլ ո՞վ՝ եթե ոչ մենք:

Էլ ե՞րբ՝ եթե ոչ հիմա... եւ միշտ:

***Իրանահայեր
25.07.2008թ.***

Չափազանց խորը տպավորություններով ու տաք յուզերով հեռացավ «Յուսկ» հաստատութեան տուրիստական մեր խումբը անյայտ կորած հերոսների հուշաթանգարանից:

***Աբնուսե, Խորեն, Անդրանիկ Քեչիշեաններ
29.07.2008թ.***

Յուզված մուտք գործեցինք հուշաթանգարան, հիմա էլ այն թողնում ենք առավելս յուզված եւ հայրենասիրական ոգու նոր լիցքեր առած: Այս հո-

ղը մեր հայրենիքի մի սուրբ մասն է, եւ այս տղաները մեր էլ տղաներն են...

***Անահիտ- Եղիշ եւ Վարուժ Զարգարեաններ
29.07.2008թ.***

Այստեղ մեր տեսածն ու լսածը գոհացուցիչ եւ տպավորիչ էր: Հիացած ենք նկարների եւ յուշ- մասունքների սիմվոլիկ դասավորումներով, որ մտահղացել եւ կատարել է տիկին Վերա Գրիգորյանը:

Մարդուն չափազանց բարձր էներգիա է պատում ընդհանուր շէնքում: Առավել ուժ եւ կորով: Մեր յոյսերը միացնելով անյայտ կորածների մայրերի եւ ընդհանրապէս բոլոր ընտանիքների յոյսերին՝ ասում ենք՝ յամբերություն եւ յավատ:

***Սեդա Ղուկեասեան
Դիհան Յովսէփեան
29.07.2008թ.***

Կաղոթենք, որ էլ չլինեն անյայտ կորած զինվորներ, թող բոլորը ողջ ու առողջ տուն վերադառնան՝ հայրենիի գիրկը:

***Անահիտ Մասեհեան
Վարուժ Զարգարեան
Իրան-Թեհրան
29.07.2008թ.***

Իմ մեծ բաղձանքս է՝ Ղարաբաղն իր նպատակին հասնի:

Թամար Ալեքսանի
29.07.2008թ.

Անհավատալի մեծ աշխատանք է կատարվել: Հուսով ենք, որ կօգնի ետ վերադարձնել մեր տղաներին:

Երախտապարտ եմ:

Մարթա Չինայան
Չիկագո
06.08.2008թ.

Պեյրուբահայ մանկապարտեզի դասատուներս եկած ենք Արցախ մեր ներդրումը կատարելու: Եվ ահա այցելեցինք այս թանգարանը, որ յատուկ է իր ոճով, ան ամբողջական պատմություն մըն է հայ ժողովրդի մը տառապանքի, որ միշտ ապրում է հավատով եւ յոյսով: Ապրէն այն մայրերը, որ իրենց սրտի վիշտը սեղմում, յոյսով կըսպասին իրենց զավակներին եւ միշտ աղօթք կը բարձրացնեն անոնց համար, որ հանգիստ մնան:

Կը մաղթենք յաջողություն եւ փափագներու իրականացում: Աստուած լսի Ձեր աղօթքը:

Իրմա Ճէրիճիան
Նոյեմի Փիշթիքիան Պիրոյան
Սօսի Կէօնիզիա
13.08.2008թ.

Երանի նման թանգարանները վերջինները լինե-
ին մեր բազմաչարչար հողում, երանի որդիս վեր-
ջինը լիներ ազատամարտի զոհերից, երանի
առիթներ չունենայինք նորանոր թանգարաններ
հիմնելու, երանի միայն ծննդատներ ունենայինք,
երանի մեկ հարսանիք՝ յոթ կնուկնք ունենայինք...

Երանի՛, երանի՛, երանի՛...

Քեյթի Գունդակչյան
ԵՊՀ հանրագիտական կենտրոն,
«մշակութային եղեռն» լաբորատորիայի
գիտաշխատող
«Կարոտի կանչս» կազմակերպության հետ
16.08.2008թ.

Անհավատալի մեծ աշխատանք է կատարվել:
Չուսով ենք, որ կօգնի ետ վերադարձնել մեր տղա-
ներին:

Երախտապարտ եմ:

Մարթա Չիմայան
Չիկագո
06.08.2008թ.

Առաջին անգամ այցելեցինք ԼՂՀ անհայտ կո-
րած ազատամարտիկների հուշաթանգարան: Խո-
րին երախտագիտություն ենք հայտնում թանգա-
րանի բոլոր աշխատակիցներին՝ տիկին Վերա

Գրիգորյանի գլխավորությամբ: Մենք՝ թաղավարդ-
ցիներ՝ հուսով ենք, որ մեր համագյուղացի ան-
հայտ կորած Աշոտ Գրիգորյանը իր ընկերների
հետ կվերադառնա տուն...

Հուլյսի ճանապարհ...

Ա. Հարությունյան
Ռ. Ոսկանյան
Ս. Աբրահամյան
Գ. Աբրահամյան
22.08.2008թ.

Անհայտ կորածը անհայտ չէ, անուն ունի: Այդ
բախտին է արժանացել հարազատ երկրի ազա-
տության համար: Նրա ճակատագիրը շատ է ող-
բերգական, ավելին՝ քան զոհվելու պարագա-
յուն... Բոլորս էլ հասկանում ենք դա: Մեր զոհված
զինվորների հոգիների հետ երկնքում թեւածում են
եւ այն անհայտ կորածների հոգիները, ովքեր չեն
դիմացել բանտի կտտանքներին... Եվ նրանք, եւ
ովքեր դեռ տառապում են խցերում, մեզ հրամա-
յում են չկորցնել այն, ինչ ձեռք ենք բերել...

Սամվել Գաբրիելյան
Նկարիչ
08.30.2008թ.

Я очень рад, что люди помнят и уважают свою историю, своих павших и пропавших-друзей, братьев, сестер, матерей, отцов...

*Джанпузи Валерий
Калининградская область
03.08.2011г.*

Այցելելով անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան՝ նորից համոզվեցի արցախցի մայրերի մեծ ուժի և տոկունության մեջ: Խոնարհվում եմ ձեր առջև:

Տա Աստված՝ էլ չտեսնեք նման ցավ ու արհավիրք:

*Ամալյա Մադոյան
17.09.2008թ.*

Ձեր բոլորին կը մաղթանք քաջություն, համբերություն և հարատև աշխատանք, որ կարենաք ազատիլ մեր մարտիկները:

*Արամ և Յասմիկ
20.09.2008թ.*

Խոնարհվում եմ ձեր հավատի, հույսի և համբերության առաջ:

*Ք.Սանյան
30.09.2008թ.*

Մեզ ցնցեց Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը: Հայ մայրերը հերոս են, իրենց ծանր վշտի հետ՝ կամքով անկրկնելի...

**«Զատիկ» ՀԿ
ք.Երևան
20.09.2008թ.**

Սիրելի նահատակներ, հողը թեթև կըլլա ձեր վրայ: Դուք հավերժական ապրողներ պիտի ըլլաք: Մենք բոլորս շատ հպարտ ենք ձեզնով: Աղօթքեն զատ ոչինչ չենք կարող ընիլ... Ապրեք հավերժ, հայ Արցախ, հայ ժողովուրդ:

**Հալեպեն
Սօնա Գրնդյան**

Ես շատ հպարտ եմ իմ հայ ըլլալուս, երբ կը լսիմ մեր ազգին քաջագործություններու մասին, ավելի զօրավոր կզգամ զինքս: Աս սրահին մեջ բառերս չեն հերիքեր՝ բացատրելու զգացումնիս... Կեցե՛ հայ ժողովուրդը:

**Յակոբ Զեքիճիան
Լոս Անճելըս
25.09.2008թ.**

Հպարտ ենք ձեզնով, ով հայ մարտիկներ, ձեզնով պիտի շարունակվի մեր մնացյալ հողերու տիրացումը:

**Ռիտա Օհանյան
24.09.2008թ.**

Память.
Позабыть и не вспомнить.
Все, что было с тобой...
Все, что могло о тебе напомнить,
Боль причиняет. Мне одной...
Позабыть. Какой ценою. Спросить у памяти
своей.
Нет. Я рану свою вскрою.
Без памяти я- не человек.

Память- единственная награда для тех, кого
сегодня нет с нами... Кто не покоится в своей
родной земле, чьи родители, близкие и родные
не могут молча посидеть у могилы, чья земля
не станет для них пухом...

Единственное успокоение людей, кого
постигло это горе- быть рядом. Видеть, что их
дети не забыты. Собраться и смотреть на все,
что создал, собрав по крупице все, что могло
бы успокоить душу людей, безнадежно годами
ожидавшие чуда...

Низкий поклон Вере Григорян, которая
смогла не только осилить боль, но и создала
подобный музей. Чувство удовлетворенности
от проделанной работы помогает ей и
подобным ей людям объединиться. Их горе
становится достоянием всех... ибо вместе легче

ее перенести.

Нет в Арцахе человека, кого б не коснулась своим черным крылом война...У каждого из нас в душе есть рана, которая временами дает о себе знать...Она бесследно не исчезает, пока мы живы и жива память.

Пусть она будет светлой, пусть поможет нашим детям и внукам ценить ту жизнь, которая досталась им благодаря тем, кого сегодня нет с нами...

Память. Единственная награда...

*Цовинар Багдасарян
Член СП НКР, Армении, России
Председатель общественной
организации
“Женщины Арцаха”
02.10.2008г.*

Низкий поклон матерям, чьи сыновья готовы были отдать самое дорогое- жизнь во имя свободы и счастья родной земли и народа. Низкий поклон матерям, создавшим этот очаг. И дай Бог, чтобы их дети вернулись домой, а этот уголок скорби превратился бы, скорее всего- остался бы только уголком Славы, Подвига сыновей земли Арцахской.

Честь и хвала вам-создавшим и сохранив-
шим этот музей.

*Донара Габриелян
Ректор Университета
<Месроп Маштоц>
04.10.2008*

Мы не вправе вас забывать.

Мы не вправе вас не вспоминать. Мы низко
поклоняемся перед вами- матерей воинов, не
вернувшихся с поля боя.

Дорогие мои, крепитесь. Ведь вы не одни,
ведь ваши /наши/ дети берегли Арцах. Вечная
слава! Никто не забыт- ничто не забыто!

*Д. Гулян
04.10.2008г.*

Շատ տպավորված ենք այս թանգարանով: Թա-
խիժ, տխրություն և հպարտություն: Խոստացանք
ինքներս մեզ, որ կլինենք մեր ժողովրդի և ազգի
արժանի զավակը: Կշարունակենք նրանց գործը:
Մենք միշտ հիշելու ենք նրանց և նրանց անհայտ
ճակատագրի հայտնի հերոսությունը:

*Ստեփանակերտի բժշկական քոլեջի
I քույրական կուրս
09.10.2008թ.*

Այս կազմակերպությունը, որ հավերժացնում է մեր Ղարաբաղի նվիրյալ, բայց մարտական թոհուբոհում անհայտության ծանր բախտին դատապարտված զինվորների հիշատակը, սատարում նրանց ընտանիքներին, արժանի է մեր հարգանքին եւ անգամ շնորհակալությանը: Դե, իսկ թանգարանի մասին չեմ էլ ասում, այն վեր է ամեն սպասածից: Իրոք շնորհակալություն այն ստեղծողներին:

Ա.Մինասյան
«Վերածնունդ»
«Առողջ մտածելակերպ»
21.10.2008թ.

Տպավորությունները շատ-շատ են, բառերը՝ քիչ...Շատ ենք հուզված:

Տա Աստված, որ մեր անհայտ կորած տղաները մի օր վերադառնան, նրանց հույս ու հավատով սպասում են հարազատները... Երբեք չպետք է կորցնել հույսը:

ԱրՊՀ, Ժուռնալիստիկա, II կուրս
23.10.2008թ.

Մեր այսօրվա ստացած տպավորությունները շատ-շատ են:

Ցանկանում ենք, որ այլևս պատերազմ չլինի, և ոչ մի մայր որդի չկորցնի: Խոստանում ենք մեր Ար-

ցախյան պատերազմում զոհվածների և անհայտ կորածների հիշատակը վառ պահել:

***Մարտունու շրջանի Ննգու միջն. դպրոց
21.10.2008թ.***

Մենք հետաքրքրությամբ էինք լսում Ձեզ, տիկին Գրիգորյան: Մենք միանում ենք Ձեր կազմակերպության բոլոր անդամների խոր ցավին՝ մենք այն կիսել ենք ուզում... Գուցե այդպես թեթևանա բոլորիդ սրտի բեռը... Մենք հայ ենք ու պիտի վառ պահենք հայ տղաների, հայ զինվոր տղաների, հիշատակը:

***Ստեփանակերտի համար 1 դպրոց
VIII «բ» դասարան
25.10.2008թ.***

Առաջին անգամ ըլլալով Արցախ, անկարող եմ նկարագրել կամ բացատրել զգացումներս, որ այս գեղեցիկ, հրաշալի այս աշխարհի մասին վրաս զգացի: Այս թանգարան այցելությունս ալ, անշուշտ, վեր է ամեն բացատրությունեն... Մայր մը ըլլալով, կզգամ այս հողուն բոլոր մայրերու տարապանքը, զոհողութիւնը, համբերութիւնը: Տառապանքը այն հայ մոր, որ իր զավակին կուզարկէ հայրենիք փրկելուն և կըսպասէ իւր վորդիին:

***Համեստ Պեօճեան
Պոսթոն
30.10.2008թ.***

Երիտասարդության համաշխարհային օրվա առթիվ Արցախի ԵՅԿ ներկայացուցիչներս կրկին այստեղ ենք ահա՝ ասելու, որ կիսում ենք բոլորիդ ցավը: Մենք սպասում ենք ձեզ, մեր տառապող տղաներ: Ձեր տունդարձը թող շուտով լինի...

Լենա Ս.

*Մշակույթի և երիտասարդության
հարցերի նախարարություն
11.2008թ.*

Մեզ համար պատիվ էր այստեղ լինել... Հենց մուտքի դռնով ներս մտնելուն պես մարմնովս սարսուռ անցավ... Իսկ թանգարանային սրահում, կարելի է ասել, կորցրի խոսելու ընդունակությունը: Նման մի հարուստ եւ իր տեսակի մեջ ցնցող թանգարան ստեղծելու համար շնորհակալություն ԱԿԱՅՄ վարչությանը եւ նրա նախագահ Վերա Գրիգորյանին:

Արթուր Հովակիմյան

Ք.Իվանյանի անվան

ռազմա-մարզական վարժարանի

11 կուրսի սան

18.11.2008թ.

Յուրաքանչյուրս ծնվում ենք հայ, քչերս ենք ապրում հայ, սակավաթիվներս՝ վախճանվում Հայ: Յուրաքանչյուր Հայի առաքելությունն է ապրել ու մեռնել իսկական Հայ: Ամբողջ հայության

համախմբվածությունն է այն անկյունաքարը, որը կառաջնորդի ազգիս դեպի հզոր ու հաղթական ապագա:

Արմեն Նավբադյան
«Հայադարան» համահայկական
նախագծի գլխավոր տնօրեն

Հսկայական աշխատանք է արված: Արված է սիրով և նվիրումով եւ գործի իմացությամբ: Երիտասարդ սերնդին հայրենասիրության ոգով դաստիարակելու օջախ է այս թանգարանը: Համբերություն եմ մաղթում մեր որդեկորույս մայրերին:

Շնորհակալություն տիկին Գրիգորյանին՝ իր կատարած հայրենանվեր աշխատանքի համար:

Լ.Անտոնյան
«Մայր Հայաստան» թանգարանի տնօրեն
20.11.2008թ.

Չհիշելով անցյալը, մենք չենք կարող ներկա ու ապագա ունենալ մեր սրտի ուզածով: Չսպասել հույսով՝ ուրեմն մնալ առանց ուժերի... Ինչ ես տեսա ու զգացի այս տխուր, բայց պայծառ տան մեջ, կարծում եմ, մեծ զենք ու կռվան է մեր անհայտ կորած հայրենակիցների փրկման գործում:

Ցանկանում եմ հաջողություն այս մեծ ու արդար գործում:

Մեծ հարգանքով՝
Սեյրան Կարապետյան
06.12.2008թ.

Մենք եկած ենք արտասահմանեն: Այս գնացությունը մեծ Հայրենիք մենք կը համարինք իբրև ուխտագնացություն, մանավանդ գնացությունը՝ դեպի վիրածնունդ արած ու ապրած Արցախ: Շատ ոգևորված ենք ես ու ընկերս՝ Հրայրը, վաղուց էինք փափագած տեսնիլ մեր ազատագրված հողը:

Շահեն Կարազօզեան

Տպավորված եմ այս թանգարանով: Կրկին անգամ վկայությունն է այն ամենի, որ ոչ ոք մոռացված չէ: Նման թանգարանը, անհայտ կորածների ծնողների հետ հանդիպումը նախ և առաջ պարտավորեցնում են աշխատել եւ արարել՝ ի նպաստ հայ ժողովրդի և Արցախի բարգավաճման:

***Նարինե Ազատյան
ԼՂՀ սոցապ նախարար
22.12.2008թ.***

Ծառայության բերումով այսօր գտնվում էի Ստեփանակերտում ու երբ ազատ ժամին որոշեցի շրջագայել քաղաքում, առաջին հերթին միտք ծագեց այցելել թանգարանները... Եվ ահա տիկին Վերան բացում է դուռը, որ ներս մտնենք: Պատկերացում չունեի, թե ինչ եմ տեսնելու: Ու երբ տեսա ու լսեցի... Բառեր չեմ գտնում զգացածս արտահայտելու, հոգիս ալեկոծված՝ ուղղակի վերցնում

Եմ գրիչը՝ հուշամատյանին հանձնելու մաղթանքս.
«Հավերժ փառք մեր նահատակվածներին, բարի
վերադարձ դեռ չվերադարձած արծիվներին, խա-
ղաղություն հայոց օջախներին: Թող այլևս հայի
ընտանիք չսգա իր կորուսյալի համար»:

Մայրո Չրաչյա Պետրոսյան
ՀՀ ՊՆ 93353 գ/մ
23.12.2008թ.

Չափազանց հուզված եմք: Դուք Ձեր ուսերին
հսկայական բեռ եք վերցրել, տիկին Գրիգորյան, և
տանում եք անմռունչ: Թող բազմապատկեն ուժե-
րը Ձեր՝ ի նպաստ թանգարանի եւ տղաների... Ձեզ
հետագա հաջողություններ եմք մաղթում այս
սուրբ գործում՝ պատրաստ մեր ուժերը ներածին
չափ օգնելու ցանկացած հարցում:

***«Ռազմավարական
քաղաքականության ակումբ»***
13.02.2009թ.

Մեր երախտագիտությունը՝ Ձեզ, տիկին Վերա,
եւ կազմակերպության ձեր զինակիցներին՝ հայրե-
նանվեր մեծ գործի համար: Ձեր մայրական սրտի
օրհնանքը մեզ՝ այսօրվա զինվորներիս, հավատա-
ցեք, բարձր եմք գնահատում: Շնորհակալ եմք
լրացուցիչ հոգևոր ուժ փոխանցելու եւ մեր քաջա-

րի ու տառապած /դեռ տառապող/ տղաների պատմությանը մեզ ծանոթացնելու համար:

**Թիվ 46492 գ/մ ՁՄՅԳ-ի
անձնակազմի կողմից
15.02.2009թ.**

Խորին շնորհակալություն Անհայտ կորած ազատամարտիկների թանգարանի տնօրինությանը: Ոչ-ոքի չպետք է մոռանալ, այո, հուսով ենք, որ ոչ միայն ներկա՝ այլև գալիք սերունդները կհիշեն նրանց:

**Թիվ 49971 գ/ սերժանտական
անձնակազմ,
նույն զորամասի ՏՅԳՄ ԱՅՏԱ գծով տեղակալ՝
կապիտան Աղասյան
03.03.2009թ.**

Անչափ տպավորված եմ՝ տեսնելով այս հուշաթանգարանի արժեքները: Հայտնում եմ երախտագիտությունս հուշաթանգարանը հիմնադրողներին, տնօրինությանը: Ես հպարտ եմ, որ բազումս տառապած, բայց հերոսական հայ ազգի զավակն ենք՝ այս տղաները եւ մենք...

**Վ. Պետրոսյան
5 ՊՇ ՅՅԳՄ 8 ՀՓ ՅՀԴ
հրամանատար՝ կրտսեր սերժանտ
03.03.2009թ.**

Անչափ ցավալի է տեսնել, որ կռվի ժամանակ անհայտ կորել են այսքան շատ տղաներ: Նրանց պատիվն ու հարգանքը պահպանելու պարտավորվածությունն է, որ մեզ ստիպում է ստեղծել այսպիսի թանգարան: Հայրենյաց փրկության համար մարտնչած եւ մարտերից մեկուն անհայտ կորած տղաներին սպասում են ու պիտի սպասեն ոչ միայն նրանց հարազատները, այլեւ ամբողջ հայ ժողովուրդը... Շնորհակալություն թանգարանի տնօրինությանը:

***Թիվ 46677 Ձ/մ 15 ԳՄ 25/Վ 25/դ
տանկի հրամանատար՝
կրտսեր սերժանտ Ս.Ստեփանյան
03.03.2009թ.***

Հուզմունք, ավստասանք եւ, չեն կարող չասել՝ դաժանության մղող զգացում... Դաժանության պահանջ՝ մեր տղաներին թուրքական դժոխքում պահողների հանդեպ. ահա թե ինչ տրամադրությանը ես բորբոքված, դուրս գալիս այս թանգարանից: Բառ ավելացնելն անհիմաստ է, բառերն անգոր են նկարագրելու զգացածս:

***Սահակ Հայրապետյան
Թիվ 46677 գ/մ հետախուզական
վաշտի կրտսեր սերժանտ***

Ամեն անգամ նույն զգացմունքներն են ունենում,
երբ մտնում ես այստեղ. աննկարագրելի կսկիծ ու
ցավ... Հեռանում ես՝ արցունքն աչքերիդ, լացը,
սակայն, դարման չէ... Համբերություն տղաներին...

**ԱԱՄ, ՀՊԵԿ
26.03.2019թ.**

Я не первый раз здесь... Приятно видеть, что
за 2 года много изменилось тут. Музей стал
ещё богаче. Это- очап патриотизма. Для
подрастающего поколения это очень важно.

**Гаяне Оганян
26.03.2009г.**

Առաջին անգամ ենք լինում անհայտ կորած
ազատամարտիկների թանգարանում: Տեսանք
նրանց նկարները, անձնական իրերը: Շատ հուզ-
վեցինք, խոր ափսոսանք զգացինք: Թող Աստված
մեր հայրերին տեսնի... Եվ թող
այլևս պատերազմ չլինի:

Ազգը բազմանա՝ լրացնի պակասը:

**Ստեփանակերտի գիշերօթիկ
հաստատության սաներ
26.03.2009թ.**

Առաջին անգամ եմ այցելում անհայտ կորած ազտամարտիկների թանգարան: Անոթի զգացում ունեցա, որ մի քանի անգամ եղել եմ Ստեփանակերտում, բայց նոր եմ տեսնում այն, ինչ պետք էր տեսնեի վաղուց... Մեծածավալ է եւ արժեքավոր այն աշխատանքը, որ կատարել է եւ շարունակում է իրականացնել Վերա Գրիգորյանն իր համախոհների հետ միասին: Ստեղծված մի այնպիսի փաստադարան / նկատի ունեմ ոչ միայն թանգարանային սրահը, այլեւ կազմակերպության` ԼՂՀ ԱԿԱՅՄ-ի, հավաքած, ձեռք բերած եւ ստեղծած վավերագրական փաստաթղթերի` տեսաժապավենների եւ մյուս արխիվի կանոնավորվածությունը/, որը կարող էր իրականացվել մի ամբողջ ինստիտուտի կողմից ու պատիվ բերել նրան: Այն սերը, որ դրվել է այս աշխատանքի հիմքում, հուզում է այցելուներին:

Պատերազմում անհայտ կորածների խնդիրը չի մոռացվի:

Չպետք է մոռացվի:

Արթուր Սաքունց
15.04.2009թ.

Անցնում էի Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի մոտով, ինձնից անկախ ոտքերս կանգ առան, սիրտս ասես մազնիսական ձգողականությամբ ինձ տարավ շենքից ներս...մա-

նավանդ որ՝ մինչև Արցախյան գոյամարտը այդ շենքում էր իմ աշխատավայրը՝ Արցախի հեռուստատեսության և ռադիոյի շենքը: Իմ մտապատկերում այն մնացել էր պատերազմից կիսավեր... Հիմա այն դարձել է սրբատեղի: Ուղղակի ցնցվեցի հարկաբաժնի տեսքից: Ամեն տեղ աչք շոյող կարգավորվածություն է: Վերա Գրիգորյանի կատարածը անգնահատելի է: Ինչպիսի՜ թանգարան է ստեղծել, եւ որքան հարուստ փաստադարան ունի կազմակերպությունը... Շատ սերունդներ այս օջախից հայրենասիրական դասեր կառնեն:

Չմոռանանք, միշտ հիշենք պատերազմի թոհուրոհում անհայտ կորած տղաներին, նրանք հայրենիքի փրկության զինվորներ էին: Ու հիմա էլ տառապանքի ճիրաններում են... Նաեւ նրանց արյան գնով է, որ այսօր կա եւ շենանում է մեր Արցախ աշխարհը:

Սիրելի մայրեր, սպասեցեք նրանց, Աստծո հրաշքով մի օր տուն կգան...

*Մելանյա Սայիյան
Հեռուստալրագրող
23.04.2009թ.*

Сегодня 6 «б» класс средней школы N3 посетил музей без вести пропавших воинов в Арцахской войне. Дети очень увлеченно

смотрели на все стенды с фотографиями наших героев. Им было интересно узнать об их жизни, о том, чем они увлекались. Ребята получили интересную информацию о боевых действиях, об Арцахской войне, накануне великого Дня Победы перелистали страницу нашей истории...

Беседа была очень интересной и познавательной.

Спасибо за экскурсию!

***Юлия Алексанян
Классный руководитель
06.05.2009г.***

Շատ էի լսել հերոսական Ղարաբաղի անցյալ ու ներկա պատմության մասին, բայց բախտ չէր վիճակվել լինել տեղում...Եվ ահա վերջապես այստեղ եմ Արցախում, ու սա ինձ համար պատմական ու գեղեցիկ պահ եմ համարում: Երկրորդ օրն է՝ ինչ գտնվում եմ ԼՂՀ զինված ուժերում՝ 47455 հրետանային գնդում: Փոխգնդապետ Առաքելյանի կողմից կազմակերպված շրջագայությունը ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտի թանգարաններում իմ և զինակից ընկերներիս հոգում ավելի բորբոքեց հայրենասիրության կրակը...Մեզ վրա հատկապես խոր տպավորություն թողեց Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկ-

ների հուշաթանգարանը: Շնորհակալություն, տի-
կին Գրիգորյան, Ձեր արածի համար:

Կարապետ Կարապետյան
Կրտսեր սերժանտ
12.05.2009թ.

Երկրորդ անգամ ենք այստեղ: Լրագրության բաժ-
նի /ԱրՊՀ/ պատրաստած Պ. Ջեյթունյանցի «Ուտքի,
դատարանն է գալիս» պիեսի բեմադրմամբ ներկա-
յացանք անհայտ կորած մեր ազատամարտիկների
հարազատներին: Վերջում հուշաթանգարանին նվի-
րեցինք ներկայացման լազերային սկավառակը:

Սողոմոն Թեհլերյանի նման արդարությանը հե-
տամուտ՝ վրիժառու տղաներ հիմա էլ ունենք: Ար-
դարության համար են կռվել ու ծանր բախտի ար-
ժանացել եւ այս տղաները, որ մեզ են նայում լու-
սանկարներից... Մեր պարտքն է հիշել նրանց ու
սատարել գոնե նրանց ընտանիքներին: Շատ ենք
ուզում հուսալ, թե մեր որեւէ ներկայացման ժամա-
նակ դահլիճում նստած կլինի այդ տղաներից գո-
նե մեկը...

Հայկ Ղազարյան
ք.Ստեփանակերտ
12.05.2009թ.

Ես Սարգսյան Մարգարիտայի քրոջ աղջիկն եմ,
սովորել եմ ԼՂՀ պետհամալսարանում, բայց առա-
ջին անգամն եմ գտնվում այստեղ, ցնցված եմ, չեմ

կարող բացատրել ինչ են զգում և հպարտ են, և մեծ ափսոսանք են զգում բոլոր մեր զոհերի համար: Երանի չլիներ այս պատերազմը ու չունենայինք այսքան զոհեր... Չեն կարողանում մտքերս շարադրել, բայց խոնարհվում են բոլոր մայրերի առջև և, իհարկե, տիկին Վերայի առջև՝ իր արած այս մեծ գործի համար, որը ինքը կատարում է բոլորովին անշահախնդիր: Հեռանում են այստեղից մեծ տպավորություններով ու այս այցը կլինի առաջինը, բայց ոչ վերջինը: Բոլոր անհայտ կորածներից բարի վերադարձ:

***Շնորհակալություն
Հարգանքներով՝
Լուսին Մանուկյան
12.05.2009թ.***

Կան արտահայտություններ, որոնք նոր արժեք և բովանդակություն են ստանում, երբ կապվում են մայր, հայրենիք սրբությունների հետ:

Մայր հայրենիքը սպասում է...ծեզմեր սիրելիներ: Առարկայացած նկարները, պատկերները, ամեն-ամեն ինչ պատմում են ձեր մասին, պատմում, հավաստում, որ դուք կգաք...

Այդ հավատը ամբողջացնում է տիկին Վերան՝ Արցախամայրը:

Իմ մեջ ծնված նոր զգացումը այն է, որ.... հավա-

տում եմ Արցախի գեղեցիկ ապագային, քանզի այդ ապագան հիմնվում է Արցախամոր, բուրձր մայրերի՝ պատերազմին «Ո՛չ» ասելու վճռականության վրա: Այդ զգացումը ծնվեց «Անհայտ կորածներ»-ի թանգարան այցելելուց հետո
Հուլիս, հավատ, սպասում...

***Մարտունու թիվ 1 միջնակարգ դպրոցի
փոխտնօրեն Ջեննա Ավետիսյան
15.05.2009թ.***

Ֆիզմաթ դպրոցի 10 ա դասարանի աշակերտներս՝ Լաուրա Բաղդասարյանի առաջնորդությամբ այցելեցինք «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն» թանգարան:

Թանգարանում տեղ գտած իրերը մեծ տպավորություն թողեցին մեզ վրա: մենք ևս մեկ անգամ պարտավորվեցինք ամուր պահել մեր հայրենիքը և շարունակել մեր հայրերի, հորեղբայրների և, ինչու չէ, նաև մեր մայրերի կիսատ թողած գործը: Գործն իրոք կիսատ է, քանի որ առայժմ մենք, որպես ինքնուրույն պետություն, դեռ իրավական ճանաչման չենք հասել:

Մենք հույսով սպասում ենք մեր անհայտ կորած ազատամարտիկներին և խոսք ենք տալիս վառ պահել նրանց հիշատակը: Ինչով կարող ենք կօգ-

նենք նրանց երեխաներին, մայրերին և ազգակից-
ներին:

***Ֆիզմաթ դպրոցի 10ա դասարանի սաներ՝
Վահրամ Բաղդասարյան
Արամ Գրիգորյան
Նախշուն Ավանեսյան
Սեդա Ասրյան
15.05.2009թ.***

Այս օրը մեզ համար կդառնա մի անմոռաց պատ-
մություն: Ես՝ էլլադա Դոլուխանյանս, իմ դասարա-
նի աշակերտների հետ այցելեցի Արցախյան գոյա-
պայքարին նվիրված հուշա թանգարան: Մեզ վրա
խոր տպավորություն թողեց մեր ժողովրդի ծոցից
սերված դյուցազուններին փառաբանող անկյուն-
ները: Մեր խիզախ մարտիկների անցած ուղին
նկարագրող ամեն ինչը: Շատ խոր հուզմունք թո-
ղեց մեր սրտում «Ռազմահայրենասիրական»
սրահը, որտեղ կախված են անհայտ կորածների
նկարները:

Նրանք անհայտ են...բայց մեր սրտում հայտնի
տեղ ունեն: Խոր կսկիծով գլուխ ենք խոնարհում
բոլոր նահատակների առջև և՛ «անհայտների»:

***Ասկերանի շրջան
գյուղ Այգեստան
05.05.2009թ.***

Խորապես յուզվեցինք, թանգարան այցելելով և լսելով բացատրությունները: Բայց միևնույն պահին, Վերա Գրիգորյանի նման կինը, լավ մայրը սովորեցրեց՝ ինչպես պետք է հաղթենք ցավին, յուզմունքին...

*Անսպառ հավատանք՝ հոյս և սեր ցանկալով
Անի*

13 յունիս 2009թ.

Մեր տղաների անցած ուղին գնահատվում է մեր հասարակության կողմից: Եվ ցանկանում ենք նրանց ծնողներին համբերություն, մ իղծերի իրականացում:

Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց»

համալսարան

պատ. I կուրս

15.06.2009թ.

Մեր Կարոտի՝ Արցախյան պատերազմի հերոս, կանավորական ջոկատի հրամանատար, դաժան մարտերից մեկում վիրավոր վիճակում անհայտ կորած Կարոտ Մկրտչյանի մասին գրքի /հեղինակ՝ Վերա Գրիգորյան/ շնորհանդեսին է ներկայացել այսօր Չայաստանից եկած մեր պատվիրակությունը՝ ՀՀ «Զինվոր» ՀԿ-ների համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանի գլխավորությամբ: Միջոցառումն անցավ շատ բովանդակալից եւ հուզիչ: Տիկին Վերային շնորհակալու-

թյուն ոչ միայն այս եւ մյուս բոլոր գրքերի համար, այլեւ ամենից առաջ՝ նման հուշաթանգարան ստեղծելու: Տիտանական աշխատանք է տանում:

Եվ փառք ու պատիվ մեր Կարոտին ու նրան աշխարհ բերողներին, մարտական ընկերներին, հայ ժողովրդին՝ նման առյուծ որդի ունենալու համար: Ունի՛, այո, այնուամենայնիվ, գուցե մի օր երևա տղան....

*Ալլա Նիկողոսյան
«Ազատամարտիկ» կազմակերպության
փոխնախագահ
29.06.2009թ.*

Հարգանքս եմ մատուցում տիկին Վերա Գրիգորյանին՝ այս թանգարանի եւ ընդհանրապես հայրենասիրական գործունեության համար:

*Լիվեն Հովհաննիսյան
ԼՂՀ Քաշաթաղի երկրագիտական
թանգարանի տնօրեն
01.07.2009թ.*

Այն ամենն, ինչ տեսանք թանգարանում, ինձ խորհել տվեց այն մասին, որ, ավելի հեշտ կանցնի զինվորի ծառայությունը, եթե նրա համար նմանատիպ էքսկուրսիաներ ավելի հաճախ կազմակերպվեն... Մինչ այս թանգարան ոտք դնելս այլ կերպ էի մտածում պատերազմի, բանակի մասին, հիմա՝ այլ կերպ: Փառք ու պատիվ մեր այն զինվորներին, որ

հիմա էլ դեռ իրենց ուսերին կրում են պատերազմի բեռը՝ տառապելով հակառակորդի բանտերում: Նրանց ավանդն էլ կա Հաղթանակի մեջ:

Արմեն Մելիքյան
Կուրսանտ
07.07.2009թ

Ես և ծառայակից ընկերներիցս շատերը առաջին անգամ ենք հինավուրց Արցախում: Այս հողի հանդեպ մեր ունեցած հարազատության զգացումը ավելի է անրապնդում մեր հայրենասիրությունը, ավելի արժեվորում գինը հայրենյաց: Որպես հայրենիքի զինվոր՝ այս թանգարանում ստացա արիության դաս, դաս՝ որ կմղի ավելի լրջորեն նայելու հայրենիքի պաշտպանության սուրբ գործին...

Լևոն Սաղաթյան
ՀՕՊ զորքեր
04.07.2009թ.

Մենք՝ Ջերմուկից եկած հյուրերս, շատ մեծ տրպավորություն ստացանք պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանից: Մոռանալու բան չէ մեր տեսածը...

Լավրենտ Խաչատրյան
07.07.2009թ.

Այս օրը մեզ համար կմնա անմոռանալի: Ծառայակից ընկերներիս հետ այցելեցի Անհայտ կորած

ազատամարտիկների այս հուշաթանգարանը եւ այլ ոչինչ չեն ուզում ավելացնել, քան այն՝ որ՝ թող էլ պատերազմ չլինի, իսկ թե եղավ՝ կպաշտպանենք մեր հողի ազատությունը...

***Արմեն Միքայելյան
լեյտենանտ, 10 ԼՂՀ 77 ԱՄԳՓ
դասակի հրամանատար
06.08.2009թ.***

Մտնում ես թանգարան ու մտածում, թե ինչերի՛կարող էին հասնել այս տղաները, եթե չլիներ պատերազմըԱյս թանգարանն ստեղծողներին օգնել է պետք՝ ծրագրերը կյանքի կոչելու համար: Ուշադիր լինել անհայտ կորածների ընտանիքների նկատմամբ: Մենք դե-ֆակտո պետություն ենք՝ «փխրուն խաղաղությամբ»... Երկիրն ուժեղացնելու մեջ է մեր փրկությունը, գոյատևելու պայմանը: Ունենանք այնպիսի հայրենիք, որտեղ չեն մոռանում երախտավորին:Դա բոլորիս պարտքն է: Իրավական դաշտով այնպիսի հայրենիք՝ որտեղ յուրաքանչյուր հայ իրեն կզգա պաշտպանված թե ներսից, թե դրսի չկամ ուժերից: Ունենանք բարձր նպատակների հետամուտ, ազնիվ ու առողջ սերունդներ, որոնք հայրենյաց պաշտպանությունը, գործնական հայրենասիրությունը ամեն ինչից վեր կդասեն: Մենք դրա ճանապարհին ենք, եւ այն հեշտ անցնելու համար պետք է ավելի սերտ լինի

ժողովրդի և իշխանության կապը: Թող մեր երիտասարդությունը կարողանա ճիշտ կողմորոշվել իր անելիքում: Որպեսզի իզուր չանցնեն մեր թե գոհված, թե անհայտ կորած տղաների թափած արյունն ու կրած տառապանքը:

***Ստեփանակերտի «ԶԿ» ՓԲԸ
խմելու ջրի որակը վերահսկող
կենտրոնական լաբորատորիայի
կոլեկտիվի անունից՝
վարիչ Ս. Միրզաջանյան
09.07.2009թ.***

Նախ՝ խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, տիկին Գրիգորյան: Ձեր ստեղծած թանգարանում ես մտածեցի. ով չունի գերեզման՝ ուրեմն, ողջ է... Համենայնդեպս, մենք այդպես պետք է մտածենք: Պատերազմից տուն չդարձած մեր տղաները համայն հայության համար կմնան որպես ժողովրդի, ազգի ամենաթանկ էակներ....

***Զոյա Պողոսյան
Հաղրութ
10.07.2009թ.***

Благодаря этому музею память и надежда будут жить.

Спасибо большое.

***Алексей Г.
14.07.2009г.***

Տպավորված ենք այս յուրատիպ թանգարանա-
յին համալիրից՝ յուրաքանչյուր սենյակից, յուրա-
քանչյուր ցուցանմուշից...

Թող այն ամեն վատը, որ տեսել եք դուք, սիրե-
լի արցախցիներ, տեսել եւ իրենց վրա կրել են
Շուշին ու Ստեփանակերտը՝ հարակից գյուղերով,
այլեւս չկրկնվի: Գյուլնրիի Նանսենի անվան ման-
կատան բոլոր աշխատակիցների ու սաների անու-
նից շնորհակալություն ենք հայտնում բոլոր
նրանց, ում ջանքերի շնորհիվ ստեղծվել է հայրեն-
յաց պատմության յուրահատուկ մի էջը ներկայաց-
նող այս թանգարանը:

***Ա.Առաքելյան
Մ.Մկրտչյան
18.07.2009թ.***

Տպավորություններն աննկարագրելի են...

Հույզերը՝ շատ-շատ...

Համբերություն եւ հաջողություն բոլորիդ:

***«Հայաստանի ճամփեքով»
հանրային
հեռուստատեսություն
20.07.2009թ.***

Խորապես տպավորված՝ չափազանց ազդված եմ այս սրտառուչ և սրտատանջ հիշատակության վայրից: Ափսոս, հազար ափսոս, որ կորցրինք այսօրվա լավ երիտասարդների և չգիտենք անգամ որտեղ են նրանք այսօր հանգչում կամ դեռ կենդանի՝ կրում իրենց խաչը...

Աստված թող լուսավորի հանգուցյալների հոգիները, իսկ ողջերին համբերություն տա:

Ղ. Հարությունյան
22.07.2009թ.

Իրապես, հայրենիքն սկսվում է այս նստարանից, այս փոքրիկ գրադարանից, զոհված ու անհայտ կորած մեր եղբայրներից ու քույրերից, ինքնաշեն ու անարվեստ այս զենքերից... Վերա մայրիկի անհատնում ու անդադրում ջանքից, հավատով լի անձանձիր աչքերից, մաքուր հայացքից՝ որ բոլորինս է... Սպասումդ թող արդարացված լինի, մայր:

Հայկանուշ Ղազարյան
Հասմիկ Հովհաննիսյան
Հայաստանի Ազգային գրադարանի
բաժնի վարիչներ
24.07.2009թ.

«Տաճար» հանդեսի «Տիր» ակունքի բոլոր մասնակիցների անունից՝ մեր երախտագիտությունը

թանգարանի բոլոր աշխատակիցներին, մեր գատված ու չգատված արցունքները՝ մեր բոլորի հերոսներին՝ հայտնի թե անհայտ:

Ակնածանքով և խոնարհումով՝

Հովհաննես Սարոյան

բանաստեղծ, թարգմանիչ

07.08.2009թ.

Հիշել հիշելի մարդկանց՝ ամեն ապրողի սրբազան պարտքն է: Այս հրաշալի թանգարանը նպաստում է մեծագույն նպատակին.

Փա՛ռք հայրենիքի զինվորյալներին...

Հրանտ Հորիզոն

07.08.2009թ.

Հրաշալի թանգարան, որտեղ զետեղված են մեր հերոսների անհայտությունը հայտնի դարձնող և լուսաբանող բազմաթիվ հուշակոթողներ:

Շատ հուզված եմ... խոսքեր չկան:

Թող Աստված հողը թեթև անի նրանց վրա, ովքեր արդեն չկան եւ և սատարի նրանց, ովքեր դեռ կարող են տուն գալ՝ եթե մի օր տեղի ունենա հրաշքը:

11.08.2009թ.

Անգնահատելի է այն գործը, որ անում են այս թանգարանի հիմնադիրներն ու աշխատողները:

Թանգարանը հրաշալի է: Մեծ և շատ կարևոր գործ է արված:

Աստված թող երկար կյանք և երջանկություն տա զոհվածների և անհայտ կորածների հարազատներին:

11.08.2009թ.

Տպավորիչ աշխատանքով և խնամքով պահված է անհայտ կորած մարտիկների տուն թանգարանը: Պետք չէ մոռանալ նրանց ծառայությունը և յիշատակը: Մենք միշտ պիտի հիշենք նրանց գործը և յիշատակը:

**Միսաք Թաթևյան
Վաչագան Զալաճեան
11.08.2009թ.**

Որպես ազատամարտիկի կին՝ իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում այն մարդկանց, ում ջանքերի շնորհիվ ստեղծվել է այս տպավորիչ թանգարանը: Սա հարգանք է այն տղաներին, ովքեր չվերադարձան: Մեր պարտքն է խոնարհվել նրանց հիշատակի առջև, նրանց հարազատների, ընտանիքների առջև:

**Սուսաննա
Երևան
12.08.2009թ.**

Ենթադրում եմ, որ այս տղաներն այնտեղ՝ ռազմաճակատում, գրոհի են գնացել՝ առաջնորդվելով բանաստեղծի տողերով.

Իմ հայ ժողովուրդ
Դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես՝
Ոչ լեզվիս վրա,
Իսկ կրծքիս միջից,
Թե սիրտս ճեղքեն,
Քո եռագույնը պիտի
Հորհուրա:
Չմոռանանք նրանց:

*Ալլա Երևան
12.08.2009թ.*

Ողջ էությունս տակնուվրա եղավ այստեղ....Պատասխանատվություն եմ զգում՝ հայրենիքիս համար ինչ-որ լավ բան անելու: Վստահ եմ, որ սերունդները կգնահատեն տղաների եւ նրանց հարազատների արածը: Առաջ քայլենք հայրենիքի շենացման ճանապարհով

*Նարեկ Վանեսյան
«Բարգավաճ Հայաստան»
12.08.2009թ.*

Որդիներին կորցրած մայրերը հույսով ու հավատով կսպասեն նրանց վերադարձին, և դու՝ Թան-

գարան, միավորողը կլինես նրանց ու նրանց հա-
րազատներին: Թող սուրբ լույսը իջնի քո վրա, և
պատերիդ վրա չավելանան նոր անհայտ կորած-
ներ...

***Մայրական մաղթանքով՝
«Զինվոր» համակարգող խորհրդի նախագահ
Մարգարիտա Խաչատրյան
12.08.2009թ.***

Հիացած եմ այս հուշաթանգարանով: Խոնարհ-
վում եմ Վերա Գրիգորյանի և ԼՂՀ ԱԿԱՅՄ յուրա-
քանչյուր անդամի առջև՝ նրանց կատարած աշխա-
տանքի համար: Հազարավոր հայ երիտասարդնե-
րի անունից խոնարհվում եմ այս քաջորդիների
հիշատակի առջև: Մենք երդվում ենք, որ տեր ենք
կանգնելու նրանց ազատագրած հայրենիքին,
տեր ենք կանգնելու նրանց դավանած արժեքնե-
րին:

***Աննա Գրիգորյան
«Երիտասարդության կամք»
երիտասարդական հասարակական
կազմակերպության ղեկավար
12.08.2009թ.***

Առաջին անգամ լինելով ձեր թանգարանում և
տեսնելով, թե ինչ մեծ գործ եք կատարել, ուղղակի
հիացա:

Տա Աստված, որ անհայտ կորած ազատամարտիկների թանգարանը մի օր դադարի այդ անունը կրելուց եւ դառնա... հավաքատեղի այն տղաների համար, որոնց պատվին ստեղծվել է: Ես խոնարհվում եմ ձեր ու նրանց առջեւ:

Սերոբ Գևորգյան
«Շրջանավարտների միություն»
ՀԿ նախագահ
12.08.2009թ.

Առաջին անգամ լինելով ձեր թանգարանում և տեսնելով ձեր կատարած աշխատանքը, հիացանք եւ այդ տպավորությունը միշտ կկրենք մեր հոգիներում:

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

Скорблю обо всех погибших и пропавших без вести. Благодарю армянский народ за пример Борьбы, Веры, Любви и Стойкости. Всем сердцем желаю беречь СВОЮ ЗЕМЛЮ. Всем сердцем желаю России осознать важность и необходимость поддержки Армении.

Наталья Мощенская
Москва
24.08.2009г.

Спасибо Вере Армоевне и всему коллективу музея за то, что надежда живет и терпится в сердцах матерей.

Желаю, чтобы информация в музее была доступна и русскоязычному, и англоязычному гостю. Спасибо за то, что Вы это делаете.

*Дима Е.
01.09.2009г.*

Երկրորդ անգամ է, որ այցելում եմ այս ցնցող թանգարանը: Շատ մեծ տպավորությամբ եմ հեռանում այստեղից:

*Հովիկ Սարգսյան
մայր
01.09.2009թ.*

35590 գ/մ հրամանատարի՝ ԱՐՏԱԳ տեղակալ Սարգսյանի հետ միասին ուսումնական վաշտի անձնակազմը, թվով 50 հոգի, եղանք անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում և շատ մեծ տպավորություններով ենք հեռանում:

*Դավիթ Մանեյան
IV դասակի կուրսանտ
01.09.2009թ.*

Այս թանգարանի նկարներում ես ունեմ համագյուղացիներ, դասարանցիներ և հարևաններ: Հայոց Արցախ աշխարհի ժողովուրդս կոչ ենք անում

ողջ հայությանը՝ հիմա և միշտ սրբորեն պահպանել ու պաշտպանել նրանց ազատագրած հայրենիքը: Փառք ու պատիվ մեր զոհված և անհայտ կորած ազատամարտիկներին:

Ես՝ Մարինա Գրիգորյանս, հաճախակի եմ այցելում այս թանգարանը ու համարյա ամեն անգամ տեսնում փոփոխություններ, լսում նորություններ: Թող Աստված Վերա Գրիգորյանին ավելի մեծ ուժ ու եռանդ տա, որպեսզի ավելի մեծ ջանքեր գործադրի հայոց գերյալ զինվորների ճակատագիրը պարզելու համար:

Մենք մեր իշխանությունների, մեր նորընտիր նախագահ Բակո Սահակյանի հետ միասին, վստահ եմ, կկարողանանք Արցախում ավելին ստեղծել: Թող մեր պետական դրոշը խաղաղ երկնքի տակ ծածանվի՝ մեր անցյալի եւ ավելի շատ՝ ներկայի ու ապագայի համար...

03.09.2009թ.

Հուշաթանգարանում շատ բան տեսա: Ամենակարևորը՝ ամեն-ամեն ինչ արված է խնամքով ու ճաշակով: Նայում ես անհայտ կորածների դիմանկարներին, ու քեզ համակում է թախծի զգացումը: Հուզվում ես անչափ, նաև հպարտանում մեր տղաներով, մեր հայորդիներով նրանք զինվոր էին, եւ այն, ինչ պատահեց նրանց հետ, պատերազմում կարող է պատահել ցանկացածի հետ: Նրանք

կրակի գծում, ծանր մարտի պահին են կորցրել այլևս կրակելու հնարավորությունը, սա չպետք է մոռանալ: Ով գիտի, գուցե մինչև հիմա էլ դեռ նրանց վերքերը, ուղիղ իմաստով վերցրած, չեն ապաքինվել...

Իմ խորին շնորհակալությունը՝ տիկին Վերային, մյուս բոլոր աշխատողներին, անձնուրաց ու հայրենանվեր գործի համար:

Միքայել Բալյան
Դարի լավագույն մանկավարժ
05.09.2009թ.

Յավերժ փառք Արցախյան գոյամարտը և հաղթանակը կերտած մեր ժողովրդին, որուն ժառանգորդները պիտի ըլլան սփյուռքի և հայրենիքի մեր նորահաս սիրունուհիները:

Կը ցանկանանք, որ այս յուշաթանգարանի պատերը յետ այսու չարձանագրեն իրենց անյայտ կորած հարազատներու նկարներով:

Չոփսիմե Կանանյան
Չալեպ, Սուրիա
09.09.2009թ.

Խոնարհվում եմ այս հերոս տղաների հիշատակի առջև: Հպարտ եմ, որ հայ եմ, հպարտ եմ, որ ժառանգորդն եմ հաղթանակած սերնդի:

Աննա Գրիգորյան
«Երիտասարդության Կամք»
ՉԿ համանախագահություն
25.09.2009թ.

Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անվան հ.5 միջն.դպրոցի V ա և V բ դասարանի աշակերտներս, դասղեկներ Անիվարդ Հայրապետյանի և Սուսաննա Դադայանի հետ, այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը: Մենք մեր խոնարհումը մատուցեցինք անհայտ կորածների հիշատակին:

09.10.2009թ.

Միշտ, ամեն այցիս, մտածում եմ. ի՞նչ թաքնված ուժ կա այս թանգարանում... Իսկ որ կա՝ հաստատ է: Կարծում եմ՝ հայրենիքի եւ նրա զինվորի հանդեպ մեր սրտում առկա հարգանքն ու սերը: Այս նկարները խոսում են մեզ հետ: Յուրաքանչյուր ազատամարտիկ իր ուրույն, չընկճվող կենսահասանքն ունի...Այս սերունդն արեց իրենը՝ դիմակա-

յելով մեծ փորձութեամբ: Այս տղաները մինչեւ հիմա էլ դիմակայում են... Պատերազմը նրանց համար չի վերջացել:

Այստեղ այն ներշնչանքն էս ունենում, թե մեր կորսված զավակները շուտով կժամանեն իրենց երազած անկախ հայրենիքը: Դա շատ յուրօրինակ զգացում է... Տա Աստված՝ այդպես էլ լինի:

Արցախի Բուճաբան

բժիշկ

09.10.2009թ.

Տիկին Վերային հեռվից էի ճանաչում: Սակայն այսօր նրան տեսա որպես ուժեղ, ճշմարիտ, տոկուն մի կնոջ եւ... փխրուն սրտի տեր մոր: Ձեզ ուժ ու եռանդ՝ Ձեր ծանր, բայց շնորհակալ աշխատանքում՝ ի կատարումն Ամենք հույսի...

Բերձորի քաղաքային գրադարանի տնօրեն

09.10.2009թ.

Мы вправе помнить Вас, пропавшие без вести наши бойцы за освобождение нашей земли. Низкий Вам поклон!

Мы- участники экскурсии, благодарим за интересную информацию руководству музея. Желаем мирного неба Арцахской земле. Мы

будем всегда вас ждать. Будем верить, что вы вернетесь.

*Группа учащихся 6-ых
классов школы 5 г.
Стеранакерта
Классные руководители
А.Аванесян, К. Бабаян
15.10.2009г.*

Մեզ վրա մեծ տպավորությունն թողեց այս թանգարանը: Այն, ինչի մասին շատ էինք լսել, այսօր տեսանք մեր աչքերով:

Ցնցվեցինք, տեսնելով մեր համազյուղացու՝ Սովսես Օհանյանի անձնական իրերը: Կրկին ապրեցինք նրա մոր՝ Ռոզա Աթաայանի և անհայտ կորած ազատամարտիկներ ունեցող բոլոր մայրերի վիշտը:

Թող չլինի պատերազմ, թող ոչ մի մայր որդի չկորցնի:

*Նորագյուղի Վ.Պետրոսյանի անվան
միջն.դպրոցի VII դասարան
15.09.2009թ.*

Только неумолимое время выставит самые точные акценты и нужные оценки этим парням. Они сражались за Родину! - вот о чём

нельзя забыть...

За такой музей - спасибо огромное.

*Полковник Абрамян
Командир войсковой части 43003
Г.Ижевск
15.10.2009г.*

Спасибо Вам огромное за память о пропавших и павших за праведное дело!

*Ученики 8 класса
шк. 5 г. Степнакерта
17.10.2009г.*

Մենք ձեզ սպասում ենք:

Դժվար է ձեր ծնողների աչքերին նայելը...

Ձեր սկսած գործը կհասցնենք ավարտին:

*Շուշիի Ա.Խաչատրյանի անվան
պետական քոլեջի «Ջարդարային
կիրառական արվեստ և ժող.արհեստներ»
բաժնի I կուրս
Դասուղեկ Վ.Սելբոնյան*

Այս այցելությունից ստացանք մեծ տպավորություն: Սա կարևոր է յուրաքանչյուր արցախցու հա-

մար՝ ճանաչել այն հայրենասերներին որդիներին,
որոնք պայքարել են հայրենի հողի համար:

Թեկուզ այսօր նրանցից շատերը չկան մեր կող-
քին, նրանք անմահ են իրենց գործով:

Շնորհակալ ենք:

***Ջենմա Հարությունյան
Շուշիի Խ.Աբովյանի անվան
հիմնական դպրոցի IX բ դասարան***

Այսօրվա այցելությունը մեզ շատ բան սովորեց-
րեց: Այս տխուր պատմությունը գրավել է բոլորիս
սրտերը: Եթե մեզնից ինչ որ բան կախված լիներ՝
անմիջապես կօգնեինք նրանց... Մենք Խ.Աբովյա-
նի անվան 9 ա դասարանի կողմից տուն վերա-
դառնալու բախտն ունենալ ենք մաղթում բոլոր
անհայտ կորածներին: Եվ թող դաժան պատե-
րազմները մնան անցյալում:

***Սյուզաննա Ավետիսյան
24.10.2009թ.***

Այսօր Ստեփանակերտի բժշկական քոլեջի քույ-
րական I ա կուրսի ուսանողներս այցելեցինք Ան-
հայտ կորած ազատամարտիկների հուշաթանգա-
րան: Մեզ ընդունեց տիկին Վերան և պատմեց
ամեն ինչ: Մտքով ու սրտով ցնցված էինք: համբե-
րություն ձեզ, մայրեր:

***Կուրսի անունից՝ Սոնա Ասրյան
26.10.2009թ.***

Ղարաբաղը շրջապատված էր թշնամիներով:
Մեր տղաները իրենց կյանքի եւ արյան գնով
պաշտպանեցին հայրենիքը:

Իմացյալ մահը անմահություն է:

Վերադարձ՝ գերյալ ազատամարտիկներին:

Դավիթ Առստամյան
Թիվ 1 միջնակարգ դպրոցի
7 ա դասարանի աշակերտ
26.10.2009թ.

Լեռնային Ղարաբաղը շատ փոքր է, բայց հայե-
րը լավ կռվողներ են: Դրանում համոզվել է եւ մեր
թշնամին:

Պատերազմի ժամանակ անչափահասներն էլ
էին կռվում, որովհետեւ հայրենին սուրբ է: Նույ-
նիսկ երեխաները. գյուղերում նրանք ուտելիք էին
տանում մարտիկների համար...

Այս տղաները նույնպես հերոսություն են արել,
բայց նրանց բախտը մինչեւ վերջ չի բերել: Մենք
չենք մոռանում նրանց:

Մենք գիտենք. մեր «Տատիկ և պապիկ» հուշար-
ձանը խոսում է այն մասին, որ արմատներով խո-
րացած ենք դեպի մեր հողի սիրտը:

Ոչ մի թշնամի չի կարող կոտրել մեզ:

Յուրի Մարգարյան
Ստեփանակերտի թիվ 1 միջն. դպրոց
26.10.2009թ.

Ради Родины мы готовы на всё! Будем помнить о них!

*Арсен Арустамян
Школа 3 г.Степанакерта
27.10.2009г.*

Их путь домой действительно долог. И очень хочется надеяться, что пройдя этот тяжкий путь, они вернутся...Главное- чтобы их ждали. Благодарим за музей.

Слов мало... Да и нужны ли они тем, кто делает святое дело во имя своих родных, во имя будущих поколений.

Держитесь. Не опускайте рук. Вашими молитвами, терпением и надеждой живы они! Пусть беда больше не придет на землю Арцаха.

*Министр иностранных дел
Приднестровья В.Ястребчак
27.10.2009г.*

Այցելեցինք Արցախի Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան: Մեր տպավորությունները ցնցող են: Մեզ ծանոթացրին ցուցանմուշներին, պատմեցին թանգարանի ստեղծման դժվարության եւ նրա նպատակի մասին: Համակ ուշադրությամբ էինք լսում Վերա Գրիգորյանին:

Այստեղ յուրաքանչյուր սրահ մեծ խորհուրդ է

պարունակում իր մեջ ու բավականին գեղեցիկ էլ ներկայացված է: Այնքան լավ մտածված է ներկայացված, որ չես կարողանում հուզմունքդ պահել:

**Կոճողոտի միջնակարգ դպրոցի
X դասարան,
ուսուցչուհի՝ Դիանա Գրիգորյան
28.10.2009թ.**

Թիվ 38636 գործասի անձնակազմով այստեղ ենք՝ Արցախի անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում: Ցնցված ենք եւ...հիացած: Հույսով ու հավատով սպասում ենք նրանց վերադարձին: Խոստանում ենք՝ կանենք ամեն ինչ՝ նրանց կիսատ թողածը տեղ տալու համար:

**Ձ/մ պահպանման վաշտի 1-ին
պահպանման դասակի 1-ին պահպանման ջոկի
հրաձիգ շարքային՝
Ռոմիկ Մանուկյան
01.112009թ.**

Սրբացրիք երկիրն Արցախ,
Մեզ կյանք տվիք ազատ, անկախ,
Այսօր չկաք դուք մեր կողքին,
Բայց մեզ հետ է ձեր քաջ հոգին:

**38636 գ/մ նվազախմբի երաժիշտ
Մկրտչյան**

Я- Торосенко Валентин из Украины \ г.Донецк\ был в музее и сильно впечатлен и благодарен Вере Григорян и всем, кто занимается поиском без вести пропавших.

Пусть Бог вознаградит их за их труд и веру. Пусть люди найдутся и в семьях будет радость, благодарность Богу за то, что Он им вернул детей, братьев , отцов.

Во имя Иисуса Христа. Аминь!

01.11.2009г.

Կհիշենք ու հպարտանանք բոլոր նրանցով, ովքեր անձնվեր ու շնորհապարտ ջանքերով ազատ կյանք ապահովեցին մեզ համար: Բոլոր նրանց՝ ովքեր բռնեցին անմահության ճանապարհը...

Նրանց բոլոր՝ ովքեր կենդանի են, բայց գտնվում են մեզնից շատ հեռու՝ թշնամու ճանկերում...

Մեր շնորհակալական խոսքն ենք ուղղում այս կազմակերպությանը:

*ԱրՊՀ հունանիտար ֆակուլտետի
լրագրության բաժնի
առաջին կուրսի ուսանողներ
19.11.2009թ.*

Անչափ վիշտ ապրեցի՝ մտնելով Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան: Հագիվ զսպեցի ինձ՝ տեսնելով այն տեսաժապավենները, որոնցում անհայտ կորածների երեխաները, ծնողները, սիրելիներն ու բարեկամներն են խոսում:

Խոստանում եմ, որ հետագայում թեկուզ փոքր չափի իմ ներդրումը կունենա այս երկրի բարգավաճման մեջ:

Համբերություն ձեզ, սիրելիներս:

Նուշիկ Սողոմանյան
ԱրՊՀ ուսանողուհի
19.11.2009թ.

Ամեն անգամ այցելելով այս սուրբ վայրը, մենք կրկին ու կրկին վերապրում ենք այն դաժան օրերը: Ու ամեն անգամ լուռ խոսում ենք նրանց հետ, ասում, որ երբ էլ գան, կընդունենք գրկաբաց:

Նրանց սպասում ենք ազգովի

Վ.Զալալյան՝
վարսահարդարարական խմբի հետ
21.11.09թ.

Ես իմ զինվորների հետ մտնելով Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը, ուղղակի արցունքս զսպելով բացատրեցի նրանց, թե ինչպիսին է լինում պատերազմը իրականում....

Ես նրանց ասացի, որ ազգովի պիտի սպասենք մեր կորածներին՝ որքան էլ որ քիչ լինի մնացած հույսը:

Այս թանգարանը, կարծում եմ, սերնդի դաստիարակման լավ օջախ է, այստեղ անցկացրած մեկ ժամը փաստորեն հայրենասիրության դաս էր զինվորներին համար: Նրանք երդվեցին, որ զգոն կպահպանեն այն ընդհանուր հայրենիքը, որի համար կռվել եւ խորապես տուժել են այս տղաները:

Հրամանատար թե զինվոր՝ բոլորս պարտավորվում ենք միշտ լինել մարտական բարձր պատրաստության մեջ: Մենք կարող ենք՝ եւ անպայման արժանի հակահարված կտանք թշնամուն, եթե նա նորից համարձակվի իր քիթը խոթել սահմանից այս կողմ:

***Մայրո Միքայելյան
Թիվ 39654 գ/մ 3-րդ մարտկոցի
հրամանատար
25.11.09թ.***

Պարզապես խոնարհվել է պետք այս նկարների առջեւ եւ աղոթել տղաների վերադարձի համար:

Սպասել՝ եւ հուսալ:

Հայը պիտի ապրի...

***Մ.Զավախք
Արթուր Մինասյան
25.11.09թ.***

Ես՝ Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հիմնական դպրոցի 6-րդ «դ» դասարանի աշակերտ Բաղունց Մարատս, լինելով այս թանգարանում, շատ հուզվեցի: Էքսկուրսավարը մեզ պատմեց պատերազմում ծանր բախտի արժանացած այս զինվորների մասին: Ես կծգտեմ բարձր պահել նրանց պատիվը:

Ես՝ նույն դասարանցի Ղարախանյան Արփինես, այսօր շատ բան իմացա հերոսների մասին: Նրանք շատ արյուն են թափել, շատ են տառապել, որ մենք ապրենք կապույտ ու խաղաղ երկնքի տակ: Շատ հերոսներ են եղել, որ դեռ չեն հայտնվել, և նրանց ծնողները տխուր սպասում են նրանց: Այտեղ դիտելով «Զկրակված փամփուշտներ» ֆիլմը, ավելի լավ պատկերացրի Արցախյան ազատամարտը ու երդվեցի շարունակել հերոսների գործը:

Ես՝ Սոնաս, շրջելով թանգարանի սրահներով, հասկացա, թե ինչքան մայրեր են մինչև այսօր կարոտով սպասում իրենց որդիներին: Դա արդար չէ: Անխիղճներ, բաց թողեցեք . վերջապես, մեր ազատամարտիկներին: Ես իմացա, ինչպիսին է եղել պատերազմը, ինչու եւ ինչպես է ստեղծվել այս թանգարանը...

Ես՝ Ֆլորաս, այստեղ ծանոթացա մեր շատ ազատամարտիկների պատմությանը: Որքա՞ն են

տառապել ու դեռ տառապում նրանց մայրերը՝
ասելու բան չէ: Ես երդվում եմ միշտ վառ պահել
նրանց հիշատակը՝ միշտ հիշելով նրանց:

Ես՝ Յանաս, թեև ծնված էլ չեմ եղել պատերազ-
մի տարիներին, թանգարան գալով՝ հասկացա՝ ինչ
ասել է պատերազմ: Շատ եմ խղճում այս տղանե-
րի մայրերին, հայրերին: Տղաներ, որ գուցե քա-
ռասնամյա այր են դարձել գերության մեջ՝ աչքնե-
րը կարոտ հայրենի երկրին, հարազատներին: Նա-
եւ նրանց շնորհիվ է, որ ժողովուրդն ապրում է խա-
ղաղ երկնքի տակ:

Ես՝ Լինաս, շատ եմ ուզում, որ բոլոր անհայտ
կորածները տուն վերադառնան: Թող գուրն արթ-
նանա մեր հակառակորդի սրտում...

Ես՝ Յերմինես, գալով այստեղ, տեսնելով ամեն
մի անհայտ կորած զինվորի նկարը ու լսելով նրան
վերաբերող պատմությունը, եւ հպարտացա, եւ վշ-
տացա... Նրանց բոլորին ցանկանում եմ վերա-
դարձ: Թող էլ պատերազմ չլինի:

27.11.09թ.

Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան N 2
հիմնական դպրոցի ութերորդցիներս այսօր եղանք
զույգ թանգարանում էլ՝ զոհված եւ անհայտ կորած

ազատամարտիկների: Երանի չէ՞ր բոլոր սպասող մայրերի երազանքներն իրականանային՝ որդիները վերադառնային նրանց գիրկը:

Թող Աստված հայ ժողովրդին խաղաղություն տա, մնացյալն ինքը կանի...

01.12.09թ.

Էլ պատերազմ չլինի, էլ զինվոր չկորցնենք, էլ ոչ մի ծնողի սիրտ չցավի:

Թող զինվորը հանգիստ ու արժանապատվորեն ծառայի եւ ողջ ու առողջ վերադառնա հարազատների գիրկը:

Արման Գասպարյան
14.12.09թ.

Փառք ու պատիվ Ձեզ, տիկին Վերա: Դուք ուղղակի այս վայրը դարձրել եք սրբատեղի:

Մեր սիրտն, անշուշտ, ցավեց այստեղ, բայց հոգին թեթևացավ: Թեթևացավ այն մտքից, որ Ազատամարտի մեր պատուհասված զինվորներին մարդիկ հիշում են, ու կա մի տեղ, որտեղ կարող են ընդգծված ձեռով /այցելությանը իսկ/ արտահայտել իրենց վերաբերմունքը նրանց հանդեպ:

Դրանում անգնահատելի է Ձեր ծառայությունը:

Վ. Ջավախյան

**Ստեփանակերտի արհեստագործական
ուսումնարանի պատմության ուսուցչուհի**
14.12.09թ.

Առաջին հերթին ուզում եմ ցավակցել բոլոր այն մայրերին, ովքեր կորցրել են իրենց զավակներին: Ես ամեն անգամ տեսնելով անհայտ կորածների նկարները, մտածում եմ. ինչպե՞ս է դիմանում սրանց մայրերի սիրտը: Անորոշությունից ծանր բան չկա... Դիմացեք, շատ եք դիմացել, գիտեմք, նման դիմակայությունից մարդու սիրտ է մաշում, բայց ի՞նչ արած...

Սուսաննա Մինասյան
14.12.09թ.

Музей безвести пропавших впечатляет. Благодарен всем тем, кто приложил усилие, чтобы создать такое! Они наши ребята, им просто не повезло. Мы не должны забыть о них.

Терпения всем матерям, потерявших сыновей.

Капитан Погосян
В\ч 39590
10.12.2009

Ցանկանում եմ, որ էլ պատերազմ չլինի:
Որ էլ որդեկորույս մայրեր չլինեն:
Թող Արցախ երկրում հավերժ խաղաղություն սիրի:

Անուշ Հովսեփյան
14.12.09թ.

Այստեղ ընդհանուր միջավայրը, տղաների լուսանկարները, ամեն -ամեն ինչ ստիպում են մտովի տեղափոխվել պատերազմական ժամանակաշրջանը և զգալ այն ցավն ու բերկրանքը, կորուստներն ու հաղթանակը, լացն ու ծիծաղը, որով մի անգամ արդեն անցել ենք...

Ուզում եմ լիահույս լինել. թե անհայտ կորածներից լուր կլսենք շուտով: Դա ուրախություն կպարզևի նրանց հարազատներին եւ բոլոր հայերիս:

***Նարինե Թադևոսյան
Գավառ
16.12.09թ.***

Ցանկանում եմ, որ սա իր տեսակի մեջ վերջին թանգարանը լինի...Թող Արցախյան ազատամարտը վերջին պատերազմը լինի Հայոց աշխարհում: Որդեկորույս մայրեր, մի լացեք, ձեր որդիների շնորհիվ է, որ ապրում ենք ազատ ու անկախ Արցախում:

***Կարո Հայրապետյան
Թիվ 33651 գ/մ 5 ՀԳՄ սանհրահանգիչ
22.01.10թ.***

Մենք՝ 2 ՊՇ-ի 5 ՆԳՄ-ի նորակոչիկներս, այցելելով Արցախի ազատամարտում անհայտ կորած

զինվորների հուշաթանգարանը, երդվեցինք, որ մեր ու հետագա սերունդները կշարունակեն սրբորեն պահպանել ու պաշտպանել հայրենիքը՝ դրանով միաժամանակ ցույց տալով իրենց հարգանքը զոհվածների եւ անհայտ կորածների հասցրած արածի եւ հիշատակի նկատմամբ:

***Սերժանտ Կարեն Սաթևոսյան
22.01.10թ.***

Ահա այստեղ՝ հիշողություն ու հարգանք-խոնարհումի այս դարբնոցում է թրծվում անմահ նվիրումը առ անվախճան հավերժի, որը երկրային բոլոր աղոթքներում կոչվում է ՀԱՅՐԵՆԻՔ՝ Հայաստան Հայրենիք: Բոլորանվեր հարգանք-խոնարհումս, պատկառանքս նրանց, ովքեր անմեռ սպասումի մայրական դողդոջ թրթիռն անգամ, դարձնում են գոյամարտի և ինքնահաստատման հաղթական զենք:

***Կինոռեժիսոր Սամվել Թադևոսյան
22.02.2010թ.***

Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի բարձր դասարանի աշակերտները, զինղեկ Ս.Սարուխանյանի, կազմակերպիչ Ա.Սարուխանյանի, գրադարանավարուհի Դ.Սեժլունյանի գլխավորությամբ, այցելեցին Արցախյան ազատամարտում անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը: Հիմա ուզում ենք համբերության անսպառ պաշար

մաղթել նրանց հարազատներին՝ մինչ տղաների վերադարձը:

Թող Աստված լսի մեր ձայնը:

***Քոլորի անունից՝ Լ. Մեջլումյան
24.01.10թ.***

Ստեփանակերտի արհեստ. ուսումնարանի վարսահարդար II կուրսի և ավտո.փակ. I կուրսի ուսանողներն այցելեցին թանգարան: Կատարված է մեծ աշխատանք և հուսով ենք, որ ներկայիս սերունդը երբեք չի մոռանա հերոսներին, ովքեր գիտակցաբար մարտի դաշտ են նետվել հանուն Արցախի: Թող բոլորի տան դռները բաց ընդունեն իրենց զավակներին և կարոտ մայրերը գրկեն նրանց:

Երբեք պատերազմ չլինի:

***Ս.Գաբրիելյան
15.02.10թ***

Մենք 47 ԿՏՏ գ/մ սերժանտական ամբողջ կազմով եկանք այստեղ ու շատ տպավորված ենք ձեր թանգարանից, տղերք: Չգիտեմ էլ ինչ ավելացնեմ, ախպերներս, սիրտս տակնուվրա եղած է... Երանի վերադառնայիք ու տեսնեիք այս ամենիդ, որ ձեր պատվին է, ձեր քաշած չարչարանքների պատվին: Երանի՛ ողջ գայիք...

***Կրտսեր սերժանտ Յ. Հունանյան
15.02.10թ.***

Մենք 36534 գ/մ սերժանտական անձնակազմով այցելեցինք հուշաթանգարան եւ...չգիտեմ անգամ ինչպես ձեւակերպել մտքերս, որ զգացածս կարողանամ արտահայտել: Այդ ամենի փոխարեն թող ասեմ գլխավորը` թող տարին ձեզ վերադարձ նվիրի...

***Կրտսեր սերժանտ Մ.Խաչատրյան
15.02.10թ.***

Խոր կսկիծով ծանոթացանք ձեր անձնվեր ու անգնահատելի աշխատանքին:

Թող Աստված ապավեն լինի` իրականացնելու Ձեր նվիրական իղձը` տղաների վերադարձը:

***Ստեփանակերտի N 11 դպրոցի
9-րդ դասարան
16.02.10թ.***

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում ես ավելի շատ տեսա ուժեղ տղամարդկանց ու կանանց` չնայած իրենց բաժին ընկած ծանր բախտին...

***Լարիսա Ավագյան
16.02.10թ.***

Ցավալի է տեսնել այս նկարները: Նրանց հայացքներում ասես կարոտն ու վճռականություն

են խոսում...Նրանց կրած ու դեռ գուցե շարունակվող տառապանքը թող Տերը չտա ուրիշ մեկին: վերջին հիմարը միայն չի պատկերացնի ձեր վիճակը: Համբերեք, դիմացեք էլի, գուցե գազանին մի օր կայցելի մարդը՝ որպեսզի հասկանա, որ գերյալի հետ այդպես չեն վարվում, պատերազմն ավարտվել է՝ ուրեմն՝ նրանց բաց թողնել է պետք:

***Միեր Պետրոսյան
Ստեփանակերտի արհեստագործական
ուսումնարանի սան
16.02.10թ.***

Երանի մի օր ձեր աչքերում տեսնեմ այն ուրախությունը, սիրելիներս, այն հրճվանքը, որ ունենում է մայր՝ կորած զավակին վերագտնելուց...

Թող Աստված իրականության վերածի ձեր հույսն ու բաղձանքը: ՀՕՄ-ի Արցախի մեկուսի մասնաճյուղի անունից առողջություն և համբերություն են մաղթում բոլորիդ:

***Սվետլանա Հարությունյան
19.02.10թ.***

Առաջին անգամ չեն այստեղ, բայց ամեն անգամ ոտք դնելուց թվում է, թե ամեն ինչ նորից զգում են ճիշտ այնպես՝ ինչպես առաջին անգամ... Ես հպարտանում եմ ձեր հավատի ամրությամբ. պատերազմի մայրեր, հավատ, որ ականայից փո-

խանցվում է եւ մեզ՝ թանգարանն այցելողներին:
Տերը ձեր սրտով ձեզ տա...

Չերմինե

*ՉՅԴ Արցախի երիտասարդական միություն
19.02.10թ.*

Մտնելով ԱԿԱՅՄ հուշաթանգարան, առաջինը նկատում ես տղաների հայացքը, ու քեզ թվում է, թե նրանք հարցնում են՝ հո չե՞ք մոռացել մեզ, չմոռանաք, որ նաեւ մեր՝ սկզբում ջանքերով ու արյամբ, իսկ հետո... անհատակ ու անվերջ տառապանքով է ձեռք բերված այսօրվա խաղաղ պետության ինքնահաստատումը:

Պարտավորեցնող հայացք...

Թանգարանի յուրաքանչյուր սենյակ իր մեջ ամփոփում է հերոսների կյանքից տարբեր դրվագներ, նրանց պատկանող իրեր: Այդ ամենը բոլորիս համար թանկ է և իր մեջ կրում է մեծ իմաստ:

*Վաղիմ Դանիելյան
Լուսինե Ավանեսյան
19.02.10թ.*

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի բոլոր խմբերը փետրվարի 15-ից 22-ը այցելել են ԱԿԱՅՄ հուշաթանգարան: Նրանց աչքերում նկատվել է կսկիծ ու միաժամանակ հպարտություն: Կսկիծ՝ որ առ այսօր անհայտ են նկար-

ներից իրենց նայող տղաների ճակատագրերը, և հպարտություն՝ որ նման տղաների շնորհիվ է նաեւ պահպանվել մեր անկախությունը:

Շնորհակալություն թանգարանին՝ սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությանն աջակցելու համար: Որ դա այդպես է, կասկած չկա:

***Լ.Գևորգյան
Փոխտնօրեն
22.02.10թ.***

Ստեփանակերտի Ք.Իվանյանի անվան Ռազմա-մարզական վարժարանի 2-րդ ուսումնական վաշտի անձնակազմը ժամանել է ԱԿԱՅՍ, ծանոթացել հուշաթանգարանին: Խորին շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, տիկին Գրիգորյան, այս սրբատունն ստեղծելու համար:

Նման թանգարանը ոչ-ոքի անտարբեր թողնել չի կարող, դե, իսկ մեզ՝ զինվորականներիս մասին չարժե էլ ասել: Այն հայրենասիրության դաս է մեր հայրենիքի ներկա եւ ապագա պաշտպանների, ԼՂՀ ՊԲ սպայակազմի համար: Ասես մեզ՝ սպաներիս զգուշացնում է պատերազմում գործել այնպես, որպեսզի շարքային զինվորի եւ ընդհանրապես կենդանի ուժի կորուստ հնարավորինս քիչ լինի...

Այս հուշաթանգարանը մեր պատմության

տխուր, այո, բայց ոչ պակաս փառավոր էջերից մեկն է: Ախր մեր այդ տղաները առյուծի պես էին կռվում՝ մինչեւ այն ճակատագրական գնդակի, կամ արկի բեկորի, հարվածն ստանալը, որը նրանց նետեց մռայլ գերության գիրկը... Մենք ամեն ինչ կանենք՝ զոհվածների եւ անհայտ կորածների կիսատ թողածը շարունակելու համար, վստահ եղեք:

***Պ. Հայրապետյան
Թիվ 33907 գ/մ ավագ լեյտենանտ
22.02.10թ.***

Լինելով անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում՝ հուզմունքս ու երախտագիտությունս են հայտնում այն ստեղծողներին: Նոր ուժ ու եռանդ են մաղթում Վերա Գրիգորյանին՝ Սպասունի եւ Հիշատակի այս օջախի համար այսուհետեւ էլ չխնայի ոչինչ:

Եվ թող գտնվի մի բարերար, ով կֆինանսավորի կազմակերպության ծրագրերից մեկը՝ յուրովի նպաստելով կիսատ գործերը ավարտին հասցնելուն:

***Սասուն Առստամյան
ԱրՊՀ կ/մ 3-րդ կուրսի ուսանող
25.02.10թ.***

Օրը, երբ եղա անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում, ինձ թվում է՝ ամբողջ կյան-

քում կուղեկցի ինձ... Ծանր է իմանալ, որ այդ տղաներից ոմանց, որոնք իրենց ծնողների, հարազատների հիշողության մեջ իրոք տղաներ են մնացել, ոմանց համար մինչև հիմա էլ դեռ չի ավարտվել պատերազմը...

Այստեղ ես տխրեցի, բայց եւ հարստացա հոգով, հայրենասիրության նոր լիցքով: Շնորհակալություն Վերա Գրիգորյանին, որ գլուխ է հանել այսքան ծանր աշխատանքից: Այս թանգարանը շատ կարևոր է, քանի որ կենդանի է պահում կորած ազատամարտիկների հիշատակը:

Լայն հնարավորություններ են մաղթում մեր կառավարությանը, որպեսզի կարողանա օգնել այս եւ մյուս հասարակական կազմակերպությունների՝ գոյատևելու եւ առաջ գնալու:

***Եղիշե Ղահրամանյան
ՀՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի
անասնաբուժական II կուրսի ուսանող
25.02.10թ.***

Ինձ վրա շատ մեծ տպավորություն թողեց հուշաթանգարանը: Ես սովորում եմ Ստեփանակերտի Թ. Քամալյանի անվան բժշկական քոլեջում, ռազմաբուժակ պետք է դառնամ: Արդեն 3-րդ կուրսում եմ: Մի պահ ինձ դրեցի այս տղաների տեղ, եւ հոգիս ցնցվեց...

Շատ ծանր ճակատագիր է բաժին ընկել նրանց:

Երանի չէ՞ր որուէ մի ռազմաբուժակի հաջողված լիներ այն ժամանակ այդ վիրավոր տղաներին հանել կրակի տակից, փրկել գերությունից... Շատ ծանր խոհեր են պատում սիրտս: Ի վերջո, նրանք տառապում են՝ մնալով հայրենիքի զինվոր:

Գրիշա Հայրիյան
25.02.10թ.

Այսօր Ստեփանակերտի հ.7 դպրոցի աշակերտները «Արիության դասն» անցկացրին ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում: Հուզիչ էր եւ անմոռաց: Հայկի նորօրյա սերունդը երդվեց մեր հերոսների պայքարի շարունակողը լինել, դառնալ Արցախի ապագայի կերտողը:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանին՝ կատարած մեծածավալ աշխատանքի համար:

Ժ.Գրիգորյան, Լ.Ղարիբյան,
Ա.Բեզլարյան, Գ.Ղամբարյան
26.02.10թ.

Այսօր մենք՝ արհեստագործական ուսումնարանի սաներս, պատմության ուսուցչուհի ընկեր Ջալալյանի հետ այցելեցինք հուշաթանգարան և դիտեցինք «Արաբո» ֆիլմը: Գիշտ են ասում, որ լավ է մեկ տեսնել՝ քան՝ հազար անգամ լսել... Ցնցված ենք մեր տեսածից ու նաեւ հիմա քաջ գիտակցում

ենք, թե ինչ գնով է ձեռք բերվել խաղաղությունը:

Սրբազան պարտք ենք համարում՝ մեր պատմության արժանապատիվ կրողը լինել եւ այն անաղարտ փոխանցել հաջորդ սերնդին՝ ի հեճուկս դարավոր թշնամու:

*Մանուշ Սարգսյան, Թագուհի Մուսայելյան,
Մանուշ Մանգասարյան
Անուշ Աբրահամյան,
Գայանե Չայրապետյան,
Լիլիթ Ծատրյան
Նարինե Փարաջանյան,
Լուսինե Գրիգորյան
27.02.10թ.*

Մեծ գործ եք անում: Միայն դուք չէ, սիրելի հարազատներ մեր կորած տղաների. բոլորս ենք սպասում նրանց վերադարձին: Տա Աստված՝ երեւան մի օր...

*Արվեստաբան Կարինե Չակոբյան
եւ Ռուբեն Ավետիսյան՝
Երևանից
05.03.10թ.*

Այսօր իմ աշակերտների՝ Ստեփանակերտի հ.5 հիմնական դպրոցի XI դասարանցիների համար «Արիության դաս» անցկացրի Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում: Տի-

Կին Վերա Գրիգորյանի կատարած աշխատանքը հիացրել է մեզ: Շատ խորն ենք տպավորվել մեր հայրենակիցների ծանր ճակատագրով... Կուզենայինք, որ այս թանգարանը հավետ կանգուն մնա, որպեսզի յուրաքանչյուր ներկա սերունդ վառ պահի նրանց հիշատակը...

Ջինդել Ա.Չարությունյան
06.03.10թ.

Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի ուսանողներն այսօր եղան այս հուշաթանգարանում: Ես մի քանի տարի առաջ էլ եմ այցելել այն, բայց ինչ տեսա այսօր՝ նորովի հիացրեց ինձ: Կատարված, կասեի, դժվար ու շատ մեծածավալ աշխատանքը, որ իր մասին վկայում է սրահ ոտք դնելուց, մեծ հարգանք է ծնում մարդու մեջ այդ ամենի «հեղինակի» նկատմամբ, որ Վերա Գրիգորյանն է:

Ինչ ասենք, թող Աստված տա՝ այս թանգարանը գործի միայն խաղաղ պայմաններում, տղաներն էլ վերադառնան հարազատների գիրկը:

Կուրսդել Յ.Սահակյան
24.03.10թ.

Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան հոգու կսկիծով ես մուտք գործում,

բայց եւ հպարտութեամբ առ այն, որ մեր տղաները չխնայեցին ոչ իրենց կյանքը, ոչ ջահելությունը, ամեն ինչ տվեցին հայրենիքին, ու մինչեւ հիմա էլ դեռ տառապում են բանտերում:

Կարծում եմ, որ այցելությունն այստեղ դպրոցականների հետ այն դասերից է, որոնք մեր ուսուցիչներին ու դուստրերին հայրենասիրական ոգի են ներարկում:

***Սոս Վարդանյան
Երևանի N 50 միջն. դպրոցի տնօրեն
12.04.10թ.***

Ամեն մարդ անցնում է իր ճամփան, տանում իր խաչը: Սակայն կան մարդիկ, որոնք իրենց կատարած գործերով անմահանում են: Շնորհակալ եմք, որ դուք եղել եք: Եվ կլինեք:

***Աննա Գրիգորյան
«Երիտասարդության Կամբ»
ԵՅԿ նախագահ
12.04.10թ.***

Կրկին խոնարհումով ու երկյուղածությամբ ոտք դրեցի այս սուրբ հարկի տակ, ապրեցի հպարտության և թախծի պահեր, հուզվեցի... Բայց և լուռ ու անխոս երդվեցի տղերքի առաջ՝ իրենց սուրբ գործի արժանի շարունակողը լինել:

Հայի պայքարը հարատև է, մենք բոլորս՝ այդ պայքարի ուխտյալ մարտիկները... Փառք բոլոր ժամանակների նվիրյալ քաջերին, ինչպես նաև

տիկին Վերայի նման հայ մայրերին. նրանց ավերում է ազգիս ճակատագիրը:

Արթուր Մկրտչյան
12.04.10թ.

Ոտք դնելով այս թանգարան՝ հասկանում ես, որ ապրում ես ազատ երկրում՝ որովհետեւ քաջ են եղել նրա զինվորները: Եթե, Աստված չտա, նորից պատերազմ սկսվի, առանց պահ անգամ տատանվելու կգնան հայրենիքը պաշտպանելու...

Էդգար Ապրեսյան
Երևանի հ.50 միջնակարգ դպրոցի
X «բ» դասարանի աշակերտ
12.04.2010թ.

Կգա այդ օրը...

Արման Կարապետյան

«Երիտասարդության կամք» ԵՅԿ

լրատվության և հասարակայնության հետ

կապերի բաժնի ղեկավար

12.04.2010թ.

Հայաստանը եղել է, կա ու կլինի:

Հայաստան՝ այսինքն նաեւ Արցախ...

Ջիվան Միլիտոնյան
«Երիտասարդ երկրապահներ»-ի
փոխնախագահ
12.04.2010թ.

Այցելությունն անհայտ կորածների հուշաթանգարան մեզ վրա մեծ տպավորություն թողեց: Շատ ողջունելի է այսպիսի մեծ աշխատանքը: Տիկին Վերան ապացուցում է, որ հայր, տղամարդ թե կին, անհաղթելի է: Տա Աստված, որ կատարվեն բոլոր մայրերի երազանքները, սպասումներն իրականանան:

***Այգեստանի միջնակարգ դպրոցի
X «բ» դասարան
14.04.2010թ.***

Այն ազգը, որ չի մոռանում իր անհայտ կորած ազատամարտիկներին, իր հարատևության համար նահատակված զավակներին, կապրի նոր հազարամյակներ...Դա մեր՝ հայոց ազգն է:

Առանձնակի շնորհակալություն Վերա Գրիգորյանին՝ կատարած հսկայածավալ աշխատանքի համար:

***Սերգեյ Դալլաքյան
20.402010թ.***

Առաքինի է Ձեր մատուցած ծառայությունը, գովեստի է արժանի Ձեր նվիրվածությունը: Երբ ասում եք՝ համախմբվենք հանուն մեծ նպատակի, հավատում եմ ձեզ ու խոնարհվում... բոլորիդ առջև, մեծ վիշտը կրող մայրեր:

***Աղավնի Ստեփանյան
29.04.2010թ.***

Հարավի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների վրա մեծ տպավորություն թողեց Անհայտ կորած ազատամարտիկների թանգարանը:

Շնորհակալություն Վերային՝ տղաների հիշատակն անմար է պահում:

***Դասուէկ Ս.Սողոմոնյան
01.05.2010թ.***

Желаю Вам всяческих успехов в деле мирного разрешения межгосударственных вопросов.

***Атаян
03.05.2009г.***

Թիվ 46-994 զորամասի ՁՈՒՀԳՄ-ի անունից, կուրսանտական կազմի անունից շնորհակալություն ենք հայտնում մեր հրամանատարներին, որ մեզ ընձեռեցին այսպիսի հնարավորություն... Վերադառնում ենք զորամաս՝ շարունակելու մեր ծառայությունը հայրենիքին մի նոր ուժով ու նվիրվածությամբ:

04.05.2010

Շրջեցի բոլոր սրահներում, սիրտս նորից արյունոտվեց, նորից ցավեց, բայց...կարելորդ այն է, որ հայրենիքն ազատ է եւ անկախ, չէ՞ որ հենց հանուն դրա ծանր բախտի արժանացան տղաները...

Ուզում եմ անպայման շեշտել մի բան էլ. զարմանալ կարելի է տիկին Վերայի ուժ ու եռանդից:

Արցախահայ մայր՝ որ ցավն անթեղած հոգու խորքում, ջանում է վառ պահել ոչ միայն սեփական որդու, այլև բոլոր նրանց հիշատակը, ովքեր չկարողացան տուն դառնալ: Ջանում է, եւ դա նրան շատ լավ է հաջողվել ու հաջողվում:

***Սիրուն Բաղդասարյան
06.05.2010թ.***

Շատ խոր զգացում ապրեցինք՝ գտնվելով թանգարանում: Պատից կախված մեր հայրերի, ավագ եղբայրների նկարները մեզ ասես պատվիրում էին՝ հայրենյաց ազատության համար չխնայեք ոչինչ՝ անգամ մեր բախտին արժանանալու վտանգով... Պատվիրում են ապրել հայրենասերի գաղափարով:

Հուսով եմ, որ այն կարոտը, որով ներծծված են այս տղաների հարազատների սրտերը, մի օր հագեցում կստանա...

***46492 գ/մ սերժանտական խորհրդի
նախագահ Մարգարյան
07.05.2010թ.***

Խոնարհվում եմ Արցախի առջև:

Դուք մեր ազգի հույսը, հավատը եւ ապագան եք:

***Լևոն Չիգիլյան
Թբիլիսի
10.05.2010թ.***

Այսօր 18 զինծառայող հետախույզներով այցելեցինք թանգարան: Շատ մեծ տպավորություն ստացանք, խոր ապրումներ ունեցանք: Մենք մեզ զգում ենք պատմության զույգ կողմերում, որովհետև մեր մեջ կրում ենք ոչ միայն ներկան, այլև անցյալը, հատկապես՝ «երեկվա» օրը՝ Արցախյան պատերազմն իր հերոսական ընթացքով ու հաղթական ավարտով: Այդ հաղթանակի մեջ իրենց բաժինն են ներդրել եւ այս տղաները՝ մեր անհայտ կորած ազատամարտիկները՝ մինչ ճակատագիրը նրանց կդատապարտեր երկրորդ պատերազմի՝ անհայտության մեջ, հակառակորդի կեղտոտ ճանկերում...

Հեռակա խոնարհվում ենք նրանց բոլորի առջեւ եւ ասում՝ դուք ձեր գործն արել եք, այժմ հերթը մերն է: Հայրենիքի պաշտպանության էստաֆետը մեր ձեռքերում է, ու մենք երդվում ենք, որ աչքի լույսի պես կպահենք հայոց աշխարհները, արժանի հարված կտանք թշնամու ամեն մի որսնձգության...

Ա. Աղաջանյան
ԱՅԳՄ-ի 1 ՁՅԿ կրտսեր սերժանտ
10. 05. 2010թ.

81-րդ ԱՅԳՄ-ի կողմից ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել այս թանգարանի տնօրինությանը՝ նման գործ ձեռնարկելու համար: Դժվար է պատկերացնել, թե այս ամենն ինչպես է հավաքվել, ի մի բերվել, դասավորվել ու հիմա՝

ցուցանվում:

Այստեղ լինելով՝ մենք մեր մեջ զգացինք նախնիների անհաղթ ոգին... Ով, հայոց որդիներ, անհայտության մեջ գտնվող տղաներ, մենք մտովի խոնարհվում ենք ձեր տառապանքի առջև:

Յ. Օհանյան
Թիվ 37447 գ/մ 1274 կրտսեր սերժանտ
10.05.2010

Ամուսնուս հետ միասին այցելեցի այս հրաշք դրախտավայրը՝ Արցախ: Ափսոս, որ քիչ էր ժամանակը, տուն՝ Թեհրան մեկնելուց 2 ժամ առաջ հաջողեցինք այցելել Անհայտ կորած զինվորների թանգարանը: Խոսեցինք տիկին Վերայի հետ.... Բառեր չեմ գտնում՝ հուզմունքս արտահայտելու համար:

Թող Աստված ուժ ու կորով գումարի ձեր ունեցածին, դուք բոլորդ հերոսներ եք: Թող կորած տղաները մի օր տուն վերադառնան:

Շաքե Մնացականյան
15.05.2010թ.

Ասկերանի շրջանի Շոշի Ս.Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի IX դասարանցիները և ես դասդեկ՝ Արմինե Հարությունյանս, ներկայացանք Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան, տեսանք այն ամենը, ինչ տեղադրված է

բոլոր սենյակներում: Ապրեք, տուն չվերադարձածների հիշատակը այդպես պահել է պետք: Միշտ:

17.05.2010թ.

Բառերն ուղղակի անգոր են՝ արտահայտելու այն ապրումները, որ ունեցա ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում: Բայց այդ ապրումները ևս մեկ անգամ փաստեցին, որ մեր ժողովուրդն անմահ է: Չար ճակատագրի քմահաճույքով ենթարկվեցինք բազում զրկանքների, բայց դիմացանք, որովհետև հայրենասեր տղաներ ունենք, որոնք իրենց արյան եւ ամեն ինչի գնով պատրաստ էին պաշտպանելու հող հայրենին՝ եւ պաշտպանեցին:

Մեր գոյությամբ, մեր գործունեությամբ, այսօրվա խաղաղ կյանքով պարտական ենք եւ այս տղաներին, որ մեզ են նայում անհայտության հեռվից՝ քսան ատրի շարունակ...երազելով տունդարձի մասին: Մենք պարտավորություն ունենք նրանց հանդեպ՝ նրանց սպասելու պարտավորություն...

Մելանյա Բալայան
18.05.2010թ.

Искренне благодарен тикин Вере Григорян за огромную работу. И впредь необходимо

руководствоваться принципом «Никто не забыт- ничто не забыто».

Беспамятство не допустимо!

Валерий Газарян
Член Президиума ВС НКР
20.05.2010г.

Այս օրը՝ 2010թ. մայիսի 20-ը, մեզ համար հիշարժան կմնա: Մենք՝ Ստեփանակերտի հ.10 հիմն.դպրոցի VII «բ» և VII «գ» դասարանների աշակերտներս, մեր դասղեկների ուղեկցությամբ այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն: Միության հուշաթանգարանում սարսռեցնող կարոտ ու տառապանք տեսանք, անամոք վիշտ: Մեկ անգամ ևս համոզվեցինք, որ Արցախի ազատությունը նվաճված է շատ թանկ գնով: Ծանոթացանք անհայտ կորած ազատամարտիկների փաստաթղթերին, անձնական իրերին, միության տնօրեն Վերա Գրիգորյանի գրքերին՝ նվիրված տղաներին: Նրա բացատրությունները ցնցեցին մեզ: Իրոք, հսկայական աշխատանք կա կատարված, ակնածանքի ու հարգանքի արժանի աշխատանք:

Գլուխ ենք խոնարհում Ձեր եւ մյուսների սապատումի առջեւ, տիկին Գրիգորյան:

Դասղեկներ՝
Ն.Պողոսյան, Լ.Սարգսյան, Վ.Չայրումյան

Այսօր 7 հոգով այցելեցինք ԱԿԱՅՄ թանգարան: Խոսք չենք գտնում ասելու: Շնորհակալություն Վերա Գրիգորյանին՝ այսպիսի «սրբավայր» ստեղծելու համար...

*ԱրՊՅ հունանիտար ֆակուլտետի
պատմության բաժնի I կուրսի ուսանողներ
20.05.2010թ.*

Ավարտեցինք միջնակարգը... Որոշեցի լինել ԱԿԱՅՄ հուշաթանգարանում՝ եւ ահա այստեղ եմ: Հուզված եմ անչափ... Նրանք նկարներից մեզ հուշում են, որ բարձր պահենք ազատագրված հայրենիքի պատիվը: Խոստանում ենք: Կլինենք մեր նորանկախ երկրի նվիրված քաղաքացին:

Արցախ աշխարհին՝ մշտական խաղաղություն: Թող տղաները տուն գան, եւ այս թանգարանը դառնա լոկ անցյալի հուշ... Հուսով ենք, որ մի օր միասին կդիմավորենք անհայտ կորած մեր ազատամարտիկներին:

*Մարիամ Դանիելյան
Ստեփանակերտի հ.12 հիմն. դպրոցի
չրջանավարտ
21.05.2010թ.*

Впервые я посетила Армению. Здесь мне очень понравилось. Когда папа сказал, что есть Музей памяти, меня наполнило волнение.

Когда же я увидела ее - увидела здесь фотографию моей бабушки \она была медсестрой\, почувствовала и горе, и радость. Горе- потому что бабушку я никогда не видела... и радость- потому что добрые, отзывчивые люди не забывают тех, кто пропал без вести в те страшные годы войны.

Я хочу выразить огромную благодарность тем, кто создал этот музей.

*Надя Акопян
Внучка Багдасарян Нади*

Անյայտ կորած ազատամարտիկների հարազատների միության թանգարանն այցելելով՝ Լոս Անջելեսի Հալիվուդ քաղաքի «Ռոզ և Ալեք Փիլիպոս» վարժարանի 11-րդ կարգի աշակերտները խիստ տպավորուեցան մեր կորած ազատամարտիկներից մասունքները դիտելով և ձեր պատասխանների օգտակար բացատրությունները լսելով:

Սրտի խորքից մաղթում են, որ բոլոր կորած ազատամարտիկները ողջ և առողջ վերադառնան իրենց սպասող ընտանիքների գիրկը:

26.05.2010թ.

Այսօր իմ կյանքում մեծ շրջադարձ կատարվեց, ես հասկացա, թե ինչ է հայրենիքը, հայոց հողը... Թե ինչքան թանկ է այն:

Քեզ եմ այցի եկել, հայ զինվոր, որ հիմա տառապում ես անհայտության մեջ... Քո, նաեւ քո, մղած մարտերի շնորհիվ է, որ այսօր ազատ քայլում ենք Արցախի սուրբ հողի վրայով: Նաեւ դու չթողեցիր, որ թուրքը պղծի այն իր անօրենն ներկայությամբ, գողի իր շնչով: Շատ ծանր բախտ վիճակվեց քեզ, բայց դու տոկա, դիմացիր էլի, եթե դեռ ողջ ես...Իսկ մենք հույս ենք պահում, որ ողջ ես: Դիմացիր, գուցե մի օր, այնուամենայնիվ, կժպտա բախտը քեզ: Ձեզ, տղաներ՝ մեր ավագ եղբայրներ:

Հենրիկ Ադամյան
38636 գ/մ ուսումնական դասակի
ՕՍՍ.ԱԿ ջոկի հրամանատար
26.05.2010թ.

Յանուն հայրենեաց:

Հարգանք ու պատիվ Ձեզ, իմ սիրելի արցախահայեր:

Մեծ նպատակի համար մեծ զոհաբերություն եք արել: Մեր անհայտ կորած ազատամարտիկների համար այս թանգարանը յոյս ու հավատի վկայություն է...

Ծ.ՍԱԳՍԵԱՆ
27.02.2010թ.

Գնալ այնտեղ, որտեղ մեզ են սպասում,
Լինել այնտեղ, որտեղ մեր կարիքն են զգում:

Խոստանում ենք՝ կժառայենք,
Քաջարի մարտիկ կլինենք:

**Թիվ 34-153 գ/մ նորակոչիկ- շարքային
Ալեքսանդր Հարությունյան
23.06.2010թ.**

Ծառայել հայրենիքին՝ մեծ պատիվ է: Պարտավորվում ենք անձնվիրաբար ծառայել նրան , քանի որ մարդու համար ամենաթանկ արժեքը հայրենիքն է, մայր հողը: Այս նկարների առջեւ կանգնած՝ երդվում ենք մեկ անգամ եւս...

**Ս. Ղաղիմյան
Թիվ 34-153 գ/մ շարքային
24.06.2010թ.**

Давайте молим Бога, чтобы он подарил освобождение нашим братьям и сестрам.

И дай Бог, чтобы все те погибшие из их числа, имена которых нам еще не известны, были опознаны.

**С благодарностью и почтением
к коллективу музея
Майор Г.Петросян-
от имени военнослужащих в\ч 34153.
25.06.2010г.**

Բազմիցս մտնելով հուշաթանգարան՝
հիշում եմ...
զգում ...
վերապրում ...
տառապում ...
կարոտում ...
և անվերջ

ՍՊԱՍՈՒՄ ՈՒ ՍՊԱՍՈՒՄ:

**03.02.1992թ. մարտում անհայտ կորած
Նորիկ Մուրադյանի կին՝
Լիանա Մուրադյան
26.06.2010թ.**

Ես Գոռ Օհանյանի մայրն եմ և բազմիցս մտնե-
լով այս թանգարանը՝ հազիվ եմ կարողանում ինձ
տիրապետել... Թող ոչ մի մայր էլ սև չհագնի, թող
այլևս ոչ մեկը մեր բախտին չարժանանա: Չեմ ու-
զում, որ մայր լացի:

**Սոնա Փաշինյան
26.06.2010թ.**

Վերա, միշտ այդպես պինդ մնա, առողջ եղիր և
գործիր:

**Ռինա Առաքելյան
ՀՀ «Անհայտ կորած ազատամարտիկների
հարազատների խորհրդի» նախագահ
26.06.2010թ.**

Այսօր վերջապես, երկար տարիների բաժանու-
մից հետո, նորից հայրենիքում եմ եւ այցելել եմ
այս հուշաթանգարանը... Այն ինձ համար հատուկ
նշանակություն ունի: Թող ամեն ինչ բացատրի այս
իրապատում բանաստեղծությունը, որ նվիրում եմ
պատերազմում անհայտ կորած մորս կամ... գուցե
արդեն հիշատակին.

Քո նկարով քեզ վերհիշում`
Դեմքդ եմ տեսնում, հայացքդ ջերմ...
Հիմա հաստատ
ճերմակ եմ մազերը քո,
Իսկ հայացքդ` դարձել փշուր...
Ասա, ի՞նչն էր պատճառը,
Որ դու մնացիր տանը.
Երբ Դովրա Խութից
Ծուխն էր բարձրանում
Թանձր քուլաներով.
Այնտեղ վառվում էր
Իմ հայրական տունը...
Սև դարձավ մայիսի
10-ի այն օրը..
Գազանը ճանկեց
Քեզ և քո մորը...
Երբ, չկորցնելով
Վայրկյան ու թուփ`
Փախչում էին բոլորը,
Ասա, ասա` ինչու
Գյուղում մնացիր այդ օրը:

*Անվերջ սպասող` Ալինա
29.06.2010թ.*

Մղկտում է բոլորիս սիրտը: Վաղուց մեր տղաները դեգերում են անհայտության մեջ, վաղուց նրանք մեր կողքին չեն, բայց միշտ մեզ հետ են, մեր հաց ու ջրի, մեր ապագայի մեջ...

Խոնարհվում ենք ձեր առաջ, սպասումի ու կարոտի հիվանդներ:

Սպասում` եւ հավատում ենք, որ կգաք...

Ն.Հոռաթաղի միջն.դպրոցի տնօրեն

Մ.Դավթյան

եւ ուսուցչական կոլեկտիվ

30.06.2010թ.

Մենք` 30.043 զ/մ զինվորներս, խոր հուզմունք ապրեցինք` լսելով պատմությունները պատերազմում անհայտ կորած մեր զինվորների մասին, տեսնելով նրանցից յուրաքանչյուրին ներկայացնող ցուցանմուշներն ու մյուս մասունքները:

Ադրբեջանը շարունակում է դաժան քաղաքականություն վարել, բայց հիմա էլ ոչնչի չի հասնի: Մենք միշտ ուժեղ կլինենք, որպեսզի ցույց տանք ամբողջ աշխարհին, որ ծնվել ենք ոչ միայն արարելու, այլեւ մեր ստեղծածը պաշտպանելու համար...

01.07.2010թ.

Մինչեւ որ վերջին անհայտ զինվորը չվերադառնա, մենք չենք հանգստանա: Աստծո զորությունով ու մեր հավատով, մեր անհատնում սիրով ու համբերությամբ սպասում ենք ձեզ, մեր թանկ եղբայրներ, մեր ազնիվ նվիրյալներ:

Ազատագրված Արցախը ձեզ է սպասում՝ հաղթական պատերազմի վերջին զինվորներին, որոնց տունդարձով կխաղաղվեն սպասողների սրտերը:

Ձեզ եւ այդ օրվա համար աղոթողն եմ, սիրելիներս...

***Անահիտ Իշխանյան
Արվեստագետ
Բնակության վայրը՝ Ամերիկա
07.07.2010թ.***

Դժվարանում եմ շարադրել ապրումներս...

Մեր խմբի անունից շնորհակալություն ենք հայտնում թանգարանի տնօրինությանը՝ կատարած աշխատանքի համար:

Մնում է կոչ անել ողջ հայությանը. «Եթե դու հայ ես, ու մեռած չէ քո մեջ ոգին նախնյաց, հիշիր, որ մայր լեռդ գերության մեջ է...Գերության մեջ են եւ հայոց հայրենահավաքի համար տառապանքի դատապարտված մեր տղաները...Հիշիր եւ միացիր մեզ»:

***Անուշ Պողոսյան
Ք.Արմավիր /ՀՀ/
08.08.2010թ.***

Հույս և աշխատանք՝ և կգա ժամանակը, երբ կազատվեն մեր ողջ հայրենիքն ու նրա բոլոր տառապյալները: Կջարդենք կապանքները, առաջ կընթանանք անգիջում պայքարով... Դեպի Երզրանքի լեռը՝ դեպի մեծ հայրենահավաք: Պետք լինի՝ կզոհվենք, պետք լինի՝ բանտերից չենք սարսափի, միայն՝ առաջ, միայն՝ դեպի հաղթանակ:

*Վահրամ Միրաքյան
«Վարդանանք» ռազմահայրենասիրական
դաստիարակության ակումբ
08.07.2010թ.*

Невозможно приехав в Степанакерт, не посетить этот музей! Ведь это часть истории Карабаха...

Да, не самые светлые страницы этой истории, но жители Карабаха и гости НКР должны знать о том, какой вклад внесли эти доблестные парни за независимость Арцаха, прежде чем судьба отвернулась от них.

Впечатлены тем, какую огромную и кропотливую работу проделали сотрудники музея, а главное- видно, что все это сделано с огромной любовью.

Спасибо Вам огромное.

*С уважением
Армен Акопян
Дмитрий Шохин
22.07.2010г.*

Անյայտ կորած ազատամարտիկներ, ձեր յիշատակը հայտնի է մեր բոլորի սրտերում: Ապրում էք դուք դեռ ամեն մի հայի հոգու ու սրտի մեջ:

Յարգելի մայրեր, դուք իսկական հերոսներ էք ծնել, առյուծ Մհերի արժանավոր զավակներ: Սփյուռքը, Չայաստանն ու Արցախը քալելու է ձեր ճամփով:

Երախտապարտ ենք ձեզ, անմահ հերոսներ:

***Երիտասարդական ճամբարի մասնակից
Պեյրուբահայ աշակերտներ
22. 07.2010թ.***

Անյայտ կորած ազատամարտիկներ, այսօր մենք կը գտնվինք Արցախ, Ստեփանակերտ: Լիբանանեն եկած ենք տեսնելու մեր հայրենիքը, մեր Ազգն ու ժողովուրդը և ապրելու ենք իրենց նման, տեսնելով այս թանգարանի պարունակութիւնը, մենք երդում կուտանք այսօր աշխարհիս առջև՝ թէ մենք պիտի մնանք Արցախի կողքին, պիտի չմոռանանք նահատակները, այլ պիտի շարունակենք քալել սուրբ նահատակների ճամփով: Կեցցէ Չայ ժողովուրդը և Արցախը, կեցցէ մեր սուրբ ֆետայիները, որոնք նահատակուած էն հայրենիքի սուրբ հողին պաշտպանելու համար:

Սիրելի մայրեր, մենք սրտանց Ձեզ հետ ենք և ձեր կողքին, պահպանելով ձեր հարազատների,

Կորստի ցավը մեր սրտում ևս: Ձեր աշխարհը հիանալի է և վստահ ենք, որ ուր էլ լինեն ձեր հարազատները, հպարտ պիտի լինեք ձեր արած տքնաջան և գերազանց աշխատանքներով:

Յարգանք ձեզ, որ ծնել եք քաջարի զավակներ:

***Պէրուբեն մի խումբ աշակերտներ
22.07.2010թ.***

Мы не живем в Карабахе, но здесь наши корни и здесь вся наша гордость. Мы очень рады приезду и с удовольствием посещаем все, что связано с нашей Родиной. Невозможно было не посетить этот музей! Ведь он связан с болью нашей Родины!

Спасибо всем, кто воевал, кто сделал нашу землю свободной, тем, кто об этом помнит. Огромное спасибо основателям этого музея.

***Այկուш, Нуне, Арпине,
Յժիկ և Վերա
30.07.2010Զ.***

Միտելի մայրեր, մենք ամբողջ սրտով և հոգով ձեզ հետ ենք և ձեր կողքին: Կիսում ենք ձեր վիշտը:

***Ջավախքի
տիկնիկային թատրոնից՝
Ա.Նահատակյան
Ա.Իրիցյան
09.08.2010թ.***

Ձեր վիշտը նաև մերն է:
Թող Աստված ձեզ վարձատրի ձեր համբերու-
թյան համար...

**Մարինե Փայտյան`
ՀՀ ոստիկանությունից
10.08.2010թ.**

Այո, մեր վիշտը սահման չունի, մենք ալ ձեզի
հետ յույսով կըսպասենք...

Աստծոյ ուժ` և թող ձեզի հետ ըլլայ:

**Վիլմա Գույումճեան
10.08.2010թ.**

Կըշնորհակալիմ տիկին Վերային, իր աշխատա-
կիցներուն` այս ռումբի նման դանգարանին, աշ-
խարհի ամենէն դիպիչ տեղն է, որ մարդ իր կեան-
քին իմաստը կը հասկընայ...

**Վաչե Տեմիրճեան
10.08.2010թ.**

Շատ մեծ հոգի պիտի ըլլայ, վոր կրնայ այս
կյանքին պայգարը դիմանայ: Շատ մեծ մայր էք
դուք: Հոյս և կյանք:

**Լ.Թաճիրյան
10.08.2010թ.**

Շատ տպավորված ենք Անհայտ կարած ազա-
տամարտիկների թանգարանն այցելելուց: Վե-
րապրեցինք անցածը... Անցածը, որ, ցավոք, անց-

յալ չէ այս տղաների համար. նրանք դեռ տառապում են, պատերազմը դեռ շարունակվում է նրանց կյանքում... Բոլորիս պարտքն է, որ ուժեղ ու հաստատակամ մնանք, պահպանենք մեր հողը:

ՀՅԴ «Քրիստափոր» պատանեկան կազմակերպության անդամները շնորհակալ են այս թանգարանի անձնակազմից՝ ստեղծածի համար:

**ՀՅԴ ՔՊԿ պատասխանատու՝ Սարմեն Սարտոյան
եւ ՀՅԴ ՔՊԿ-ի պատանիներ
Օգոստոս, 2010թ.**

Շարունակեցեք այս գործը: Ձեր աշխատանքը կարելի է՝ հայ ազատամարտիկներուն չնոռնալու համար:

Կեցցե՛ հայ ժողովուրդը ու փառք հայ պաշտպաններուն:

**Ակոսօիկ Անաքեան
Նորտոպու /Արկենդինա/
13.08.2010թ.**

Ղարաբաղցիներիդ ցավը ծանր է: Երբեք չի մոռացվում այն, եւ այդ մասին հիշում ես ահա այստեղ՝ այս թանգարանում: Շնորհակալ լինենք այն մարդկանց, ովքեր մեզ հիշեցնում են պատերազմում տարած հաղթանակի... գինը:

Հիշել՝ ու գործել:

**Աստղիկ Սարգսյան
17.08.2010թ**

Երբ սպասում ես՝ վայրկյանը տարի է թվում...
Բայց սպասել պետք է:

**Ամարաս, Մանաշիդ,
Լորենտա և Ժուլիա
Մեհրարյաններ
Թեհրան
23.08.2010թ.**

Спустя 16 лет, я снова здесь- на моей исторической родине. Очень горжусь своим смелым народом, сумевшим отстоять свои права и земли. Это вызывает гордость.

Находясь в музее без вести пропавших азата-мартиков, я вижу, сколь дорого обошлась моему народу победа ... Хочу, чтобы горе и беды впредь обошли его стороной, ибо он больше всех достоин мира, покоя, процветания.

**Արտյոնյան Դեգամ
Ազաբեկյան Լուսինե
24. 08. 2010**

Սիրով մտանք անհայտ կորած ազատամարտիկների թանգարան: Հոգու պարտք է ուղղակի...Թանգարանի տնօրենը մեծ ջանքեր է ներդրել:Այստեղ պատերն էլ են անգամ գոչում՝ ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվում:

**Կիմ Գլոյան
Նախկին ազատամարտիկ,
Կոտայքի մարզի ԵԿՄ խորհրդի նախագահ
25.08.2010թ.**

Մեր ընտանիքը հավատով ու սուրբ աղոթքով է մտածում, որ մի օր մեր անհայտ կորած եղբայրները, հայրերն ու որդիները կվերադառնան տուն:

Մեր պարտքն ենք համարում դաստիարակել և կրթել հայրենիքին նվիրված զավակներ, որոնք արժանապատվորեն կշարունակեն ավագ սերունդների կիսատ մնացած գործը...

Գյուրջյաններ

Երևան

27.08.2010թ.

Ցնցված ենք այս ամենով... Աննկարագրելի զգացմունքներ ունեցանք՝ տեսնելով Վերա Գրիգորյանի աշխատանքի արդյունքը: Ցավով ու տառապանքով ենք հիշում մեր զոհվածներին եւ անհայտ կորածներին: Հուսով ենք, որ ապագա սերունդը չի մոռանա նրանց և պատվով կպահի այն, ինչը նրանք արյան գնով ձեռք են բերել:

Եվ տա Աստված, որ էլ երբեք չունենանք որդեկորույս մայրեր:

Միշտ ձեր կողքին՝

ԵԿՄ Երիտասարդ Երկրապահներ

Կարեն Սկրտչյան, Հասմիկ Աբրահամյան,

Վաչիկ Հովսեփյան, Էմմա Միքայելյան,

Գարիկ Մահտեսյան

02.09.2010թ.

Այսօր՝ սեպտեմբերի 21-ին ուսուցչական և աշակերտական կոլեկտիվներով եղանք Արցախի անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում: Կազմակերպված էքսկուրսիան շատ մեծ տպավորություն թողեց և աշակերտների, և ուսուցիչների վրա: Այն մի ուրույն դաս էր բոլորիս համար: Խորին երախտագիտություն ենք հայտնում հուշաթանգարանի տնօրինությանը՝ ի դեմս Վերա Գրիգորյանի:

***Կարմիր գյուղի Գր. Ավետիսյանի անվան
միջնակարգ դպրոցի կոլեկտիվ
21.09.2010թ.***

Երևանի Գրիգոր Զոհրապի անվան թիվ 43 դպրոցի կողմից շնորհավորում ենք բոլորիդ Սեպտեմբերի 21-ի կապակցությամբ: Շնորհակալություն ենք հայտնում հուշաթանգարանում մեզ ընդունելու համար: Հեռանում ենք մեծ տպավորություններով և արցունքն աչքներիս:

Մաղթում ենք ձեզ ուժ ու կորով:

***Քասոյան, Առաիկյան, Գևորգյան, Ապետյան
21.09.2010թ.***

«Սոսե մայրիկ» բարեգործական հիմնադրամի անունից, հիմնադրամ, որը 6 տարի է՝ համագործակցում է ԼՂՀ ԱԿԱՅՍ հետ, շնորհակալություն Վե-

րա Գրիգորյանին՝ ազնիվ ու արդյունավետ ջանքերի համար:

Մարիամ Ստեփանյան
21.09.2010թ.

Մեծ ցավ ու կորուստ է պարփակված այս թանգարանում, բայց քանի դեռ ապրում են տղաների մայրերը, հարազատները, հայ ժողովուրդը, կլինեն եւ իրենք՝ տղաները. ով՝ կենդանի, ով՝ անմեռ հիշատակով...

Թիվ 39138 գ/մ զինծառայողներ
28.09.2010թ.

Հայրենիքի համար արյուն թափած այս տղաների հիշատակն է հավերժացնում այս գողտրիկ անկյունը՝ թանգարանը, որ մեզ մտքով տեղափոխում է ռազմի դաշտերը...

Ոչ, մենք չենք կորցրել այս քաջորդիներին, նրանք մեզ հետ կլինեն՝ քանի դեռ կանգնած կմնանք /իսկ մենք դա հաստատ կանենք/ նրանց ազատագրած հողի վրա...

Թիվ 25918 գ/մ սերժանտական խորհուրդ

Սպասում ենք, դուք պետք է վերադառնաք: Մեկիդ որդին է սպասում, մեկիդ՝ սիրածը, իսկ ամե-

նից շատ՝ ձեր մայրերը, տղաներ...Սպասում ենք մենք՝ հայ ժողովուրդը:

***Ասկերանի շրջանի Խնապատի
միջնակարգ դպրոցի ուսուցիչներ,
աշակերտներ, ծնողներ
01.10.2010թ.***

Տպավորություններն անկարագրելի են: Մաղթում ենք բոլոր մայրերին, որ նրանց տղաները շուտ տուն վերադառնան:

***Ստեփանակերտի Գյուղատնտեսական
քոլեջի սաներ
07.10.2010թ.***

Այսօր՝ հոկտեմբերի 13-ին Ք.Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի առաջին կուրսի սաներն այցելեցին ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների թանգարան: Տպավորությունը մեծ էր:

Տխրությունը չի կարող հաղթել մեզ: Եթե հայրենիքին վտանգ սպառնա՝ պահանջվող յուրաքանչյուր մեկի տեղ երկուսը կլրացնեն՝ խտացնեն շարքերը...

***Ս. Ստեփանյան
Յ.Բաղդասարյան***

Ձեր՝ պատերազմում անհայտ կորածներիդ ցավը բոլորիս սրտերում է: Բայց այդ նույն պատե-

րագնը համայն աշխարհին ապացուցեց, որ մոլորակի մի փոքրիկ տարածքում ապրում է քաջ ու աննկուն մի ժողովուրդ՝ հատվածներից մեկը հայ հնադարյան ազգի, որ չուզեց մեռնել եւ իր լավագույն զավակների մարտիրոսությամբ ու սխրանքով կերտեց հաղթանակ...

Տպավորված են թանգարանում կատարված աշխատանքով:

***Արրիկ Գրիգորյան
Կենսաթոշակառու
գ. Դաղորտի
13.102010թ.***

Անհայտ կորած ազատամարտիկների անձնական իրերը տեսնելով՝ մեզ թվաց, թե մոտիկից գիտեինք նրանց, թե ինչ-որ մի ժամանակ շփվել ենք նրանց հետ...

Դա մի այնպիսի անբացատրելի եւ թանկ զգացում է... Բառերը չեն հերիքում՝ բացատրելու համար:.

***Ա.Թորոսյան
Ք.Իվանյանի անվան
ռազմամարզական վարժարանի
2-րդ կուրսի սան***

2010թ. հոկտեմբերի 15-ին մեր պատմության ուսուցչուհի Ջալալյանի հետ այցելեցինք ԱԿԱՅՍ հուշաթանգարան: Ուղղակի ցնցված ենք...Այս այ-

ցելությունից ասես մի ուրիշ կերպ մեր գիտակցու-
թյանը հասավ՝ թե ինչ ասել է հայրենիքի սեր...

***Ստեփանակերտի արհեստագործական
ուսումնարանի սաներ***

Մենք՝ Ստեփանակերտի հ.7 հիմնական դպրոցի
VI «ա» դասարանի աշակերտներս, այցելեցինք
թանգարան: Տեսանք Արցախյան հերոսամարտում
անհայտ կորած ազատամարտիկների լուսանկար-
ները եւ այլ մասունքներ: Ինձ շատ դուր եկավ այն,
որ թանգարանում մշտամնա պատվո պահակ են
կանգնած երկու «զինվոր»... Այո, մենք չպետք է մո-
ռանանք նրանց, պիտի բարձր պահենք նրանց
հիշատակը:

***Աննա Սահակյան
16.10.2010թ***

Այս «դասղեկական ժամը», կարծում եմ, հաճախ
կհիշեն աշակերտներս, քանզի այն դազմահայրե-
նասիրական դաստիարակության օրինակ ծառայեց
նրանց... Անհայտ կորած ազատամարտիկների հուշ-
աթանգարանում նրանք ցուցանմուշների միջոցով
փաստորեն ծանոթացան մեր հերոսամարտի շատ
դրվագների, «Մահ իմացյալ անմահություն է» նշա-
նաբանով մատիրոսացած զինվորների լուսանկար-
ներին, նրանց պատվոգրերին, ձեռքի աշխատանք-
ներին, հուշամատյաններին, Արցախ-Հայաստան-
Սփյուռք եռամիությունն արտացոլող լուսանկարնե-
րի: Երեխաներին շատ դուր եկավ ֆիլմադարանը,
ինչպես նաև փառքի սրահն ու պատից կախված

ինքնաշեն զենքերը, որոնք Արցախյան գոյապայքարի առաջին փուլում պատրաստել էին լուսանկարներից նայող տղաները... Երեխաները խոստովանեցին, որ առաջին անգամ են տեսնում նման զենք:

Նրանք արտասանեցին հայրենասիրական բանաստեղծություններ, պատվո պահակ կանգնած «զինվորների» կողքին իրենք էլ պատվո պահակություն ստանձնած՝ երդվեցին լավ սովորել՝ հայրենիքին պիտանի մարդ դառնալու համար: Խոստացան մեծանալուց դառնալ Արցախ աշխարհի պաշտպանները, իսկ այժմ գրել օրինակելի շարադրություն՝ «Ես քեզ սիրում եմ, իմ հայրենիք» թեմայով:

***Լ.Բաբայան
Ստեփանակերտի թիվ 7 դպրոցի
6-րդ «ա» դասարանի դասուցի
16.10.2010թ.***

ԼՂՀ ԱԿԱ հուշաթանգարանը Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի համար ասես սրբատեղի է ... Յուրաքանչյուր հայի պարտքն է հիշել ու մեծարել զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը: Մենք այսօր նրանց շնորհիվ ենք հպարտ քայլում, ապրում, արարում: Մեծահոգի ու հերոս մայր է տիկին Վերա Գրիգորյանը: Թող Աստծո աջը միշտ պահապան լինի նրան եւ իր բախտակիցներին:

***Իրինա Ղարախանյան
դպրոցի կազմակերպիչ
23.10.2010թ.***

Ստեփանակերտի 7-րդ դպրոցի 7-րդ դասարան-
ցիներս վաղուց էինք ցանկանում լինել մեր թան-
գարաններում: Եվ ահա այսօր ի կատար ածեցինք
այդ ցանկությունը: Մեզ ցնցեց Անհայտ կորած
ազատամարտիկների հուշաթանգարանը: Ինչ լավ
է, որ ստեղծվել է նրանց հարազատների սպա-
սումն արտացոլող, եւ ինչու միայն նրանց՝ բոլորն
են ցանկանում ու սպասում նրանցից մի բարի լու-
րի, ահա այդ սպասումն ու տղաների բարի հուշն
արտահայտող այս օջախը:

Հուզմունքով էինք լսում տիկին Վերա Գրիգորյա-
նի բացատրությունները:

Հեռանում ենք՝ ամեն մեկս մեր հոգու մեջ աղո-
թելով նրանց կյանքի ու ազատության համար:

23.10.2010թ.

Հաղթութի շրջանի Ուխտաձորի Արթուր Մկրտչ-
յանի անվան միջնակարգ դպրոցի VII և IX դասա-
րանների աշակերտներիս փոքրիկ երազանքներից
մեկը կարծես իրականացավ: Եկանք Ստեփանա-
կերտ ու ծանոթացանք անհայտ կորած մեր հայ
ազատամարտիկների հուշաթանգարանին:

Տիկին Գրիգորյանը պատմեց նրանցից շատերի
անցած մարտական ուղու մասին, բացատրեց
նրանց վերադարձին խանգարող հանգամանքնե-
րը: Տխուր է ու ցավալի, բայց համբերել ու դիմա-
նալ է պետք, գուցե երբեւէ մի լույս կծագի... Շատ

անխիղճ ու պիղծ է մեր հակառակորդը, ախր նորմալ երկրներում պատերազմն ավարտվելուց վերադարձնում են գերիներին...

Թող հրաշք կատարվի՝ տառապածները տուն վերադառնան:

Գ.Բալայան
IX դասարանի աշակերտուհի
4.12.2010թ.

Ես շատ էի ցանկանում ներկայանալ, տեսնել ու զգալ այս ամենը: Շատ տպավորված եմ եւ այնքան կցանկանայի ինչ-որ բանով օգտակար լինել թանգարանին...

Սպասենք մեր անհայտ կորածների վերադարձին:

Ռ.Բաբայան
Հաղորդքի շրջանի Ա.Սկրտչյանի անվան
Ուխտաձորի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի
4.12.2010թ.

Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի թարգմանչական 3-րդ կուրսի ուսանողներս, դասախոս Նիք Վազների ուղեկցությամբ, այցելեցինք անհայտ կորած ազատամարտիկների թանգարան, ծանոթացանք նրանց կենսագրություններին, մարտական կյանքի մասին պատմող որոշ դրվագների եւ, ի վերջո, նրանց բաժին ընկած տխուր ճակատագրին:

Թող Աստված խնայի նրանց, որվքեր դեռ կեն-

դանի են, նրանք հանուն հայրենիքի են տարինե-
րով չարչարանք կրում:

Գոհար և Անահիտ
13.12.2010թ.

Վաղուց էինք ծրագրել լինել այս թանգարանում:
Ինչքա՛ն աշխատանք կա կատարված...

Մեր հուզմունքը զսպել չենք կարողանում: Ան-
գամ մտովի նախատում ենք մեզ, թե ինչու՞ մինչև
հիմա անծանոթ էինք այս օջախին՝ սրբազան ու
պարտավորեցնող...

Տղաներ, դուք միայն ֆիզիկապես եք բացակա-
յում այստեղից, հոգեպես մեզ հետ եք, հավատա-
ցեք, մեր սրտերում: Չնայած անհայտ են ձեր ճա-
կատագրերը, երկուստեք հուսանք, որ ի վերջո
տուն կգաք....

Մի խումբ սոսեցիներ
27.12.2010թ.

Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար
քոլեջի «Թարգմանություն և գործավարություն»
բաժնի ուսանողներս եղանք այստեղ՝ Անհայտ կո-
րած ազատամարտիկների հուշաթանգարանում:
Դժվար է հանգիստ նայել տղաների նկարներին:
Նրանք ասես կշտամբում են՝ ինչու՞ մի բան չեք
ձեռնարկում մեզ գեհեցից հանելու հա-
մար...Ավա՛ղ, շատ անմարդկային հակառակորդ է

տվել մեր երկրին Աստված... Եթե նրանց համար ոչինչ անել չենք կարող, գոնե գիտակցենք մեր պարտքը հայրենիքի նկատմամբ: Երդվում ենք. այն կպահպանենք աչքի լույսի պես:

Մեր չարչարանաշատ, բայց հարգանքի արժանի պատմությունը, բազում թշնամիների դեմ տարած մեր պայքարի պատմությունը ուժ է տալիս մեզ, դա ապացուցեց Արցախյան պատերազմում տարած մեր հաղթանակը:

Այս տղաներն էլ այդ հաղթանակի մի մասն են... Չմոռանանք դա:

27.12.2010թ.

Այստեղ մենք ասես վերապրեցինք պատերազմը: Մեր ծնողները, ուսուցիչները շատ են պատմել նրա մասին, ներկայացրել իրենց ապրումներն այն տարիների...

Մենք միշտ կհիշենք մեր հերոսներին: Նրանք իզուր չեն արյուն թափել: Կա հաղթանակը, կա ու կլինի ազատ ու շենացող հայրենիքը: Ուրեմն՝ թող լինի նաեւ նրանց մշտամնա հիշատակը մեր սրտերում:

**Մարտակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցի
6-րդ դասարանի աշակերտներ
28.12.2010թ.**

Սրտի կսկիծով ենք նայում թանգարանի ամեն մի մասունքի, որն աչքի լույսի պես է պահում նրա հիմնադիրը՝ անհայտ կորած ազատամարտիկ

Սպարտակի մայր՝ Վերա Գրիգորյանը: Նայում ես այս տղաների՝ քաջ ու արի զինվորների նկարներին ու քիչ է մնում խեղդվես սեփական շնչից... ճակատագիրը շատ դաժան եղավ նրանց հանդեպ: Բայց ի՞նչ կարող ես անել, պատերազմն առանց դրա չի լինում...

Տղերք ջան, Աստված տա՝ տուն գաք, տեսներ ձեր թափած արյան գնով ձեռք բերվածը: Ազատ ու անկախ չքնաղ Արցախը... Մենք, որ այսպես հիացած ենք նրանով, պատկերացնում ենք, թե որքան եք կարոտում նրան... Ձեր մայրերը երկնքով թռչող հավքերին են անգամ հարց տալիս՝ մեր որդիներից խապրիկ մը չունի՞ք... Սպասում ենք ձեզ, մեր անուշ տղերք:

***Սուսաննա և Եղիշե Գալստյաններ՝
Արցախում ժամկետային ծառայության
զինվոր Սեդրակ Գալստյանի ծնողներ
12.01.2011թ.***

Ինչպե՞ս կարելի է մտնել Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության շենքով և չհուզվել: Քանի՞-քանի անուր աչքեր են նայում քեզ հուշաթանգարանի նկարներից: Իսկ նրանց կենսագրությունները... Դրանց հետ ծանոթանալուց հոգիդ հանգիստ չի գտնում. ինչպես էին կռվում տղաները եւ ինչ բախտի արժանացան...

Տպավորված են թանգարանում կատարված աշխատանքի ծավալով: Այդ ամենը Վերա Գրիգորյան

նի բովանդակ ջանքերի արդյունքն է: Կեցցես, մայր, քո արածն անգնահատելի է: Այն մի հայտնությունն է ներկայիս անհայտության մեջ, սփոփանք է և մխիթարանք պատերազմի յուրօրինակ գոհը դարձած մեր բոլոր տղաների հարազատների համար:

Խորին շնորհակալություն Ձեզ:

Ժ.Լազարյան
14.01.2011թ.

Տիկին Գրիգորյան

Թույլ տվեք իմ ու մարտական ընկերներիս կողմից հայտնել մեր խորին երախտագիտությունը Ձեր կատարած հայրենանվեր եւ այսքան լայնածավալ աշխատանքի համար: Ամենից առաջ նկատի ունեմ հուշաթանգարանը իր ողջ բովանդակությամբ: Դուք տղաների հիշատակի պահապան հրեշտակն եք: Սա լույս հավաքատեղի չէ՝ ապրող ու ապրեցնող ուժի աղբյուր է տարաբախտ զավակների վերադարձին՝ սպասող հարազատների համար... Սրտանց մաղթում եմ, որ մի օր բացվեն Ձեր եւ ձեր բախտակիցների տան դռները և դուք լսեք՝ «Մայրի՛կ, ես եմ...Եկել եմ» բառերը...

Աստված Ձեզ օգնական:

Խոր հարգանքով՝
Վարուժան Հովնանյան
բժիշկ, պահեստագործի կապիտան
30.01.2011թ.

Ստեփանակերտի Վիտալի Ջհանգիրյանի անվան համար 11 ավագ դպրոցի աշակերտական և ծնողական կոլեկտիվների անունից շնորհակալություն... այսպես պիտի ասեմ՝ հենց թանգարանին: Այսօրվա երեխան վաղվա տերն է այս երկրի: Նրանք պետք է ծանոթանան նրա պատմությանը, շարունակեն տղաների կիսատ թողած գործը, լինեն հայրենաշահ քաղաքացիներ, արժանի ժառանգորդները մեր եւ այս տղաների մղած պայքարի ու ձեռք բերած հաղթանակի:

Մենք հատուկ այստեղ եկանք Հայրենյաց պաշտպանի օրը՝ «տղաներին» ասելու՝ բարեւ, շնորհավորում ենք ձեր տոնը, պինդ կացեք, մեկ էլ տեսար ճանապարհի բացվեց դեպի հայրենիք...

***Բոլորի անունից՝
Է. Հայրապետյան
23.02.2011թ.***

Տիկին Գրիգորյանին

Թող անձամբ Ձեր եւ մյուսների սպասումները, հույսերը իրականանան այնպես, ինչպես ուզում ու սպասում է ողջ ժողովուրդը: Ձեզ ուժ ու կորով՝ գործը բարի ավարտին հասցնելու համար...

Այցելելով թանգարան, համոզվեցինք, որ անհայտ կորած ազատամարտիկների համար պատերազմը դեռ շարունակվում է:

Թող այլևս ոչ մի տեղ նման թանգարան ստեղծելու պատճառ չլինի:

***Երախտագիտորեն՝
Յաշա Խաչյան
25.02.2011թ.***

Թանգարան մտնելով համոզվեցի, որ սա մեր պատմությունն է, մեր կենսագրության մի մասը: Այս տղաների անհայտ ճակատագրերը մեզ՝ յուրաքանչյուրիս ստիպում են ոչ միայն մտածել, հուսալ եւ սպասել, այլև գործել միասնական, ազգովի, հավատով: Այո, իմ սերունդն է այս ամենի ժառանգորդը, եւ մենք պատրաստ ենք մեր գործը կատարել պատվով ու հպարտորեն:

***Լիլիթ Գասպարյան
Արցախի հանրային հեռուստառադիո
03.03.2011թ.***

Երբեմն ցավը վերածվում է հպարտության, հպարտություն՝ այն պարզ պատճառով, որ հայ ենք ծնվել, անցել ենք մաքառումների ու տառապանքի ճանապարհով, ընկել, բայց նորից ու նորից ոտքի կանգնել, զինվել մեր ապագայի համար, ապրել հանառ կամքով, պայքարել հանուն ազատության, ապագայի:

Մենք հպարտ ենք մեր հերոսական պատմությամբ և պայքարի ու պատերազմի բովով անցած բոլոր, զոհված, անհայտ կորած թե այժմ էլ շար-

քում գտնվող, տղաներով: Հավատում ենք մեծ նպատակի հաղթանակին՝ Ազատ-Անկախ-Միացյալ Հայաստանի կերտմանը:

**Հայ Հեղափոխական Ռաշնակցության
Արցախի երիտասարդական միություն
10.03.2011թ.**

Կուզենայինք, որ մեր այցը թանգարան ընկալվի որպես մեր խոր հարգանքի առհավատչյան՝ անհայտ կորած զինվոր հայրենակիցների նկատմամբ:

Հուզմունքը նկատելի է բոլորիս մեջ, պատասխանատվության զգացումը, կարծում ենք՝ նույնպես...

**Ն.Արզումանյան,
Ստեփանակերտի հ.3 դպրոցի
9-րդ «բ» դասարան
14.03.2011թ.**

Գիտեինք՝ իմացանք ավելին...

Անչափ տպավորիչ է...

Թող այլևս ոչ մի զինվոր, ազգի ոչ մի նվիրյալ անհայտ չկորչի, ոչ մի մայր վշտի արցունք չթափի:

Հավերժ փառք հայրենիքի զինվորյալներին:

**Քաշաթաղի շրջանի
Երիցվանքի միջնակարգ դպրոցի
տնօրեն Այվազյան
Եւ աշակերտներ
18.03.2011թ.**

Հպարտությամբ են նայում ձեր նկարներին, մեր ավագ եղբայրներ: Դուք շատ թանկ գնով պաշտպանեցիք մեր ազատությունը... Ես էլ եմ զինվոր ու պարտքս եմ կատարում Հայրենիքիս հանդեպ, բայց ես խաղաղ օրերի զինվոր եմ, եւ այդ խաղաղությունը դուք եք պարգեւել երկրին:

Շատ ծանր բեռ եք կրում հիմա ձեր ուսերին... Խոնարհվում եմ ձեր տառապանքի առջև:

**15937 զորամասի 2 գումարտակի
3-րդ վաշտի զինծառայող
Սեդրակ Գալստյան
25.03.2011թ.**

Մարդկային հոգու մեծագույն թշնամին անհայտությունն է եւ անտարբերությունը: Առաջինը վերաբերում է պատերազմում անհայտ կորած մեր ազատամարտիկ տղաներին, երկրորդը՝ նրանց, ում չի հուզում նրանց ճակատագիրը: Չեն կարծում, սակայն, թե մեր կողքին կան եւ նմանները... Եթե կան՝ Աստված կպատժի նրանց, չի կարելի մոռանալ, թե որտեղ են նրանք «կորել»: Կյանքով դեռ այնքա՛ն լեցուն, բայց կռվի դաշտում, հավանաբար, վիրավորվելուց անկարող դարձած եւ այդ վիճակում գերված մեր տղաները առ այսօր պատերազմի մեջ են՝ թշնամու հետ երես առ երես...

Այս թանգարան այցելելուս պատճառը նաեւ

մեջքից կորացած տարիքում թուրքի պատճառով անհայտության ճամփան բռնած հորս ցավն է, անարդարության դեմ ընդվզումս: Այս սրբատեղին, այո, նաեւ բողոքի, հոգու ճիչ արձակելու վայր է...

Նրա հիմնադրի, ստեղծողի կերպարը, հանձնս Վերա Գրիգորյանի, կասեի՝ բացառիկ է, որովհետեւ Անդրկովկասում, գուցե նաեւ ավելի լայն վերցրած, առաջինը նա ստեղծեց նման թանգարան: Նա ինքն էլ է անհայտ կորած ազատամարտիկի մայր... Ու եթե տարիներով սպասումը մեկին կարող է կոտրել, այդ եռանդաշատ ու քաջարի կնոջը դարձնում է ավելի տոկուն ու համառ, ավելի հետեւողական: Դրանում վաղուց են համոզվել նրա բախտակիցները, իշխանությունն ու ժողովուրդը: Արցախական ջիղը շատ խորն է նստած այդ կնոջ մեջ: Շնորհակալություն նրան...

Թող լույսի մի շող բացվի մեզ համար, վերջ դնի մեր տանջալից սպասումին:

Թող մարդիկ սպասեն տոնի, հարսանիքի, մրցույթի, պարի... ամեն լավ բանի՝ ոչ թե ցավ ու արցունքի, ոչ թե անհագուրդ կարոտի:

Ամեն, տեր Աստված:

Վերադարձրու հորս... եւ մյուս բոլորին:

Ռ. Պողոսյան
01.04.2011թ.

Այսօր մենք տեսանք թշնամու իսկական ձեռագիրը... Միայն թուրքը կարող է այդքան հիշաչար լինել: Ե՛րբ է կնքվել զինադադարը, իսկ մեր տղաները դեռ նրա բանտերում են: Հավանաբար, չեն կարողանում մարսել իրենց պարտությունը, ու լեղին թափում են ռազմագերիների վրա... բայց դրանով չեն կարող հասնել ոչնչի:

Թանգարանը շատ հետաքրքիր է, շատ տպավորիչ: Այն, իհարկե, նաեւ թախիժ բերեց մեր մատաղ սրտերին, ուստի ասում ենք՝ թող էլ երբեք պատերազմ չլինի, ոչ մի երեխա առանց ծնողի չմեծանա, աշխարհում լինի միայն խաղաղություն:

***Ավետարանոցի միջնակարգ դպրոցի
5-րդ դասարանի աշակերտուհի
Հրաչյա Միքայելյան
20.04.2011թ.***

Ստեփանակերտի հ.4 հիմնական դպրոցի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարանների աշակերտներս, ուսուցիչներ Բեգլարյանի, Վանյանի, Ղազարյանի, Գևորգյանի, Մուքանյանի հետ միասին, մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումների շրջանակում այցելեցինք այս թանգարանը եւ մեր տեսած ու լսածից ցնցված ենք:

Այս տղաները, անկախ իրենց հետագա ճակատագրից, կմնան մեր հիշողության մեջ:

21.04.2011թ.

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի շինարարական խմբի սաներիս հետ այցելեցի մեր զոհված և անհայտ կորած ազատամարտիկների թանգարանները:

Թե մեկուն ու թե մյուսում նայելով տղաների նկարներին՝ մի պահ վերհիշեցի այն մարտադաշտերը, որտեղ կռվել եմ ես, եւ աչքիս առաջ պատկերվեցին ինձ հետ միասին մարտնչածների դեմքերը: Նրանցից մի քանիսի նկարները փակցված են ահա այստեղ՝ Անհայտ կորած ազատամարտիկների թանգարանի պատերին...

Ա՛խ, տղաներ, տղաներ, ամենից դժվար բաժինը ձերն է եղել... Բայց մեր քսանամյա սպասումը թող մխիթարանք լինի ձեզ համար: Էլի սպասելու ենք, գուցե եւ մի օր կվերադառնաք...

Վարպետ Գրիգորյան

25.04.2011թ.

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի «Չամակարգիչների շահագործում», «Ավտոփականակագործ», «Խոհարար-հրուշակագործ», «Փայտամշակում և շինարարներ» 3-րդ

կուրսերի սաները, համապատասխանաբար՝ 2011թ. ապրիլի 26-ին, 27-ին եւ 28-ին, դասուէկ Զ. Արզումանյանի, կուրսերի վարպետներ Ա.Սաղաքեւանի, Ա. Ներսիսյանի եւ Բ. Բեգլարյանի գլխավորութեամբ, այցելեցին Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, որը մեծ տպավորութիւն թողեց բոլորի վրա:

Թող նման այցելութիւններն օրինակ ծառայեն: Ախր նրանք այսօրվա խաղաղ կյանքի համար են զրկվել սեփական անձ ու կյանքի ուրախութիւններից ու մինչեւ հիմա տանջվում են հակառակորդի բանտերում:

Մենք պարզապէս պարտավոր ենք հիշել նրանց եւ աղոթել նրանց ազատութեան համար:

26.04.2011թ.

Հուլիսը վերջինն է մեռնում... Այդ մի կտոր հուլիսն էլ մեր սրտերում վառ ենք պահում՝ ամեն վայրկյան՝ սպասելով մեր տղաների վերադարձին:

Խորին շնորհակալութիւն ենք հայտնում տիկին Գրիգորյանին՝ թանգարանի աշխատանքներն այսօրվա լավ վարելու համար:

**Կապան քաղաքի
Շնավոն Մովսիսյանի անվան
պատմութեան թանգարանի տնօրէն
Լ.Դավթեան եւ ամբողջ կուլեկտիվ
28.04.2011թ.**

Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի IV ա, IV բ, IV գ դասարանների աշակերտները մեզ հետ միասին եղան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների թանգարանում: Տպավորությունները հուզիչ են, պահը՝ խորհրդավոր:

Կանգ առ, ակնթարթ...Ստապահենք այս սիրելի դեմքերը, մեր հիշողության ծալքերում սրբորեն պահենք այս ազատամարտիկների անունները, գլուխ խոնարհենք նրանց համբերության առջև...

***Դասվարներ Ա.Անտոնյան, Վ.Բաբայան
Ն.Գարրիելյան***

Աշոտ Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի 3-րդ գ դասարանի աշակերտները և ես՝ նրանց դասուցի Նաիրա Թումանյանս, եղանք ԱԿԱՅՄ թանգարանում: Տպավորություններն ազդեցիկ էին: Աշակերտները մեծ հետաքրքրությամբ լսեցին թանգարանի տնօրեն Վ.Գրիգորյանին:

Այս հանդիպումը մի փաստացի դաստիարակչական դաս էր...Բոլորս գլուխ խոնարհեցինք անհայտ կորածների հիշատակի առջև:

02.05.2011թ.

Մայրաքաղաք Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի 3-րդ «բ» դասարանի կուլեկտիվով եւ ծնողական կոմիտեի լրիվ կազմով այցելեցինք թանգարան:

Հուզմունքից դժվարանում ենք անգամ արտահայտվել... Շատ խորը տպավորություններով ենք հեռանում: Շնորհակալություն թանգարանի տնօրենին՝ վիթխարածավալ ու քրտնաջան աշխատանքի համար:

Դասվար Ա.Պետրոսյան
07.05.2011թ.

Շուշիի Դ. Ղազարյանի անվան դպրոցի սաներս, մեր զինղեկի գլխավորությամբ այցելելով Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան՝ հանդգլեցինք, որ մեր այս ձեռնարկումով պարզապես պատվի ենք արժանացրել... մեզ: Շնորհակալ ենք ջերմ ընդունելության եւ հետաքրքիր զրույցի համար:

Սրահները շրջելով՝ շատ բան իմացանք մեր հերոս տղաների մասին ու շատ ցավեցինք, որ վերջում նրանց նման ծանր բախտ է վիճակվել... Շատ ենք ուզում, որ նրանց հաջողվի տուն վերադառնալ:

11.05.2011թ.

Թիվ 39138 գ/մզինծառայողներս եղանք ԱԿԱՅՍ թանգարանում: Տպավորությունները շատ ազդեցիկ էին:

Հատուկ շնորհակալություն այս ամենն ստեղծողին՝ ԱԿԱՅՍ նախագահ Վերա Գրիգորյանին:

Ա.Պետրոսյան
11.05.2011թ.

Մենք՝ 82296 գ/մ զինծառայողներս, այցելելով Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան՝ ուրախացանք այն առումով, որ կա նման ռազմահայրենասիրական եւ միաժամանակ, կարելի է ասել, մշակութային օջախ, որտեղ վառ է պահվում պատերազմի կործանարար հետեւանքներից մեկի՝ ռազմագերությանը զոհ դարձած մեր տղաների անուններն ու հիշատակը, նրանց վերադարձին սպասողների հույսը... Փա՛ռք Հայոց բանակին, հավերժ փառք հայրենիքի համար նահատակված և անհայտ կորած հայորդիներին:

Հ.Հայրունյան
16.05.2011թ.

Թիվ 38401 գ/մ անձնակազմի և հատկապես սերժանտական խորհրդի անունից մեծ երախտագի-

տություն ենք հայտնում անհայտ կորած ազատամարտիկների թանգարանի տնօրինությանը՝ հայրենանվեր գործունեության համար:

**1-ին ՊՇ սերժանտական խորհրդի
նախագահ
16.05.2011թ.**

Թիվ 3394 գ/մ սերժանտական խորհրդի և ողջ անձնակազմի անունից երախտագիտություն ենք հայտնում այս նվիրական գործի հեղինակներին ու կատարողներին:

Թանգարանները կարելուր օջախներ են մատաղ ու երիտասարդ սերունդների դաստիարակության համար:

**Մայրը Ս.Սարգսյան
16.05.2011թ.**

Սերժանտական նիստի ավարտից հետո թիվ 59703 գ/մ սերժանտները, թվով 22 հոգի, այցելեցին այս թանգարան և մեկ անգամ եւս տեսան այն պատկերը, որ մեզ կապում է մեր փառավոր անցյալի հետ:

**Կ.Սարգսյան
Թիվ 59703 գ/մ սերժանտական
խորհրդի նախագահ,
ավագ սերժանտ
16.05.2011թ.**

Առաջին անգամ մտած լինելով այս սրահը՝ անկեղծ եմ ասում, մարմնովս սարսուռ անցավ: Երկյուղածությամբ էի նայում այս տղաների նկարներին՝ պատկերացնելով անհայտության մեջ կրած նրանց չարչարանքներն... ու կարոտը տան հանդեպ:

Համբերություն մեր բոլոր սգվոր մայրերին, որոնք, իրենց մեծ վշտին չնայած՝ արժանավայել կեցվածքով մեզ վստահություն են ներշնչում հայի վաղվա օրվա հանդեպ: Այդպիսի մայրեր ունեցող ժողովուրդը չի պարտվի: Հարատել է լինելու մեր ընթացքը:

Եվ փառք՝ հավերժի ճամփորդ դարձած մեր բոլոր հայորդիներին:

***Փոխգնդապետ Բ.Մուրադյան
42009 զ/մ հրամանատարի տեղակալ***

Ամեն անգամ դպրոցական վերջին զանգի հանդիսությունից հետո մեր աշակերտներն այցելում են թանգարան՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու բոլոր նրանց, ովքեր չեն վերադարձել: Մենք այսօր էլ սպասում ենք նրանց հույսով ու հավատով: Սպասում ենք, որ քար աշխարհի սիրտը փափկի և ընթոստանա նրանց դեմ, ովքեր անգթորեն թաքցրած պահում են անմեղ մարդկանց: Ամմեղ՝ որովհետև նրանք ուրիշի ունեցվածքի վրա աչք չեն ունեցել, կռվել են իրենց բնօրրաննի ազա-

տության համար:

Ուզում ենք երախտագիտության խոսք ուղղել տիկին Վերա Գրիգորյանին: Նրա աշխատանքն անգնահատելի է: Այստեղ ամեն տարի թարմացվում -ավելացվում են ցուցանանուշները:

Խոնարհվում ենք Ձեր շնորքի եւ հույսի առջև:

Լյուդմիլա Մարյանյան
Ստեփանակերտի հ.12 հիմն.դպրոցի տնօրեն
25.05.2011թ.

Այսօր Սղնախի միջնակարգ դպրոցի 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտները, ԱրՊՀ «Պատմություն» բաժնի ուսանողուհի Գեղանուշ Արզումանյանը, դասղեկ Վ.Դավթյանի և զինղեկ Յ.Ավետիսյանի ուղեկցությամբ այցելեցին թանգարան: Տպավորությունները անչափ մեծ են, հսկայական աշխատանք է կատարված: Տիկին Գրիգորյանի ստեղծածը տպավորում է...

Տա Աստված, բոլոր անհայտ կորածները իրենց հարազատների գիրկը վերադառնան:

28.05.2011թ.

Այսօր փորձուսուցման դասն անցկացրի այստեղ...

Մենք պետք է կարողանանք աշխարհին ներկայացնել մեր պատմությունը, որը ձեռք է բերվել

այսպիսի տղաների արյամբ, սխրագործությամբ և ամենանվիրականով՝ կյանքով:

Շնորհակալություն Վերա Գրիգորյանին, որը հոգում պահելով իր վիշտը, կարողանում է արդյունավետ աշխատել՝ փաստաթղթերով պահել-պահպանել մեր անցյալն ու ներկան, դրանով իսկ ապահովելով և ապագան:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր կարողանում են թեկուզ մի փոքր աջակցել այս հասարակական կազմակերպությանը եւ հատկապես հուշաթանգարանին: Այս թանգարանի գոյությունը շատ կարելու է, ապացույց-կռվան է մեր ծեռքին՝ ամեն ինչ ժխտող մեր լկտի հակառակորդի դեմ: Հուշաթանգարանը պահել ու զարգացնել է պետք ամեն գնով:

Ես շատ հուզված եմ, որովհետեւ իմ պապիկն էլ է անհայտ կորած: Ամեն անգամ այստեղ գալուց նույն հույզերն ու ապրումներն են ունենում, ինչ այն ժամանակ՝ երբ ավելի մեծ հույսով էինք սպասում նրան՝ Ասծատուր Նալբանդյանին. իմ բարի, իմ սիրելի պապիկին, հարգված մարդուն, ընտանիքի բարեպաշտ գլխավորին: Հիմա էլ եմ աղոթում նրա վերադարձի համար:

***Հերսինե Սահակյան
Շուշիի հունանիտար քոլեջի դասախոս,
փորձուսուցման ղեկավար***

Մեր ծանրաբեռնված օրվա մեջ հոգեւոր սնունդ տվող այս գուցե տխուր, բայց տաքուկ ու գեղեցիկ օջախում անցկացրած թոպեներն իմ սիրտը լցրին այն անափ սիրով ու կարոտով, որպիսին կուզենային տալ այս անհայտ կորած տղաներն՝ իրենց վշտածեծ մայրերին...

Վստահ եմ. մեր՝ 2-րդ վաշտի համար այս օրը կդառնա ամենաանմոռաց դասը և քաջալերման թոպեն:

Միամորիկ կորցրած մայր, համարիր, որ ես քո որդին եմ...

***Լեյտենանտ Մարտիրոսյան
15.06.2011թ.***

Այսօր մեր օրվա մեջ մեծ հետաքրքրություն մտցրեց այն պահը, երբ այցելեցինք Անհայտ կորածների հուշաթանգարան: Մեր վաշտի անունից խորին շնորհակալություն եմ հայտնում կազմակերպիչներին: Թանգարանում մեր տեսածն ու լսածը տակնուվրա արեց մեր հոգին, նոր շունչ հաղորդեց հայրենասիրական ոգուն...

***1-ին ՄՅՎ-ի անձնակազմ
15.06.2011թ.***

Տպավորված ենք տեսածով:

Արցախյան գոյամարտին մասնակցած, զոհված թե անհայտ կորած, թե ընդհանրապես որևէ ներդրում ունեցած, մարդկանց մասին պատմող ցուցանմուշները, թանգարանում կատարված մեծա-

ծավալ աշխատանքը խորն ու արժանի գնահատականի են մղում մեզ...

Խոստանում ենք որպես արժանի հետնորդներ՝ պահպանել ու շարունակել սուրբ գործը:

**34-153 գ/մ, 6 ՀԳ 16 ՀՎ
Լեյտենանտ Վ.Գալստյան
18.06.2011թ.**

Ցանկանում են շնորհակալություն հայտնել Ձեզ, որ ջանք եռանդ չեք խնայել՝ վառ պահելու համար մեր հերոսների հիշատակը: Տեսնելով այս ամենը, մեր մեջ ավելի մեծ ցանկություն է առաջանում նմանվել այս քաջերին, որոնք իրենց ներդրում են ունեցել Հայոց բանակի կազմավորման գործում՝ կարևորություն չտալով այն բանին, թե ինչե՞ր կարող են իրենց հետ կատարվել դաժան մարտերում...

**34153 գ/մ 6 ՀԳՄ
սերժանտական անձնակազմից՝
սերժանտ Գ. Հարությունյան
20.06.2011թ.**

Ամեն անգամ, երբ հայտնվում են այս սուրբ վայրում, մարմնովս դող է անցնում: Միշտ հավատով ու կարոտով լեցուն են սպասում իմ հայրենիքի անհայտ կորած զավակներին, ովքեր իրենց ազգաընծա գործով ապահովել են մեր անկախու-

թյունն ու ազատությունը: Ես համոզված եմ՝ կգա
այդ բաղձալի օրը...

Արման Կարապետյան
«Երիտասարդության կամք» ԵՅԿ
03.07.2011թ.

Լցված եմ եւ միայն այս գլխավոր տողերն եմ ու-
զուն գրել. «Հավատում եմ, որ տղաները, որոնք
հիմա ամենաքիչը 40 տարեկան են...մի օր, այնու-
ամենայնիվ, տուն կդառնան»:

«Երիտասարդության կամք» ԵՅ Կ
Նախագահ Աննա Գրիգորյան
Երեւան
03.07.2011թ.

Թող ձեր չցամաքող աչքերի խորքերում պահ-
վող հույսն ու հավատը մի օր երջանկություն բե-
րեն ձեզ...

«Երիտասարդության կամք» ԵՅԿ
Չեղինե Մարգարյան
03.07.2011թ

Հույսը քանի չի մարել, դեռ ապրում ենք նրանք:
Դեռ կգան ու կլցնեն ձեր հոգին խի՛նդ ու ծիծաղով:

«Երիտասարդության կամք» ԵՅԿ
Անուշ Սմբատյան
03.07.2011թ.

Շնորհակալ եմ Աստծուն, որ Ձեզ նման հայ մայր ունենք, տիկին Վերա:

Պատիվ ու համբերություն՝ Ձեզ ու Ձեր բախտակիցներին:...

Երջո Իվանյան
03.07.2011թ.

Ես մտա հուշաթանգարան, այնտեղ տեսա իմ քրոջ նկարը... Աստված իմ, ինչպես դիմացա, ինքս էլ չգիտեմ: Նոր ցավով զգացի նրա կորուստը, բայց եւ թվաց, թե ինչ-որ լուր առա նրանից... Ոչ, նա անհայտ չպիտի մնա, հիշեցեք նրան՝ մ- ա-ր-ա-դ-ա-ց-ի Ալվինա Բաղդասարյանին, իմ հայրենասեր, իմ հերոս քրոջը...

Էլադա Բաղդասարյան
Ֆրանսիա Լիոն
06. 06.2011

Ասես թե եղեռնով ծնված և նրանից հրաշքով փրկված հայ ժողովուրդը արժանի չէ այսքան փորձությունների, այսպիսի փորձության...

Տա Աստված՝ հետայսու չլինեն զրկանք ու տառապանք, տեղահանություն ու պատերազմ: Հավերժ հիշատակ մեզնից դեռ բացակա մեր ազատամարտիկներին:

Սեդրակ Աշյան

Այցելեցի թանգարան: Պատերազմից չվիրա-
դարձողների, որք անյայտ կորած են և իրենց մոր
սրտին վիշտ ու ցավ տված: Նրանք տակավին
սպասում են իրենց զավակներուն վիրադարձին,
թող Աստուած մխիթարէ բոլոր մայրերը և հարսնե-
րը:

***ՀՕՄ-ի ընկերուհի
Սոնա Այթնիհան***

Մենք՝ ԱրՊՀ պատմության բաժնի 2-րդ կուրսի
ուսանողներս այցի եկանք Ստեփանակերտի ան-
հայտ կորած ազատամարտիկների հուշաթանգա-
րան: Ցավալի է տեսնել այսքան մարտիկների,
որոնք պայքարել են այսօրվա համար, բայց իրենք
մինչ այժմ չունեն տուն բերող ճանապարհ, ոչ էլ շի-
րիմ- գերեզման:

Շրջում են սրահում՝ առանց արցունքի չկարո-
ղանալով նայել նրանց: Ձեզ են հղում իմ խոսքը,
սիրելի մայրեր, դուք կորցրել եք ձեր որդիներին
ե...չեք կորցրել, որովհետեւ մենք մեր սրտերում
պահելու ենք անունն ու հիշատակը նրանց՝ եթե
մինչ վերջ այնպես էլ նրանց չհաջողվի վերադառ-
նալ:

***Տաթև Մարգարյան
25.07.2011թ.***

Հայաստանի «Երիտասարդական կամք» կազմակերպության կոլեկտիվը, Աննա Գրիգորյանի և Սրապիոն Գևորգյանի գլխավորությամբ, եղավ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում:

Այստեղից կարելի է դուրս գալ միայն իրեն պարտավորված զգալով այս նկարների տերերից յուրաքանչյուրի առջև ու երդվելով կառուցել նրանց երազած երկիրը:

***Վլադիմիր Դոլուխանյան
ԱրՊՀ պատմության բաժնի
2-րդ կուրսի ուսանող
26.07.2011թ.***

ԱՍՊԵՏՆԵՐ:

Աստված մեծ է: Վստահ ենք, որ դուք ապրում եք և շարունակում կռվել: Իսկ կռվողին հաղթել հնարավոր չէ:

***Գ.Վարդունյան
ազատամարտիկ***

Ես հավաստում եմ, որ որքան ժամանակ էլ անցել է, մենք միշտ սպասում ենք ու կսպասենք այս տղոց, որոնք իրենց կյանքը նվիրեցին մեզ համար. որպեսզի այսօր ազատ ապրինք մեծ հայրենիքում:

Կը խոստանանք միշտ յիշել ձեզ:

Մինչև ձեր վերադարձը, տղեք, մինչ հանդիպումը ձեզ հետ ազատ Արցախում:

***Արա Գասապեան
Լիբանան***

Անյայտ կորած ազատամարտիկներու մայրեր, պետք է ձեր ու մեր յամբերութիւնը չյատնի, պետք է յավիտենական յոյս ունենաք, որ մեր ազատամարտիկները պիտի վերադառնան:

Մեր սրտերը ձեզ հետ են:

Հպարտութիւն՝ որի անունն է Արցախ:

***Մինար Պոյաճեան
Լիբանան
20.08.2011թ.***

Մեծ հետաքրքրությամբ մուտք գործեցինք այսօր Անյայտ կորածներու թանգարանը: Ան շատ հարուստ ցուցանմուշներ ունի...ու մեծ պատմութիւն: Թեև շատ յուզվեցինք, մեզ ներշնչեցինք յոյս, տղաների նկարները դարձան մեզ համար ազատութեան աղբյուր, ազատ ու անկախ Ղարաբաղ կերտելու այդ սիրելիները մեզ համար դարձան մեր երկրորդ հայրեր ու մայրեր, որոնք իրենց զորավոր կամքով յաջողեցին ետ մղել թշնամին և մեզ ապահովել տուն ու կեանք: Շնորհակալու-

թյուն բոլոր անոնց, որ յաջողեցան այս թանգարանը կազմակերպել՝ մեզ ծանոթացնելու և կապը զօրացնելու մեր հերոս պապերու հետ:

Շնորհակալություն:

Լիբանանահայեր

Սիրելի Վերա, քույր ճան,

Աստված քեզի լույս և աղը ըրած է հոն քեզի, լուսաարև, ուր որ երթաս այս տխուր քաղաքեն և մայրերու մօտ աղըն ես, որ ուր ըլլաս համ կը բերես, որովհետև դուն Յիսուսը ունիս քու մեջը: Հազար փառք Աստծուն, որ դուն վերածնունդ ունեցար և հիմայ յույսդ է, միշտ վեր նայիր Աստծուն, աչքը քու վրադ է և բոլոր մայրերի, որ կորսուցած են իրենց զավակները:

Աստված իր օրհնությունները տեղացնի քու վրադ և սուրբ հոմիրով օժե՛ք քեզի և լեցնի իր հոմիրով:

Սիրով և աղօթքով քեզի համար: Եվ կը մաղթեմ, որ մյուս մայրերեն ալ Յիսուսը ճանաչեն և փրկության արժանի ըլլան և Աստուծոյ շնորքը միշտ վրաննիդ ըլլայ:

***Սիլվա Խոշաթեան
Պօստօնից /ԱՄՆ/
08.10.2011թ.***

Աստված բուժում է անցյալի վերքերը...

Կաշյան Եսթեր

Երևան

10.08.2011թ.

Մենք՝ Ստեփոս Թաղամասի երեխաներս եղանք թանգարանում եւ ամեն ինչ տեսնելով՝ մեր սրտում բարձր գնահատեցինք թանգարանն ստեղծած անձանց եւ հատկապես Վերա Գրիգորյանի թափած ջանքերը:

Մենք գտնում ենք, որ ինքներս էլ ունենք պարտականություն՝ կատարելու. դա մեր ընկած եւ անհայտ կորած զինվորների հիշատակը պահելն է, նրանք չպետք է մոռացվեն: Ցանկանում ենք, որ անհայտ կորածների տեղը պարզվի եւ հնարավորության ստեղծվի տուն վերադառնալու:

Ես էլ՝ Ստեփանակերտի թիվ 7 թաղկոմի նախագահ Էլմիրա Դաբադյանս, «ՍտեփԳԷՍ»-ի «հրեշտակների» հետ այցելելով այս հուշաթանգարանը, համոզվեցի, որ մեր մատաղ սերունդը հասկանում է ամեն ինչ եւ շահագրգռված է խաղաղությանը: Թող Աստված դա էլ տա, տղաների վերադարձն էլ:

23.08.2011թ.

Աստուած ուժն ու կարողութիւնը ձերին ավելացնի, Վերա Գրիգորիան: Հրաշք թանգարան ես ստեղծել: Էդ բոլոր կորածներին բարի վերադարձ:

Թող Աստուծո օրհնութիւնը միշտ լինի քեզ հետ և օրինակ դառնայ մեր ժողովուրդին՝ սիրել միմյանց, լինել կողք կողքի, հաղթել թշնամուն Աստուածային զորութիւնը:

Միհրան Արթինիան
24.08.2011թ.

Ստեփանակերտի ռազմամարզական վարժարանի նորակազմ 1-ին կուրսեցի սաների և մի խումբ սպաների հետ այցելեցինք Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան: Տիկին Վերա Գրիգորյանը մանրամասն ներկայացրեց թանգարանում տեղադրված նկարներն ու ցուցանմուշները:

Սաները մեծ հետաքրքրութեամբ ունկնդրեցին նրա պատմածը: Հուսով եմ, որ մեր հաջորդ այցելութիւնները առավել նպատակային կդառնան՝ հայրենասիրական դաստիարակութիւնը վարժարանում կազմակերպելու համար:

Փոխգնդապետ Վ.Հակոբյան եւ
Ռազմամարզականի վարժարանցիներ
24.08.2011

Անչափ յուզված և զգացած ենք Ձեր այսպիսի խնամքով պատրաստած թանագարանը այցելելով:

Գլուխ ենք խոնարհում մեր բոլոր զինվորների և ազգի համար զոհված եւ անյայտ կորած զինվորների առջև և մեր յարգանքի տուրքն ենք մատուցում:

***Թեհրանի Հայ կանանց
բարեգործական ընկերություն
02.09.2011թ.***

Անկեղծորեն մեծ հիացմունք ապրեցինք և հայրենասիրական ոգով տոգորվեցինք այս յուրահատուկ թանգարանում: Մեծ գանձարան է, որը հետազայում կհանդիսանա անգնահատելի ապացույց ու գրավական՝ Արցախ երկրի արդար ազատության, նրա կայացման ու ճանաչման համար:

***«Արցախի Հերոսամարտ-20»
նախաձեռնող խումբ,
Անահիտ Թովմասյան՝
«Շենացնենք մեր գյուղը»
Հ/Կ Կոտայք, Բելա Շոհբարյան՝
«Մարդու իրավունքների
միջազգային հանրություն» Հ/Կ՝ Երեւան
07.09.2011թ.***

Այս թանգարան մտնելուց բոլորիս մարմնով
ասես սարսուռ անցավ: Ասեմ՝ հիացմունք ապրե-
ցինք՝ բառը տեղին չէ... Չգիտենք էլ ինչպես ճիշտ
արտահայտվենք: Այստեղ շատ գործ է արված, ան-
հայտ կորած մեր զինվորների հայացքներն էլ կար-
ծես հարցնում են՝ հը, կյանքը ո՞նց է հայրենիքում,
մեզ չնոռանա՞ք... Չերկարացնենք, որ ավելի չխ-
ճողվեն մեր մտքերը: Միայն շեշտում ենք, որ տղա-
ների համար աղոթելու ենք: Նրանց առողջության
ու վերադարձի համար:

***Շուշիի Խ.Արսլյանի ամվան
հիմնական դպրոցի 9-րդ դասարան
08.09.2011թ.***

Երբ տեսնում ես հույս ու հավատքով նայող աչ-
քեր, հասկանում ես, որ ապրում ես մի երկրում,
որի յուրաքանչյուր թիզ հողը սուրբ է, քանզի ներկ-
ված է նահատակների եւ անհայտ կորած ազատա-
մարտիկների արյամբ...

Նրանք չխնայեցին ամենաթանկը՝ սեփական
կյանքը... Խոստանում են, որ ամեն-ամեն ինչ կա-
նենք, որ մեր երկիրը ճանաչվի համայն աշխար-
հում...

***ԱՆՍՏՈՐԱԳԻՐ
20.09.2011թ.***

Շատ-շատ կը մաղթինք ամենայն սրտով մեր
զինվորներուն վերադառնալը:

Մեր միտք ու շունչին մեջ կը մնան անոնց անհաշիվ տառապանքները...

Արամ Ենքիան

ԱՄՆ

26.09.2011թ.

Ես կը կարծիմ, թե ի մեջ աշխարհին մեզ համար թանկը մեր հայրենիքն է: Որ հայ չի սիրե յուր հայրենիքը, ան իսկի մարդ էլ չէ: Ես իմ հեռուեն շատ-շատ կը պաշտիմ մեր այս սուրբ հողը, որ Արցախ կոչվի... Ու եկա տեսա:

Այս թանգարանն էլ հպարտություն է, թեև տեսնելուց մեր սիրտ կցավի... Ես մեծ հոյս ունիմ, որ ժամանակով այս պզտիկ հողը ծաղկուն կդառնա՝ ճաննչված աշխարհեն ...

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

28.09.2011

Խոր յուզումով դիտեցին մեր սաները անյայտ կորածների թանգարանը, թող անոնք դրախտին ականատես ըլլալով ողջ հայութեան զօրակցությունն զգան եւ սերն Արցախի, ու հոգիները հանգստանան:

Մենք երբեք ձեզ չենք մոռնար, միշտ կը յիշինք:

**Ազգային ճեմարանի
շրջանավարտաց Միութիւնն**

Սուրիա, Հալեպ

29.09.2011թ.

Մեծ յուզմունքով վկայ ու ականատես իլանք այն բոլոր քաջորդիներին՝ հայ ազատամարտիկներու կյանքի ընթացքին և վերջին շրջանի այն բոլոր անցուդարձերին, որ արցունքները չկարողացանք զսպել:

Թող համբերությունը միշտ իրենցը լինի եւ իրենց ծնողներին ու զավակներին:

Լավ մնացեք:

*Նիկոլ Պատումեան
Չալեպ, Սուրիա
30.09.2011թ.*

Այսօր Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան թիվ 7 հիմնական դպրոցի 7-րդ «ա» դասարանի աշակերտները իրենց հարգանքի տուրքն են բերել «ԱՆհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն»։ Նրանք Արցախի փոքր դրոշներով ու ծաղիկներով դասղեկի ու պատմության ուսուցչուհու հետ եկան իրենց հայրենասիրական դասն անցկացնելու այստեղ՝ ասելու, որ չենք մոռացել ձեզ, սիրելի մեր անհայտ եղբայրներ: Ձեր գործն անմահ է: Դրա վառ ապացույցը փայլուն անցկացված միջոցառումներն էին՝ նվիրված ԼՂՀ անկախության 20-ամյակին:

Այդ անկախությունը ձեռք է բերվել հայորդիների արյան գնով: Եվ մեր պարտքն է մեր սաների ուղեղներին հասցնել այդ ամենը: Դրա համար անհ-

րաժեշտ է հաճախակի կազմակերպել նման այցեր: Այսօր երեխաները մեծ դաս քաղեցին: Նրանց հիշողության մեջ միշտ կմնա այս այցը, նրանք մոմ վառեցին և ուխտեցին՝ միշտ հիշել նրանց: Իմ անունից թանգարանին եմ հանձնում «Աշխարհի յոթ հրաշալիքներ» գիրքը՝ ի նշան երախտագիտության:

Թող ութերորդ հրաշալիք դառնա մեր անհայտ կորած զինվորների վերադարձը:

**7-րդ «ա» դասարանի դասղեկ՝ Լ.Բաբայան
01.10.2011թ.**

Մենք՝ Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցի ծնողներս անչափ երախտապարտ ենք այս ծանր գործը գլուխ բերողներին: Նաեւ մեր գլուխն ենք խոնարհում այս տղաների նկարների առջեւ...

**Կարինե Հովհաննիսյան
10.10.2011թ.**

Ինչպես մեր դպրոցականներն ասացին՝ ի՞նչ անհայտ կորած, անհայտս ո՞րն է, անհայտ կորածի շիրիմը ծովն է, ծովն անուն ունի՞... Մեր տղաները կան, եւ բոլորս, իրոք, մեծ կարոտով ու հույսով ենք սպասում նրանց:

Վերա Գրիգորյանի կատարած գործին ի պատասխան՝ մենք էլ պարտավորվում ենք յուրաքանչյուր տարի ԱԿԱՀՄ թանգարանի ստեղծման օրը ներկա-

յանալ ու երդման արարողություն կրկնել այստեղ՝
հուշաթանգարանում:

Իրինա Ղարախանյան
Ստեփանակերտի համար 12 հիմնական դպրոց

Առաջին անգամ լինելով ԱԿԱՅՍ հուշաթանգարանում՝ անչափ տպավորված եմ: Այս թանգարանը մեծ պատմություն է մեր ազգի համար:

Կարինե Հովհանիսյան
11-րդ դպրոցի խմբակավար
10.10.2011թ.

Սրտանց կը մաղթեմ մեր խիզախ Արցախին երկար ու բարգավաճ օրեր, յարատև անկախութիւն և անյայտ կորած ազատամարտիկներու մայրերուն հավատք և յոյս:

Լիբանանեն այցելու՝
Րաֆֆի Եսայեան
19.10.2011թ.

Ցավը մեծ է, բայց հույսը՝ նույնպես: ԱԿԱՅՍ կատարած գործը, Վերա Գրիգորյանի ղեկավարությամբ, հսկայական է: Համբերություն Ձեզ, սիրելի հարազատներ:

Եվ շնորհակալություն՝ ձեր հոգեկան ու բարոյական արիության համար:

Վ.Թովմասյան
19.10.2011թ.

Մարտակերտի շրջանի Նոր Սեյսուլանի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտները իմ` դասղեկիս գլխավորությամբ եղան ԱԿԱՅՍ-ում, եւ այս այցելությունը, տեսա, շատ բարձրացրեց նրանց հայրենասիրական ոգին...

Հուսով եմք, որ հաջորդ անգամ այստեղ լինելուց կլսենք, թե...անհայտ կորածների թիվը մեկով պակասել է, այսինքն` հայ ռազմագերին տուն է վերադարձել: Օ՛, մեր թշնամի... Որքա՛ն ես դաժան եւ անմարդկային:

Լենա Ջավադյան
26.10.2011թ.

Նրանք բոլորը մեզ հետ են, նույն շարքում կանգնած` ավելի հզոր, ավելի ազդու ու խոր ոգեղեն:

Մենք եղբայրներ ենք...Նրանք` ավագը, իսկ մենք` կրտսերը:

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ
03.11.2011թ.

Մենք էլ ենք ձեզ հետ ցավում... ու սպասում, որ մի օր վառվի Դարձի լույս կանթեղ...Այո, ձեզ հետ ենք:

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ
03.11.2011թ.

Մենք` ԿՊՇ-ի սերժանտների խորհրդի անդամներս, երախտապարտ ենք նման անմահ գործը

իրականացնողներին: Գլուխ ենք խոնարհում բոլոր աննահացածների առաջ:

***Թիվ 38862 զ/մ
03.11.2011թ.***

39138 զ/մ սերժանտական խորհրդի անդամներով այցելելով անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել նախածեռնողներին՝ նման թանգարան ստեղծելու համար:

03.11.2011թ.

ՊԲ 36534 զ/մ սերժանտական խորհուրդը 03.11.2011թ. այցելեց անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան: Առաջին հայացքից մեզ պարուրեց վստահության զգացողությունը, համակեց այնպիսի զգացողություն, որը աշխարհում գուցե թե քիչ մարդկանց հետ է պատահում: Մենք տեսանք, որ հայը իր զգացմունքը և երևակայությունը արժեւոր գործի վերածել գիտի:

***Սերժանտ Արտակ Մնացականյան
03.11.2011թ.***

Այցելելով ձեր հուշաթանգարան, տեսնելով, թե ինչ աշխատանք են տարել ձեր հավատն անմար պահելու համար, շատ հպարտացա, որ հայ են: Շնորհակալ են բոլորին՝ այս աշխատանքը կատա-

րելու համար:

Փառք ու պատիվ ձեզ, հայ զինվորներ: Թող վերջ գա ձեր չարչարանքներին, թող բարով տուն վերադառնաք...

**Ավագ սերժանթ Կ.Չիլինգարյան
թիվ 49971 զ/մ
03.11.2011թ.**

Մենք գլուխ ենք խոնարհում բոլոր անմահացածների առջեւ և շնորհակալություն ենք հայտնում թանգարանը ստեղծողներին:

**Ասկերանի շրջանի Շոշ գյուղի դպրոց
12.11.2011թ.**

Թիվ 46492 զ/մ առաջին գումարտակի զինճառայողներս այցելելով թանգարան՝ մեծ տպավորություններ ստացանք ու տեղեկություններ պատերազմական իրադարձություններից: Ասես ապրեցինք այդ պահերը...

Այսօրվա մեր խաղաղ և անկախ հայրենիքի համար պարտական ենք Ազատամարտի բոլոր զինվորներին, այդ թվում՝ եւ անհայտ կորած ազատամարտիկներին:

**Է.Ջաբարյան
22.11.2011թ.**

Ես, լինելով արցախցի, մտնելով ԱԿԱՅՄ՝ եւ տխրում եմ, եւ ոգևորվում: Ես չեմ կասկածում, որ տղաներից նրանք, ովքեր դեռ կենդանի են, իրենց պահում են արժանապատվորեն: Թշնամին իսկույն կօգտագործեր նրանց թուլությունը...

Այս թանգարանի օդը պարունակում է հերոսության վկայություն: Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր ստեղծել և զարգացնում են այս յուրատիպորեն պատմական վայրը: Առանց պատմության չկա նաեւ ժողովուրդ... Մեր ժողովուրդը եղել է, կա ու կլինի:

Լեոնիդ Չայրապետյան
30.11.2011թ.

Այս թանգարանը յուրաքանչյուրիս համար մեկն է այն գողտրիկ ու հանգստավետ անկյուններից /ցավի եւ ափսոսանքի զգացմանը չնայած/, որտեղ ուզում ես մտածել եւ հիշել մեր ազգային ոգին անմար պահող զավակներին: Խոսքեր չկան արտահայտելու մեր մեջ եռացող զայրույթն ու հպարտությունը:

Բոլորս պետք է գիտակցենք, որ այսօրվա անկախության եւ խաղաղ օրվա հնարավորությունը ստեղծել են մեր բանակայինները՝ պատերազմի բովում: Այս տղաներն էլ էին այնտեղ...

Տաթև Բաղդյան
31.11.2011թ.

Ստեղծելով այս հուշաթանգարանը՝ ԱԿԱՅՄ-ը Վերա Գրիգորյանի ղեկավարությամբ, շնորհակալ և դրվատանքի արժանի գործ է կատարել: Թանգարանը մեզ համար հույսի, լույսի և սպասումների վերջին հանգրվանն է, մեր միակ մխիթարանքը: Շնորհակալություն այն բոլոր հիմնարկների, ձեռնարկությունների, կառույցների ղեկավարներին, նաև անհատ մարդկանց, ովքեր այս կամ այն կերպ՝ բարոյապես, նյութապես, ֆինանսապես աջակցել, օգնել են թանգարանի կայացմանը:

***Ռոբերտ Բաբայան,
պատմաբան,
անհայտ կորած ազատամարտիկի եղբայր***

34153 զ/մ 6 հզմ-ի զինծառայողներով/94 հոգի/ երասխտապարտ ենք թանգարանին կյանք տվողներին:

Երիտասարդ զինվորները մեծ դաս ստացան այստեղ լինելուց: Ճիշտ է, ցավալի է գիտակցել, որ այսքան երիտասարդ մարդիկ ազատությունից զրկված՝ հակառակորդի ձեռքին են... բայց դե ի՞նչ արած, դա մեր կյանքն էր եւ է, մեր պատմության մի տխուր էջը...

Հույս պահենք, որ կերեւան տղերքը:

***Կարեն Բաբայան
29.12.2011թ.***

Տպավորություններս աննկարագրելի են...Ծանոթանալ այսքան հերոս մարդկանց կյանքի պատմությանը, նրանց հերոսություններին եւ վերջում բաժին ընկած ծանր բախտին ու չհուզվել՝ անկարելի է:

Ե՛րբ կլինի՝ նրանցից գոնե մեկը վերադառնա տուն, որ հույսի եւ համբերության նոր լիցք հաղորդի մնացյալներին. եւ հեռվում տառապողներին, եւ այստեղ նրանց սպասողներին:

Եվ դեռ թշնամին նորի՞ց է խոսում պատերազմ սկսելու մասին...Թող միայն փորձի, մռութը կջարդենք շատ-շատ ավելի՝ քան անցած պատերազմում... Տոկացեք, տղերք, մեկ-մեկ լինում են նաեւ հրաշքներ...

Դուք էլ այս օջախը միշտ վառ պահեցեք, սիրելի մայրեր: Բոլորս աղոթում ենք ձեր տղաների վերադարձի համար:

Կարապետ Վանեսյան
29.12.2011թ.

ԵՎ այսպես՝ ինչպես տեսնում ես, ընթերցող, կյանքը շարունակվում է, եւ բոլորիս հետ մնում՝ ու նույնպես շարունակվում է ՄՊԱՍՈՒՄԸ:

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ-2 (2009-2012թթ.)

Խմբագիր՝	Նարինե Աբրահամյան
Սրբագրիչ՝	Իրենա Մարտիրոսյան
Համակարգչային շարվածքը՝	Գայանե Խաչատրյանի Լուսինե Բաղդասարյանի
Էջադրումը՝	Լուսինե Բաղդասարյանի
Կազմի ծեւավորումը՝	Անյուտա Հակոբյանի
Լուսանկարները՝	«Գայան» ՍՊԸ-ի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16,
ծավալը՝ 12.5 տպ. մանուլ, 32 էջ ներդիր: Տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում:
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ 2012